

սե. Աբուշահյան

Խորհրդային  
Կերպարվոր  
«ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-ի  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ  
ՇՈՒՐՑԸ

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒՔ.

АШ. АБРАМЯН  
КАНДИДАТ ИСТОРИЧЕСКИХ НАУК

К ВОПРОСУ ОБ АВТОРСТВЕ  
„ГЕОГРАФИИ“,  
ПРИПИСЫВАЕМОЙ МОВСЕСУ ХОРЕНАЦИ

9 (42.925)

Ա-16

ԱՇ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՆԻԱԿՈՒ

ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ  
“ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ”-Ի  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՋԸ

1403  
9044

(1940)  
9(42.925) [Ա. Աբրահամյան]



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ ժողովրդի պատմության վնչ մի հարց այնքան ջանք ու  
եներգիա չի խլել բանասիրությունից, վերջան Սորենացու  
ժամանակի հարցը: Նրանով զբաղվել են հայագիտության այն-  
պիսի խոշոր գիտնականներ, ինչպիսին՝ ակադեմիկ Ն. Յա. Ման  
և, Նորայր Բյուզանդը, Գ. Տ.-Մկրտչյանը, Ս. Մալխասյանը,  
ակադեմիկ Հ. Մանանդյանը, պրոֆ. Սալաթյանը և ուրիշները:  
Սորենացիագիտության վերաբերյալ ստեղծված գրականությունը՝  
հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով՝  
ամբողջ գրադարաններ կարող ե կազմել: Գիտնականների՝ նման  
հետաքրքրությունը դեպի Սորենացին ինքնին հասկանալի յե—  
հնազույն մի աղբյուր, վորն առաջին անգամ փորձ և անում բա-  
նավոր և գրավոր տեղեկությունների հիման վրա կազմել հայ ժո-  
ղովրդի պատմությունը՝ հաղորդելով արժեքավոր և որիզինալ  
տեղեկություններ, ինչպես հայ ժողովրդի, այնպես և հարե-  
վան ժողովուրդների պատմության համար, բնական և, չեր կարող  
գիտնականների ուշադրության առարկա չգտանալ: Հին շրջանով  
զբաղվող մասնագետները չեյին կարող չզբաղվել այդ հեղինակի  
ժամանակի պարզաբանման հարցով: Սորենացու հաղորդած պատ-  
մական տեղեկությունները, հասկանալի յե, իրենց համապատաս-  
խան նշանակությունը կարող են ստանալ և նպատակին կարող  
են ծառայել միայն այն դեպքում, յերբ վերջնականապես վորոշ-  
վի իրեն, Սորենացու ժամանակը:

Սորենացու զբաղվող բանասերները կատարել են մեծ և  
անգնահատելի աշխատանք: Նրանց հաջողվել է լուծել Սորենացու  
աշխատությունների հետ կապված վիճելի շատ հարցեր՝ նրա ող-  
տագործած աղբյուրները, նրան վերագրվող մի շարք աշխատու-  
թյունների հարադատության հարցը, նրա աշխատություններում  
յեղած ընդմիջարկություններն ու աղավաղումները և այլն: Սա-

~~USPH 4.110 Է  
1952 թ.~~

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ԲԻԲԼԻՈՏԵԿԻ  
Ին-տելեֆոնայն յառն:~~

5117

~~97881~~

կայն հիմնական հարցը, Պորենացու ժամանակի հարցը, մեր կարծիքով, զեռես մնացել է չլուծված:

Ծանոթանալով Պորենացու ժամանակի վերաբերյալ յեղած մի շարք մենագրությունների հետ և կատարելով ձեռագրական վորոշ համեմատություններ, մենք յեկանք այն համոզման, վոր Պորենացու ժամանակի հարցի պարզարանման խնդրում դրական արդյունքներ կարելի չի հասնել «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրության ժամանակ մեզ համար պարզ դարձավ, վոր ընդորինակող գրիչները հին հայկական աշխատություններում, մասնավորապես «Աշխարհացոյց»-ում, կատարել են զգալի փոփոխություններ, վորոշ դեպքերում անգամ խմբագրել են նրանք. այժմ, մեզ թվում է, հին հայկական տեքստի վերլուծման հիման վրա, նրա հեղինակը հնարավոր կլինի պարզել միայն այն դեպքում, յերբ վերջնականապես սվլյալ տեքստը կազատվի նորամուծություններից:

Մեր առաջադրած հարցի՝ Պորենացու ժամանակի առեղծվածի ուսումնասիրությունը, մենք սկսեցինք Պորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ից: Այդ հարցը մեր ուսումնասիրության յեղակետը դարձավ այն պատճառով, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստը՝ Պորենացու ժամանակը վորոշելու հարցում վորոշ բանասերների մոտ կարևոր կովաններից մեկն է հանդիսացել: Յերբ կազմեցինք ՀՊՍՀ մատենադարանի «Աշխարհացոյց»-ների բիրլիոգրաֆիան, համեմատեցինք նրանց տեքստերն ու ծանոթացանք կողմնակի այլ նյութերի հետ, յեկանք այն համոզման, վոր «Աշխարհացոյց»-ը վնչ թե Պորենացունն է, այլ VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացուն, ինչպես շատ ճիշտ, իր ժամանակին, յենթադրել է պրոֆ. Բ. Պատկանյանը և նրան հետևող այլ գիտնականներ: Ուսումնասիրության ընթացքում, այնուհետև, մեզ համար պարզ դարձավ, վոր Շիրակացին ծանոթ է յեղել Պորենացու պատմության հետ և վորոշ տեղերում ոգտվել է նրանից:

Ուսումնասիրության այլ թեմայի նյութ դարձնելով իրեն, Պորենացու ժամանակը, մենք մեր ներկա ուսումնասիրության մեջ աշխատել ենք պարզել «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ ազատելով Պորենացու ժամանակը «Աշխարհացոյց»-ի հիման վրա վորոշելու փորձերից: Առաջադրված խնդիրը լուծելու համար կազմել ենք մատենադարանի ձեռագրերում յեղած «Աշխարհացոյց»-ների բիր-

լիոգրաֆիան, դասավորել ենք դրանք ժամանակագրական կարգով, հնարավորության սահմաններում ուղղել ենք «Աշխարհացոյց»-ում նկատված աղավաղումները, աշխատել ենք ազատել տեքստն ընդմիջարկություններից, վերջապես, փորձել ենք տեքստի վերլուծման հիման վրա վորոշել «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը, հեղինակը և նրա ոգտագործած աղբյուրները:

Ներկա ուսումնասիրության մեջ, վորոշ տեղերում, մենք գուրս ենք յեկել առաջադրած թեմայի շրջանակից և կանգ ենք առել աղբյուրագիտական այլ հարցերի վրա: Դա յեղել է վնչ թե աննպատակ մի ցանկություն, այլ թեմայում շոշափված հիմնական հարցերը կողմնակի փաստերով ամրացնելու նպատակով միայն:

Ուսումնասիրության ընթացքում, հնարավորության սահմաններում, մենք աշխատել ենք խույս տալ պատմական դիտության մեջ լուծված հարցերի քննությունից: Մեր նպատակն է յեղել, վորքան հնարավոր է, բերել փաստական նոր նյութեր և շոշափել գլխավորապես այն հարցերը, վորոնք, մեր կարծիքով, լուծված չեն: Փաստական նոր նյութի հիման վրա յե գլխավորապես, վոր մենք հանել ենք այս կամ այն յեզրակացությունը կամ թե ամրացրել առանձին բանասերների մեզնից առաջ հայտնած կարծիքները:

Մեր ներկա աշխատության մեջ չնայած մենք հնարավորության սահմաններում ոգտագործել ենք ՀՊՍՀ մատենադարանի հայտնի գրեթե բոլոր «Աշխարհացոյց»-ները, սակայն կան մի շարք մատենադարաններ, վորոնք մատչելի չեն յեղել մեզ, ուստի և մենք ներկա աշխատության վրա նայում ենք վորպես եսքիզի (նախնական սովերագրի)՝ հետագայում «Աշխարհացոյց»-ի ավելի ընդարձակ ուսումնասիրության համար և նախնական մի քայլ՝ Պորենացու ժամանակի առեղծվածի լուծման ճանապարհում:

ԱՇ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Հին հայկական մատենագրերից «Աշխարհացոյց»-ները, համեմատաբար, ամենից շատ փոփոխութեան յենթարկված տեքստերն են: Չկա գրեթե «Աշխարհացոյց»-ի այնպես մի ձևագիր որինակ, վորը բառացի նմանվի մյուսին: Նրանք իրարից տարբերվում են կամ կառուցվածքով, կամ բովանդակութեամբ և կամ գրչական ընթերցումով: Պատճառը միանգամայն հասկանալի յե— ընդորինակող գրիչները, յերբեմն լավ չհասկանալով այս կամ այն իրենց անձանոթ հատուկ անունը, աղավաղել են, յերբեմն՝ ցանկանալով իրենց ժամանակի նոր անունով մեկնել աշխարհագրական հին անունը, ավելացրել են իրենց ժամանակի անունները, յերբեմն՝ ժամանակակից պահանջները համաձայն նպատակադրված ձևով ընդարձակել կամ կրճատել են «Աշխարհացոյց»-ի տեքստի այս կամ այն հատվածը և այլն: Բոլոր դեպքերումն էլ, պարզ և, տուժել և «Աշխարհացոյց»-ի ավտոգրաֆ տեքստը և հեռացել իր նախնական բնագրից:

Սորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած այդ աղավաղումներն վրա, դժբախտաբար, չհաշված շատ քիչ բացառութեաններ, հարկ յեղած չափով կանգ չեն առել հայագիտութեամբ գրադվող մեր բանասերներից շատերը: Նրանցից վոմանք հաշվի չեն առել այն կարևոր հանգամանքը, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստի քննութեան հիման վրա հնարավոր կլինի պարզել նրա հեղինակն ու գրելու ժամանակը միայն այն դեպքում, յեթե «Աշխարհացոյց»-ի տեքստը կազատվի ընդմիջարկութեաններից և կուղղվեն նրա մեջ յեղած աղավաղումները: Այս հանգամանքն անհրաժեշտ և շեշտել, վորովհետև այժմ, յերբ հարկ և լինում բացատրել այս կամ այն խոշոր բանասերի՝ «Աշխարհացոյց»-ի հարցում թույլ տված սխալի պատճառը, պարզվում և, վոր մեծ մասամբ յեղել և մատենագրաբանների

ձեռագրերը չոգտագործելու պատճառով: Բանասերների մեծ մասն իրենց ուսումնասիրությունների ժամանակ գերազանցապես ոգտագործել են միայն «Աշխարհացոյց»-ի հրատարակված որինակները, զանց առնելով ձեռագրերը, հատկապես ՀՊՄՀ մատենադարանի «Աշխարհացոյց»-ի հնագույն վորոշ ձեռագրեր, վորոնք մեծ չափով ոգնում են հարցի պարզաբանմանը: Մատենադարանը, մինչև վերջերս, չի ունեցել ձեռագրերի անվանական բերլիոգրաֆիա և հնարավորություն չի ստեղծել նրանց ուսումնասիրողների համար: Այնպիսի խոշոր մասնագետ, ինչպիսին ակադեմիկ Հ. Մանանդյանն է, վորն զբաղվել է Պորենացու առեղծվածի լուծումով, այդ նույն պատճառով հնարավորություն չի ունեցել ծանոթանալ ՀՊՄՀ մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների հետ: Որինակ՝ Ալիշանի «Շիրակ» աշխատության մեջ հայտնած այն տեղեկության առթիվ, վոր կան մատենագրական վորոշ տեղեկություններ, վորոնք ապացուցում են «Մղոնաչափք»-ի և «Աշխարհացոյց»-ի կապը, ակադեմիկ Մանանդյանը զժվարանում է հավատալ զրան և իրավացիորեն պահանջում է ապացուցել նոր փաստերով (տես «Պորենացու առեղծվածի լուծումը», էջ 89), այժմ արդեն պարզվում է, վոր ՀՊՄՀ Մատենադարանում հայտնի 36 «Աշխարհացոյց» ձեռագրերի մեծ մասը պահել են և ունեն մատենագրական այդ տեղեկությունը: Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրություններից ներկայումս պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստում ավելցած հենց այդ աղավաղված նախադասություններն են հիմք ծառայել հայ ու յեկրոպացի վորոշ բանասերների՝ ամեն տեսակ հնարավոր յինթադրություններ հանելու համար, վորոնք, վերջին հաշվով, վնջ թե նպաստել են վիճելի հարցի լուծմանը, այլ ավելի յեն խճճել այն:

Պորենացու «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների գործն այսուհետև գյուրացնելու համար, անհրաժեշտ ենք համարում տալ այստեղ մեր Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների բերլիոգրաֆիան՝ դասավորված ժամանակագրական կարգով:

1. Մաղկաքաղ հատված «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Գրված է 12-րդ դարում Սարգիս զրչի կողմից: Չունի վերնագիր: Տեղավորված է պատմագիտական բնույթ ունեցող նյութերի

ժողովածվի մեջ: Նյութը—թուղթ է: Գրված է միասյուն, բոլոր գրով (տես թիվ 4166, թերթ 165 ր.):

2. «Աշխարհագիր»: Գրված է 13-րդ դարի վերջերում կամ 14-րդ դարի սկզբներում: Յինթադրվում է՝ Հեթում թագավորի յեղբոր ավտոգրաֆը լինի: «Աշխարհացոյց»-ի տեքստը լրիվ է, սակայն առաջաբանը տեղավորված է վերջաբանի փոխարեն: Սկսվում է «Աշխարհագիր հատուած ք»-ից: Չունի հեղինակի անունը: Գրված է մագաղաթի վրա, միասյուն, բոլոր գրով: Վերջում չունի «Մղոնաչափք»-ը (տես թիվ 1898, թերթ 256 ր—269 ր): Այս «Աշխարհացոյց»-ի զբնական տարբերությունները հրատարակվել են «Zeitschrift für armenische Philologie»-ի մեջ:

3. «Մուսէսի հոքեմացույ Աշխարհացոյց»: Գրված է 14-րդ դարում Պետրոս զրչի կողմից: Աշխարհագրությունը սկզբնական ընդորինակության ժամանակ չի ունեցել վերնագիր, սակայն, հետագայում, ուշ շրջանի զրչի կողմից (հավանական է 19-րդ դարում) ավելացվել է: Գրված է թղթի վրա, յերկսյուն, բոլոր գրով: Գրիչը զբաղեա անձնավորություն է: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը և հեղինակի ընծայական վերջաբանը (տես թիվ 1267, թերթ 355 ա—363 ր):

4. «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ»: Գրված է 14-րդ դարում Վարդանի վորգի Դավթի կողմից: «Աշխարհացոյց»-ի այս տեքստը ՀՊՄՀ մատենադարանի լավագույն որինակներից է: Գրչական տարբերություններից յերևում է, վոր արտագրված է յերկաթագիր հին որինակներից («այլ» բառը գրված է «այդ» ձևով, «հյուսիսը»՝ «հիւսիւս» և այլն): Վերջում ունի «Մղոնաչափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի վերջաբանը: Գրված է միասյուն, բոլոր գրով: Նյութը—թուղթ է (տես թիվ 582, թերթ 165 ա—183 ր):

5. «Տեսալի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված է 1589 թվին: Գրիչն անհայտ է: «Աշխարհացոյց»-ի տեքստը լրիվ չի: Սկսվում է «Ասիա»-յի հատվածի «Ասորիք»-ից ու վերջանում Չինաստանի նկարագրությամբ: Թերթ 88 ա-ում, — «Իշխանութիւն աշխարհին մեծաց Հայոց» հատվածում ավելացված է Կիլիկիայի աշխարհագրությունը՝ տնտեսության մանրամասն նկարագրությամբ: «Աշխարհացոյց»-ը գրված է թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 1770, թերթ 86 ր—116 ր):

6. «Տեսակի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված է 1594 թվին, Ամիրզում, Ստեփաննոս գրչի կողմից: Իր բովանդակությամբ համապատասխանում է նախորդ «Աշխարհացոյց»-ի բովանդակութանը: Գրված է թղթի վրա, յերկայուն, բոլոր գրով (տես թիվ 1518, թերթ 163 ա—164 բ):

7. [Աշխարհացոյց]: Վերնագրի տեղը բաց է մնացած: Գրված է 1597 թվին Ղազար Բաբերդցու կողմից, հավանական է Բաբերդում: Տեքստն սկսվում է անմիջապես առաջարանից («Յազագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրէք գտանեմք ոճով ասացեալ...»), ընդգծելով առաջին յերկու բառերը վերապես վերնագիր: Վերջում ունի «Մղոնաչափք»-ն ու հեղինակի վերջաբանը: Իր բովանդակությամբ համապատասխանում է 14-րդ դարում գրված Պետրոս գրչի «Աշխարհացոյց»-ին: Գրված է թղթի վրա, յերկայուն, նոսր գրով (տես թիվ 1686, թերթ 95 ա—104 ա):

8. «Վասն աշխարհագրութեան»: Գրված է 16-րդ դարում Գրիգորիս գրչի կողմից: Չունի հեղինակի անունը: Տեքստն ընդհատվում է «Յեվրոպա»-յի աշխարհագրութեան վերջում: Գրված է թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 2613, թերթ 255 բ—260 ա):

9. «Մովսէսի Խորենացոյց»: Գրված է 1600 թվին Հին Ջուզայում, Յերեմիա գրչի կողմից: Վերնագիր չունի: Ամենահին ձեռագիրն է, ուր «Աշխարհացոյց»-ի վերնագրում, ընդորինակող գրչի կողմից, հանդիպում ենք հիշատակված Խորենացու անվանը: Շարունակության մեջ ունի «Մղոնաչափք»-ը և հեղինակի ընծայական վերջաբանը: Գրված է թղթի վրա, յերկայուն, նոսր գրով (տես թիվ 2019 (2049), թերթ 257 ա—291 ա):

10. «Վասն աշխարհագրութեան»: Գրված է 1600 թվին Խիզանում, Ավետիս Թաղոնցու կողմից: Չունի հեղինակի անունը: Տեքստը լրիվ չի—հասցված է մինչև Յեվրոպայի աշխարհամասի Թրակացոց աշխարհի սկիզբը և Սարմատացոց աշխարհի վերջը: Գրված է թղթի վրա, յերկայուն, նոսր գրով (տես թիվ 1903, թերթ 275 ա—280 ա):

11. «Յազագս աշխարհագրութեան ստոյգ և նշմարիտ Մովսէսի Խորենացոյց»: Գրված է 1608 թվին, Պոլսում, Պետրոս գրչի կողմից: Իր բովանդակությամբ համապատասխանում է 14-րդ

դարում գրված Դավիթ գրչի որինակին՝ խմբագրական վորոշ փոփոխութուններով: Վերնագրում ավելացված է Մովսես Խորենացու անունը: Տեքստի վորոշ տեղերում մտել են ընդմիջարկութուններ: «Աշխարհացոյց»-ը վերջում ունի «Մղոնաչափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի վերջաբանը: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 5613, թերթ 277 ա—299 ա):

12. «Յազագս աշխարհագրութեան»: Գրված է 1625 թվին Մազաթիա արեղայի կողմից: Տեքստը թերի յե—վերջանում է վենետիկյան հրատարակության եջ 586 տող 21-ով («Երրորդն ընդ Աղեքսանդրիա, կիսածամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենեքեանքն չորրորդն ընդ Ռոդոս, որ է միջին նահանգացըն...»): Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 2292, թերթ 91 ա—92 բ):

13. «Յազագս աշխարհագրութեան Մովսէսի Խորենացոյց»: Գրված է 1624 թվին Աստվածատուր վարդապետի կողմից: Իր բովանդակությամբ նմանվում է 14-րդ դարում գրված Պետրոս գրչի որինակին: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը և ընծայական վերջաբանը: Առաջին անգամ գործ է անված «Խրիմ» բառը և պրոֆ. Ք. Պատկանյանի կողմից նշված մյուս ընդմիջարկութունները: Գրված է թղթի վրա, յերկայուն, նոսր գրով (տես թիվ 2748 (1380), եջ 216 բ—230 ա):

14. [«Աշխարհացոյց»]: Գրված է Պողոս Տյուրիկեցու կողմից 1624 թվին Պոլսում, բովանդակությամբ նմանվում է Պետրոս գրչի որինակին: Գրված է միասյուն, նոսր գրով (տես թիվ 2370 (2373), թերթ 243 բ—261 բ):

15. «Մովսէս Խորենացոյց ասացեալ է»: «Աշխարհացոյց»-ի լավագույն տեքստերից մեկն է: Գրված է 1639 թվին Մարտիրոս վարդապետի վորդի Կարապետի կողմից Մոկսի Սուրս գյուղում: Ստացողն է իր հայրը, Մարտիրոս վարդապետը: Գրված է թղթի վրա, յերկայուն, բոլոր գրով: Տեղավորված է Խորենացու պատմութունից հետո: Գրչի արած առանձին հիշատակագրութուններից յերևում է, վոր նա արտագրել է հին ձեռագրից: Այսպես՝ մի տեղ նա գրում է. «Ո՛վ սուրբ ընթերցողք, անմեղադիր լեռուք վասն անգրիլ տեղաներուն, զի աւրինակն հին էր ու օսլայ էր ձգած և զօսէն ոչ էր գրած՝ զայլ աւրինակ չի գտաք որ գրէ <ինք>»:



Վւյն ինձ հազար բերան» (թերթ 149 ա): «Աւրինակ մի այլ գտնիք զմնացեալ(ն) գրեցէք, այս աւրինակս էնց էր գրած» (156 ա): «Վւյն զծաւղիս՝ թէ ի՞նչ համար տի տամ ստեղծաւղիս, որ մեզօք կորուսի զիմ հոգիս և իջէ բաժին գեհեհին» (148 բ) (տես թիվ 1883 (1663), թերթ 145 ա—177 ա):

16. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված է 1634 թվին: Գրիչն անհայտ է: Իր բովանդակութեամբ համեմատվում է Պետրոս զրչի «Աշխարհացոյց»-ին: Տեքստը թերի յե: Վերջանում է «Երջանիկ Արարիայ»-ի նկարագրութեամբ: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 4284, թերթ 13 ա—43 ա):

17. «Մովսէսի Խորենացույ ասացեալ է, երկրաչափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց»: Գրված է 1639—1652 թվերի ժամանակամիջոցում Ներսես զրչի կողմից՝ Լոռիի Ազուր գյուղում: Արտագրված է 1639 թվին գրված Կարապետ զրչի որինակից: Կարապետ զրչի պակաս տեղերը պակասում են նաև այստեղ: Ձևագրի ժողովածվում բացի Խորենացու պատմությունից, ավելացվել են նաև Ստեփաննոս Տարոնցու և Արիստակես Լաստիվերտցու պատմությունները: Գրված է մազաղագի վրա, յերկնյուն, բոլոր գրով (տես թիվ 3160, թերթ 596 բ—616 բ):

18. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված է Պողոս Երեցի կողմից 1640 թվին: Սա փոքրիկ հատված է «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Վերջանում է Վենետիկյան հրատարակության եջ 587, տող 1-ով («...երրորդն ընդ Աղեքսանդրիա, կիսաժամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենայնքն. Գ ընդ Ռոդոս, որ է միջին նահանգացն...»): Գրված է թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 1109, թերթ 211 ա—212 բ): Համեմատվում է Մատթեոս արեղայի որինակին:

19. «Յաղագս աշխարհագրութեան ասացեալում»: Գրված է 1661 թվին: Գրիչն անհայտ է: Փոքրիկ հատված է «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 2492 (11), թերթ 56 ա):

20. («Աշխարհացոյց») — վերնագիր չունի: Գրված է 1663 թվին Յերեվանում Գրիգոր զրչի կողմից: Արտագրված է Լոռիի Ազուր գյուղում գրված Ներսես զրչի ձեռագրից: Առաջաբանից պակասում է 11 տող (սկսած՝ «Բանգի որ ի վերայ այրեցածին...»), վերջացրած՝ «Իսկ Ազանիա ընդ մէջ նաւելով...»): Պակասում են նաև

Տուրուբերանի աշխարհագրութեան վերջից թերթեր, վորի համար թողած է սպիտակ տեղ՝ պակասը հետագայում լրացնելու համար: Արևելքի աշխարհագրութեան մեջ պակասում են՝ «Արարիա», «Բարեկուն» և «Միջագետք» հատվածները: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 3502, թերթ 202 ա—220 բ):

21. «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ և եշմարիտ Մովսէսի Խորենացույ»: Գրված է 1664 թվին: Գրիչն անհայտ է: Արտագրված է թիվ 5613 ձեռագրից: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը, «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի ընծայական վերջաբանը: Գրված է թղթի վրա, յերկնյուն, նոսր գրով (տես թիվ 1717, թերթ 155 ա—170 ա):

22. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ»: Գրված է 1665 թվին Յեփրեմ Տաթևացու կողմից: Իր բովանդակութեամբ համապատասխանում է Վենետիկյան հրատարակված որինակին: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը, ընծայական վերջաբանը և «Այս է քաղաքաց անունքն» աշխարհագրական հատվածը: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 2291, թերթ 79 ա—105 բ):

23. [«Աշխարհացոյց»]: Գրված է 1672 թվին Նահապետ Շոտոթեցու կողմից: Սկզբից թերի յե, սկսվում է «Բ հատուած»-ից: Չունի վերնագիր: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 3941, թերթ 366 ա—380 ա):

24. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ»: Գրված է 1676 թվին Գրիգոր Յերեվանցու կողմից, հավանական է Յերեվանում: Իր բովանդակութեամբ համապատասխանում է «Աղվէսագրքի» խմբի «Աշխարհացոյց»-ի որինակներին և ունի նրա մեջ նկատված ընդմիջարկությունները: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը: Շարունակվում է՝ «Զորս գետք են», «Փետք և գնացք նոցա», և «Անուանք քաղաքաց հնդկաց և պարսից» աշխարհագրական հատվածներով: Սկզբում ունի գեղեցիկ զարդագրություն: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 1864 (1669), թերթ 269 ա—285 բ):

25. «Տեսակի աշխարհաց և հանգամանք երկրի»: Գրված է 1678 թվին Ալիփուշարում Գրիգոր զրչի կողմից: Բովանդակութեամբ համեմատվում է թիվ 1518 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի բովանդակութեանը: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 1482, թերթ 466 բ—467 բ):

26. [«Աշխարհացոյց»]: Գրված է 1687—97 թվերի ընթացքում Մերդինում Իգնատիոս գրչի կողմից: Չունի վերնագիր: Սկսվում է «Յաղագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրէք գտանիմք ոճով ասացեալ...»՝ ընդգծելով առաջին յերկու բառերը վորպէս վերնագիր: Արտագրված է խառն թերթեր ունեցող ձեռագրից: Սովորական առաջաբանը չվերջացրած անցնում է Փոքր Ասիայի, ապա՝ Յեվրոպայի, Լիբիայի, Հայաստանի և Արևելքի աշխարհագրութեանը: Վերջին թերթերը ջնջվել են ու չեն կարդացվում: Գրված է գեղին թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 2191, թերթ 95 ա—111 ա):

27. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված է 1691 թվին Ներսես սարկավազի կողմից: Նմանվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի տեքստին: Շարունակութեան մեջ ունի «Մղոնաչափք»-ը և ընծայական վերջաբանը: Գրված է թղթի վրա, յերկսյուն, նոսր գրով (տես թիվ 1459 (1665), թերթ 178 ա—190 ա):

28. [«Աշխարհացոյց»]: Գրված է 17-րդ դարում Սաչատուր քահանայի կողմից: Վերնագիր չունի: Տեքստը թերի յե—սկսվում է «Լիբիա»-յից և վերջանում Հայաստանի աշխարհագրութեամբ: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 696, թերթ 88 բ—96 բ 109 բ—116 բ):

29. «Աշխարհագրութիւն»: Աշխարհագրական հատված «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Գրված է 17-րդ դարում: Գրիչն անհայտ է: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 1724, թերթ 22 ա—23 բ):

30. Հատված «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Շարունակութեան մեջ ունի «Մղոնաչափք»-ը: Գրված է 17-րդ դարում: Գրիչն անհայտ է: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 1737, թերթ 72 ա—73 ա):

31. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ»: Գրված է 17-րդ դարում: Գրիչն անհայտ է: Համեմատվում է «Աղվէսագրքի» տեքստին: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով: Վերջում ունի «Մղոնաչափք»-ը (տես թիվ 5120, թերթ 78 ա—103 ա):

32. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ»: Գրված է 18-րդ դարում: Գրիչն անհայտ է: Բովանդակում է «Աշխարհացոյց»-ի առաջին կես մասը՝ սկսած առաջաբանից մինչև Սարմատացոյց:

աշխարհը («Սարմատացոյց, որոյ հասարակն յարևելից...»): Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 72 (152), թերթ 207 ա—214 ա): Սա համապատասխանում է «Աղվէսագրքի» խմբի «Աշխարհացոյց»-ներին: Գրված է 18-րդ դարում: Գրիչն անհայտ է:

33. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ»: Բովանդակութեամբ համեմատվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի որինակին: Շարունակութեան մեջ ունի «Մղոնաչափք»-ը, «Չորս գետք են», «Գետք և դնացք նոցա» և «Անուանք քաղաքաց հնդկաց և պարսից»: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 3691 (խ. 102), թերթ 1 ա—20 բ):

34. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ»: Գրված է 1722 թվին Ալեքսան գրչի կողմից: Բովանդակութեամբ նմանվում է «Աղվէսագրքում» լույս տեսած «Աշխարհացոյց»-ի բովանդակութեանը: Վերջում ունի «Մղոնաչափք»-ն առանց վերջաբանի: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 7993, (նախկին Յերեմիանի ժողովածուի թիվ 822), թերթ 86 ա—100):

35. «Յաղագս աշխարհագրութեան»: Գրված է Ալեքսան գրչի կողմից 1722 թվին: Հատված է «Աշխարհացոյց»-ի առաջաբանից: Վերջանում է վենետիկյան հրատարակութեան եջ 587, տող 1-ով («...յերրորդն ընդ Աղեքսանդրիա, կիսաժամաւ յառաջ մատուցեալ որպէս և ամենեքին, չորրորդն ընդ Ռոզոս, որ է միջին նահանգացն...»): Գրված է նոսր գրով, յերկսյուն, թղթի վրա (տես թիվ 7993(822), թերթ 135 ա—135 բ): Համեմատվում է 1624 թվին գրած Մատթեոս արեղայի որինակի հետ:

36. «Յաղագս երկրի և աշխարհաց»: Գրված է 1724 թվին Ավետիս յերեցի կողմից Նոր-Ջուղայում: Գրված է թղթի վրա, միասյուն, նոսր գրով (տես թիվ 2271, թերթ 191 ա—192 բ):

Թվարկած «Աշխարհացոյց»-ները, հիմնականում, հինգ խմբի կարելի յե բաժանել՝ 1. Կարապետ գրչի որինակի խումբ, 2. Հեթում գրչի որինակի խումբ, 3. Դավիթ գրչի որինակի խումբ, 4. Պետրոս գրչի որինակի խումբ և 5. «Աղվէսագրքում» հրատարակված «Աշխարհացոյց»-ի խումբ:

Կարապետ գրչի խմբին են պատկանում 1640—50-ական թվականներին որինակած Ներսես գրչի ձեռագիրը և 1663 թվին որինակած Գրիգոր Յերեմիանցու որինակը:

1403  
1724  
5115  
1706



Հեթում գրչի որինակից խմբագրական մեծ փոփոխութեան-  
ներով արտագրվել են յերեք ձեռագիր—1589 թվի անհայտ գրչի  
ձեռագիրը, 1678 թվի Գրիգոր գրչի ձեռագիրը և 1594 թվի Ստե-  
փաննոսի ձեռագիրը: Այս յերեք ձեռագրերի վերնագիրը, ինչ-  
պես ասել ենք, «Տեսակ աշխարհաց և հանգամանք երկրի » և:


Դավիթ գրչի խմբին պատկանում են յերկու ձեռագիր «Աշ-  
խարհացոյց»-ներ, վորոնցից մեկն որինակված և 1608 թվին  
Պետրոս գրչի կողմից, իսկ մյուսը՝ 1664 թվին անանուն գրչի  
կողմից:

Ամենից շատ որինակվածները Պետրոս գրչի խմբին պատ-  
կանող «Աշխարհացոյց»-ներն են: Մենք ունենք այս խմբին  
պատկանող 14 որինակ «Աշխարհացոյց» ձեռագիր, վորոնք գրված  
են զանազան ժամանակներում: Այս խմբին են պատկանում նաև  
Վենետիկյան համառոտ համարված «Աշխարհացոյց»-ի հրատա-  
րակութեան համար գործածված ձեռագրերը: Այս որինակից է,  
ինչպես կտեսնենք հետո, խմբագրված նաև «Աղվէսագրքում»  
հրատարակած «Աշխարհացոյց»-ը:

Վերջապես, «Աղվէսագիրք» խմբին պատկանող յոթ որինակ  
ձեռագրեր, վորոնցից գրելու թվականն ունեն միայն չորսը: Այս  
խմբի հնագույնը—1665 թվի ընդորինակութեանն է, այսինքն՝  
գրված ամենահին հրատարակութեանից յերեք տարի առաջ:

Դավիթ գրչի խմբի «Աշխարհացոյց» որինակները, համեմա-  
տաբար, լրիվ են, վերջում ունեն «Մղոնաչափք»-ը, «Աստեղա-  
բաշխական երկրաչափութիւն»-ը և հեղինակի ընծայական վեր-  
ջաբանը: Պետրոս գրչի խմբի «Աշխարհացոյց»-ում անդամահատ-  
վել է «Աստեղաբաշխական երկրաչափութիւն»-ը: Հեթում և Կա-  
րապետ գրչի որինակները չեն պահել անգամ «Մղոնաչափք»-ը:

Բերված այս «Աշխարհացոյց»-ների, ինչպես և տպագիր «Աշ-  
խարհացոյց»-ները ուսումնասիրութեանից պարզվում է, վոր մեզ  
հասած ամենալավագույն և հնագույն որինակները Կարապետ  
և Վարդան գրիչների որինակներն են: Այդ որինակները, ինչ-  
պես յերևում է նրանց տեքստերի ուշադիր վերլուծութեանից,  
մեր կարծիքով արտագրված են X—XI դարի ընդորինակու-  
թեանից: Նրանց նախագաղափար որինակում բառանշատում  
զեռ գոյութեան չի ունեցել: Զի գործածվել նաև վորոշ բառերում  
«Լ» տառը («այլ»-ը գրվել է «այդ» ձևով և այլն): Այս որինակների



Հիմնական «Աշխարհացոյց»-ների մտավոր ճյուղաճյուղութեանը՝ մեզ հասած նախագաղափար որինակների համեմատութեամբ: Ճյուղաճյուղութեանը կազմված է մտավոր ձևով: Ձեռագրերի մեջ յեղած կապի մասին չկան կոնկրետ հիշատակութեաներ:

համեմատութեամբ, մյուս խմբի «Աշխարհացոյց»-ները մեջ մտել են ընդամիջարկութեանն, վորոնց վրա մանրամասն կանգ կառնենք համապատասխան գլխում: Յեկ, վերջապես, Կարապետ և Վարդան գրիչների «Աշխարհացոյց»-ները՝ մյուսների համեմատութեամբ՝ ունեն ընտիր ընթերցումներ: Այս ձեռագրերի հիման վրա հնարավոր է դառնում Վենետիկյան համեմատական հրատարակութեան «Աշխարհացոյց»-ի տեքստում կատարել գրչական վորոշ ուղղումներ:

Մեզ հասած «Աշխարհացոյց»-ների հնագույն և լավագույն որինակների նախագաղափար որինակի հետ ունեցած հարաբերութեանը, ինչպես և մյուս որինակների իրարից ունեցած կախումը ավելի պարզ դարձնելու համար, անհրաժեշտ ենք համարում տալ «Աշխարհացոյց»-ների մոտավոր ճյուղագրութեանը (տես էջ 19):

ՍՈՒՔՐՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի  
ՀՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐ

ՅԷՐԸ և գրված «Աշխարհացոյց»-ը—անա հետևյալ կարևոր հարցը, վորի ճիշտ լուծումը հնարավորութեան կտա ճիշտ ձևով լուծել նաև նրա հեղինակի հարցը: Գծրախտութեանը նրանումն է, վոր մեր հին հայկական մատենագրերը կոնկրետ վոչինչ չեն ասում «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակի վերաբերյալ: Գիտենք միայն, վոր Թովմա Արծրունին ոգտվել է «Աշխարհացոյց»-ից: Դրա հիման վրա համոզված կարող ենք ասել մի բան, վոր «Աշխարհացոյց»-ը X դարից առաջ գրված մի աշխատութեան է: X դարից առաջ, բայց յե՛րբ, այստեղ արդեն մատենագրերը չեն ոգնում մեզ լուծելու առեղծվածը: Հարցի լուծման միայն հնարավոր միջոցը մնում է իրեն «Աշխարհացոյց»-ի տեքստի վերլուծութեանը: Բայց այստեղ մեզ հանդիպում է մի այլ դժվարութեան—«Աշխարհացոյց»-ը մեզ չի հասել իր ավտոգրաֆ որինակով: Մեզ հասած «Աշխարհացոյց»-ները ընդորինակութեանն են. նրանք արտագրվել են միջնադարյան գրիչների կողմից, յենթարկվել են խոշոր փոփոխութեանների և այժմ բավականաչափ տարբերվում են իրարից:

Մեզ հասած ու հրատարակված «Աշխարհացոյց»-ներից զգալի չափով տարբերվում են մանավանդ Վենետիկյան միաբանու-

թյան հրատարակած «Աշխարհացոյց»-ը Սուբրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստերից: Այդ յերկուսի մեջ յեղած տարբերութեաններն այնքան մեծ են, վոր ընդունված է առաջինին ասել համառոտ խմբագրութեան, իսկ յերկրորդին՝ ընդարձակ խմբագրութեան:

«Աշխարհացոյց»-ի այս տեքստերի վերաբերյալ մեր աղբյուրագիտութեան մեջ գոյութեան է ունեցել յերկու տարբեր տեսակետ: Գերմանացի գիտնական պրոֆ. Ն. Մարկվարտն իր նշանավոր «Eransahr nach d. Geographie des Ps. Moses Xorenaci» աշխատութեան մեջ համեմատելով ընդարձակ և համառոտ համարված «Աշխարհացոյց»-ների Արևելքի հատվածները, յեկել է այն յեղրակացութեան, վոր Սուբրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ը հեղինակի նախնական տեքստն է, իսկ վենետիկցիները համեմատական «Աշխարհացոյց»-ը առաջինի վատագույն համառոտումը: «Der Abschnitt über Iran,—ասում է նա,—würde zu dem Beweise genügen dass die vollständigen Rezension (A) den urspöngliche Text des Werkchens enthält... wogegen die abgekürzte Rezension (3) ein dürttigen und schlechter Auszug daraus ist»<sup>1</sup>.

Տարբեր յեղրակացութեան է հանգել այդ նույն հարցում ակադ. Ն. Մանանդյանը: Նա իր «Սորենացու առեղծվածի լուծումը» աշխատութեան մեջ համեմատելով վոչ միայն «Աշխարհացոյց»-ների Արևելքին վերաբերվող հատվածները, այլ և «Աշխարհացոյց»-ի մյուս մասերը, յեկել է հետևյալ յեղրակացութեան. «Սուբրյանի հրատարակած բնագրի համեմատութեանը համառոտի հետ պարզ ցույց է տալիս, վոր տպագրված յերկու հրատարակութեանն էլ համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական ընդարձակ բնագրից, վորոնք ծագում են հնագույն մայր բնագրից»<sup>2</sup>:

Պրոֆ. Մարկվարտի և ակադ. Ն. Մանանդյանի յեղրակացութեանների հիմքը Վենետիկյան և Սուբրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ների տեքստերի համեմատութեանն է հանդիսացել: Այլ պատկեր ենք մենք ունենում, յերբ համեմատութեան

1 J. Markwart, Eransahr nach d. Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, p. 4.

2 Ն. Մանանդյան, Սորենացու առեղծվածի լուծումը, էջ 15:

ժամանակ չենք սահմանափակվում միայն հրատարակված «Աշխարհացոյց»-ներով, այլ համեմատում ենք նաև հրատարակութեան մեջ չոգտագործված գրչագրերը: Փորձելով նման համեմատութիւն կատարել, մենք յեկեկ ենք այն վճռական համոզման, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ը վնչ միայն իղեալական տեքստ չէ և Վենետիկյան «Աշխարհացոյց»-ում վնչ միայն կան մի շարք հատվածներ, վորոնք նախագաղափար որինակում յեղել և կրճատված են Սուքրյանի «Աշխարհացոյց»-ում, ինչպես շատ ճիշտ նկատել և ակադ. Հ. Մանանդյանը, այլ և Սուքրյանի «Աշխարհացոյց»-ը յենթարկվել և ուշ շրջանում մեծ խմբագրութեան: Նրա մեջ կատարվել են զգալի փոփոխութիւններ: Սուքրյանի «Աշխարհացոյց»-ում նկատվող ազավաղումները և խմբագրման փաստը ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում նշել մի շարք փաստեր:

1. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում միևնույն գաւվառները հիշված են յերկու տարբեր տեղերում, վորոնցից մեկը, մեր կարծիքով, «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրից ոգորվածն է, իսկ մյուսը—ուշ շրջանի խմբագրի կողմից այլ աղբյուրներից ոգաված և ավելացրածը: Այդպիսի կրկնողութիւններ են հանդիսանում.

ա) «Առէ», «Գիդան», «Դլմունք»—Քուստի Կապկոնի աշխարհագրութեան մեջ (եջ 40, տող 22), «Իէ», «Գեւք», «Դիլմունք»—Մարաց յերկրում (եջ 41, տող 3):

բ) «Ուեժաստան» — Քուստի Նմոռջի աշխարհագրութեան մեջ (եջ 40, տող 7), «Ուեժաստան» — Ելամացոց աշխարհում (եջ 41, տող 5):

գ) «Կոշմ», «Վարկան», «Ապրշահր», «Մրվ», «Մուտ», «Հրա», «Կատաշան», «Գողկան» — Քուստի Սորասանում (եջ 40, տող 14), «Կոշմայ», «Վրական», «Ապրշահ», «Ամր», «Մուտ», «Հրե», «Գաղշան», «Գողկան» — Արյաց աշխարհում (եջ 42, տող 2—3):

Այս կրկնողութեանը մենք չենք հանդիպում «Աշխարհացոյց»-ի համառոտ համարված որինակում: Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում, պարզ է, վոր այդպիսի կրկնողութիւններ կարող է յին առաջ գալ վնչ թէ նախնական բնագրի կրճատման, այլ նախկին տեքստի նոր աղբյուրի հիման վրա խմբագրման զեպքում:

2. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի Իրանի հատվածի «Քուստի Կապկոն»-ում հիշվում է «Հայք»-ը, «Վիրք»-ը և «Աղվանք»-ը: Այս ամբողջ հատվածը, պարզ է, վոր հետագա հեղինակի գործ է, վորովհետև «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրի հեղինակը, վորը մանրամասնաբար քափել է այդ յերկրների աշխարհագրութիւնը, կարիք չէր զգա զբանք նորից կրկնել Իրանի աշխարհագրութեան մեջ և տալ այնպիսի ընդհանուր տեղեկութիւններ, ինչպիսին՝ «Արմն (որ է) Հայք», «Վարջան, որ է Վիրք», «Ռան, որ է Աղուանք», «Բալասական», «Սիսական» և այլն (տես եջ 40, տող 20—22):

3. «Աշխարհացոյց»-ի Վենետիկյան համառոտ համարված որինակի տեքստից յերևում է, վոր նա գրվել է այն ժամանակ, յերբ Արարիայում պետական միավորում գեւ չէր կատարված— «Ապառաժ», «Երջանիկ» և «Անապատ» Արարիաները հիշատակված են առանձին-առանձին, չի հանդիպում նաև մեզ վորևէ հիշատակութիւն, վորը հիմք տար յենթագրել, վոր արարները արշաված լինեյին զեպի Անդրկովկաս և Պարսկաստան: Իսկ Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստից յերևում է, վոր նրա տեքստը յենթարկվել և զգալի փոփոխութեան ուշ շրջանի խմբագրի կողմից: Վերջինս ավելացրել է մի շարք այնպիսի փաստերի հիշատակութիւն, վորոնք վկայում են, վոր արարները վնչ միայն զուրս են յեկել իրենց բուն յերկրից, այլ և նվաճելով Հայաստանը, արդեն կարողացել են թողնել իրենց լեզվական վորոշ ազդեցութիւնները: Այսպես՝ Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի խմբագիրը խոսելով Աղձնիքի Քաղիթթ գետի մասին, ասում է, վոր նրան «Շիթմա կոչին տաճիկք» (եջ 30, տող 28): Նկարագրելով Ապառաժ Արարիայի շրջանները, նրանցից մեկում, Փամանիտէում, հիշում է Փառան ավանը արարական անունով («զոր կարծեմ ի տաճկաց Մաքա կոչիկ») (եջ 37, տող 4):

4. Սուքրյանի «Աշխարհացոյց»-ի տեքստը կազմվել է այնքան ուշ, վոր նրա խմբագրող հեղինակին արդեն ծանոթ է յեղել Վոլգայի ավերում, խազարների տեղում թուրքերի գանվելը: Այսպես՝ Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագրող հեղինակն ասում է. «Ըստ հիւսիսոյ են ազգ թուրքաց և բուլղարաց» (եջ 25, տող 22):

Հիմք կա անգամ յենթագրելու, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագրող հեղինակն ոգտագործել է

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան սխալաշատ մի որինակ, վորից համառոտվել է և առաջինը և յերկրորդը: Այդ յերևում է Վենետիկյան խմբի «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած գրչական այն սխալներէից, վորոնք կրկնվում են նաև Սուքքյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում: Այդ առթիվ կարելի յե նշել հետևյալ փաստերը:

ա) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հիշվել է այն մասին, վոր Տուրուբերանում կա «մաշ կարմիր և սպիտակ», վորը ճիշտ ձևով պահել են մեր Մատենադարանի «Աշխարհացոյց»-ների հնագոյն գրչագրերը: «Աշխարհացոյց»-ի արտագրիչներէից մեկը «Աշխարհացոյց»-ում սա աղավաղել և դարձրել է «մաշկամիրգ»: Վենետիկյան և Սուքքյանի հրատարակած խմբի «Աշխարհացոյց»-ների ընդորինակող գրիչներն ոգտվելով սխալաշատ որինակից, թույլ են տվել նույն սխալները (տես Վենետ. հրատ. էջ 608, տող 3 և Սուքք. հրատ. էջ 31, տող 27):

բ) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հիշվում է այն մասին, վոր Բարձր Հայքում կա «Ջերմուկս և աղս և դամենայն պարարտութիւն» ինչպես մեր մատենադարանի լավագոյն գրչազգրերումն է: Համառոտ և ընդարձակ համարված «Աշխարհացոյց»-ների ընդորինակողները ոգտվելով սխալաշատ որինակից, «աղը» ընդորինակել են «աղտս» ձևով («Ջերմուկս և աղտս և դամենայն պարարտութիւն») (տես Վենետ. հրատ. էջ 607, տող 16, Սուքքյանի հրատ. էջ 30, տող 5):

գ) «Աշխարհացոյց»-ի նախնական բնագրում հեղինակը խոսելով յերկրագնդի գոտիների մասին, հիշում է, վոր այդ գոտիներից յերկուսը գտնվում են հարավում, իսկ «զայլ ևս վեցն ի նմանէ յառաջնային կոյս», ինչպես մեր Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի լավագոյն գրչագրերն են: Համառոտ և ընդարձակ «Աշխարհացոյց»-ների ընդորինակող գրիչներն ոգտվելով սխալաշատ որինակներից «յառաջնայինը»-ը աղավաղել են «յարջային կոյս» (տես Վենետ. հրատ., 586, տող 19), «յարջն կոյս» (տես Սուքք. հրատ. էջ 6, տող 11):

Նման սխալներ տասնյակներով կարելի յե թվել: Այսպիսով պարզվում է, վոր Սուքքյանի հրատարակած տեքստը ևս իդեալական տեքստ չի, նա վոչ միայն կրճատվել է, այլ և խմբագրվել է ուշ շրջանում: Ընդորինակութունների ժամանակ կատարված են բավականաչափ գրչական աղավաղումներ:

«Աշխարհացոյց»-ի վերնագրի պարզաբանման հարցն եյական նշանակութուն ունի հեղինակի հարցի լուծման խնդրում: Նրա ճիշտ լուծումը մեծ չափով կոգնի մեզ ազատվելու «Աշխարհացոյց»-ի թորենացուն վերագրելու կանխակալ տրադիցիոն կարծիքից:

Վենետիկյան և նախորդ հրատարակութուններում «Աշխարհացոյց»-ը, ինչպես հայանի յե, վերնագրված է յեղել «Աշխարհացոյց Մովսէսի թորենացւոյ», Սեն-Մարտենի հրատարակած որինակը — «Աշխարհացոյց ստոյ Մովսիսի թորենացւոյ», իսկ Սուքքյանի հրատարակածը — «Աշխարհացոյց» (վերջինիս Քրանսերեն թարգմանութեան վերնագիրն է՝ «Geographie de Moise Coréne d'après Ptolémée»):

Տպագրված «Աշխարհացոյց»-ների այս վերնագրերը, պիտի խոստովանել, քիչ են ոգնում մեզ պարզելու սկզբնական բնագրի վերնագրերը, վորովհետև այդ վերնագրերը, ինչպես կտեսնենք քիչ հետո, XVII դարից դենը չեն անցնում: Հարցի լուծման ավելի վստահելի աղբյուրները մնում են ձեռագիր «Աշխարհացոյց»-ների վերնագրերը: Պիտի խոստովանել, սակայն, վոր այստեղ մեզ հանդիպում է մի մեծ դժվարութուն — գրչագիր «Աշխարհացոյց»-ների վերնագրերը խիստ տարբերվում են իրարից: ՀՊՄՀ մատենադարանի գրչագրերն ունեն հետևյալ վերնագրերը.

1. «Աշխարհագիր»,
2. «Տեսակք աշխարհաց և հանգամանք երկրի»,
3. «Աշխարհացոյց»,
4. «Յաղագս աշխարհագրութեան»,
5. «Յաղագս աշխարհագրութեան ստույգ»,
6. «Յաղագս աշխարհագրութեան ստույգ և ճշմարիտ Մովսէսի թորենացւոյ»,

և 7. «Մովսէսի թորենացւոյ ասացեալ է, երկրաչափ յաղագս աշխարհագրութեան»:

Յեթե տպագիր «Աշխարհացոյց»-ների վերնագրերը համեմատելու լինենք ձեռագիր «Աշխարհացոյց»-ների վերնագրերի հետ, ապա կտեսնենք, վոր Վենետիկյան համեմատական համարված «Աշխարհացոյց»-ի վերնագիրը նմանվում է յերկրորդ խմբի

Վերնագրին, այն տարբերությամբ միայն, վոր այստեղ ավելացած և Մովսես Պորենացու անունը:

MEMOIRS

**ԱՆՎՈՐՆԵՅՈՒՅՑ**

ԱՏՈՅ

**ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՅԻՈՅ:**

\*\*\*\*\*

Յարգապա աշխարհագրութե՛ն յանայնս զիրս ոչ ուրեք գտաննեք ոճով ասացեալ, այլ դոյզն ինչ գունուրեք՝ և այն դժուարահաս, և ասածանելի, արդիս զի անհասօք դոցա եղևայ մեզ, յարտաբնանս հարկանքիմք ձևնսարկել. որով զաշխարհագրութիւնս յարմարելին 'ի ճանապարհորդութե՛ն և 'ի ստուարկութե՛ն, և ստուղելնս յերկրաչափութե՛ն: Այս ինքն երկրաչափութիւն գտաւ յաստեղագրաչափութե՛ն: Վասն զի ուշ եղևայ առաջնսնս, իտկայնս, թէ որք անզիք երկրի ընդ որովք են կայեալք մասամբք երկրայնոյ բոլորակին, և զմեծութիւնս տունընանս, և զիւրոյ. և զոր 'ի վր' երկրի, և զոր 'ի ներքոյ երկնոյ միտքերելով, յարտննս և զբնակութի մարդկանս, 'ի միջօրականս դժ են զգիլնս աննելով. աստարեղականս յափութե՛ն, ըստ ճանապարհորդութե՛ն և ըստ ստուարկութե՛ն. ինացեալ զկայանսն, և զփոփոխելնս. զայլ աղտոս ապրապէս երևեալ: Վասն զի 'ի վր' այրեցան ին բերին կենդանաստեղակին՝ մտաննն, և ծագին: Վասն զի ուրեք

Յարգապ աշխարհագրութե՛ն յանայնս զիրս ոչ ուրեք գտաննեք ոճով ասացեալ, այլ դոյզն ինչ գունուրեք՝ և այն դժուարահաս, և ասածանելի, արդիս զի անհասօք դոցա եղևայ մեզ, յարտաբնանս հարկանքիմք ձևնսարկել. որով զաշխարհագրութիւնս յարմարելին 'ի ճանապարհորդութե՛ն և 'ի ստուարկութե՛ն, և ստուղելնս յերկրաչափութե՛ն: Այս ինքն երկրաչափութիւն գտաւ յաստեղագրաչափութե՛ն: Վասն զի ուշ եղևայ առաջնսնս, իտկայնս, թէ որք անզիք երկրի ընդ որովք են կայեալք մասամբք երկրայնոյ բոլորակին, և զմեծութիւնս տունընանս, և զիւրոյ. և զոր 'ի վր' երկրի, և զոր 'ի ներքոյ երկնոյ միտքերելով, յարտննս և զբնակութի մարդկանս, 'ի միջօրականս դժ են զգիլնս աննելով. աստարեղականս յափութե՛ն, ըստ ճանապարհորդութե՛ն և ըստ ստուարկութե՛ն. ինացեալ զկայանսն, և զփոփոխելնս. զայլ աղտոս ապրապէս երևեալ: Վասն զի 'ի վր' այրեցան ին բերին կենդանաստեղակին՝ մտաննն, և ծագին: Վասն զի ուրեք

Մասնագրանի թիվ 1717 ձեռագրի «Աշխարհացոյց»-ը, վորի վերնագրում Պորենացին հիշատակագրվում և «Մտոյգ և ճշմարիտ»—«Յարգապ աշխարհագրութեան ստոյգ և ճշմարիտ Մովսեսի Պորենացոյ»:

Սեն-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ի առաջին եջը, վորը վերնագրված և «Աշխարհացոյց ստոյ Մովսեսի Պորենացոյ»:

Սեն-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ի վերնագիրը նամանվում է V խմբին, դարձյալ այն տարբերութեամբ, վոր այստեղ ևս ավելացած է Պորենացու անունը և «ստոյգ» բառն ազավաղվել, «ստոյ» ձևն է առել<sup>\*</sup>։ Գրչական աղավաղման այս փոքրիկ փաստը հարկավոր է մատնացուցց անել, վորպեսզի պարզ լինի՝ թեմի տառի սխալի պատճառով ինչպիսի մեծ թյուրիմացություններ կարող են առաջանալ։ Մի դեպքում «Աշխարհացոյց»-ը հասկացվում է վորպես ստույգ Պորենացու գործ, իսկ մյուս դեպքում—սուտ Պորենացու (աես եջ 26 և 27 նկարները)։

«Յաղագս աշխարհագրութեան ստոյգ Մովսէսի Պորենացւոյ»

«Յաղագս աշխարհագրութեան ստոյ Մովսիսի Պորենացւոյ»

Վոր այդ խմբի «Աշխարհացոյց»-ների նախագաղափար որինակում «ստոյգ» է յեղել—դա կասկածից դուրս է։ Այդ խմբին պատկանող ՀՊՍՀ մատենադարանի հնագույն ձեռագիրը (թիվ 582) պահել է «ստոյգ» ձևը։ Ընդորինակող գրչի անուշազրութեան պիտի վերագրել, վոր նա «զ» տառը մոռացել, բաց է թողել։ Այս փաստը վորոշ չափով և հիմք է հանդիսացել վորոշ բանասերների մոտ յենթադրելու, վոր կա յերկու Պորենացի—ճիշտ Պորենացի և սուտ Պորենացի։ Գրչական այս փոքրիկ փաստը ցուցց և տալիս, թե վորքան զգուշ պիտի լինել հետևությունների մեջ, յերբ այդ արվում է վորևե տեքստի հիման վրա։ Յերբնմն տառակերությունը կարող է մեծ վնասներ հասցնել հնագույն մեր մատենագրին։

Ուշագրութեան արժանի փաստը, վորն անմիջապես աչքի յե դարնում «Աշխարհացոյց»-ների հնագույն գրչագրերի վերնագրերն ուսումնասիրելիս—դա Պորենացու անվան բացակայությունն է 1600 թվականից առաջ գրած «Աշխարհացոյց»-ների վերնագրերում։ Նա չի հիշատակված վնչ XII դարում գրված Սարգիս գրչի «Աշխարհացոյց»-ի ծաղկաքաղ հատվածում (թիվ 4066, թերթ 165 բ.), վնչ XIII դարի վերջում Հեթում թագավորի յեզքոր կողմից ընդորինակված «Աշխարհացոյց»-ի որինակում (տես Zeitschrift für armenische Philologie, 1902, եջ 104), վնչ XIII դարում ընդորինակված Վարդան գրչի որինակում (տես թիվ 582, թերթ 165) և վնչ էլ XV—XVI դարերում ընդորինակված մյուս «Աշխարհացոյց»-ների վորևե մեկի վերնագրում։ Բացառություն

ե կազմում միայն XV դարում Պետրոս գրչի ընդորինակած «Աշխարհացոյց»-ը, վորը վերնագրված է Մովսէսի Պորենացւոյ աշխարհացոյց»։ Սակայն այս վերնագրի պայեղաբափիկ ուսումնասիրությունից յերևում է, վոր Պորենացու անունն ուշ շրջանում է ավելացված։ Պորենացու անունը գրված է վնչ թե տեքստի հետ, XV դարում, այլ ավելացված է ուշ շրջանում, հավանական է XVIII—XIX դարերում։



Մատենադարանի Պետրոս գրչի «Աշխարհացոյց»-ի վերնագիրը, ուր Պորենացու անունը ավելացած է ուշ շրջանի գրչի կողմից

Պետական Մատենադարանի ամենահին ձեռագիրը, ուր հանդիպում ենք առաջին անգամ Պորենացու անվան հիշատակութեանը «Աշխարհացոյց»-ի վերնագրում—դա 2029 թվակիր ձեռագիրն է, գրված Ջուղայում 1600 թ. Յերեմիա գրչի կողմից (տես թերթ 257 ա)։ Նրանից հետո գրված բոլոր «Աշխարհացոյց»-ների վերնագրերում սկսում է հիշատակվել Պորենացու անունը։

Ինչո՞վ պիտի բացատրել 1600 թվականից առաջ գրված «Աշխարհացոյց»-ների վերնագրերում Պորենացու անվան բացակայությունը։ Յեթե Պորենացու անվան չհիշատակվելու այդ փաստը մեզ հանդիպելիս լինել «Աշխարհացոյց»-ի հնագույն վորոշ որինակներում, գուցե հնարավոր լինել այդ բացատրել ընդորինակող գրչի անփութութեամբ, չհայած վերնագրում այնքան

\* Անկասկած, վերնագիրը հնարովի չէ, այլ ոգտված է ձեռագրից



Այլ հավանական չե՛ս այդպիսի անփութությունը: Բայց այստեղ բացատրությունների մասին չե՛ս խոսքը, այլ համատարած մի յերևույթի: Մնում է, ուրեմն, մի հնարավոր յեզրակացություն, վոր հին ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ընդորինակությունների վերնագրում չի հիշատակվել Պորենացու անունը: Մինչև XVI դարը «Աշխարհացոյց»-ը դեռ չի ճանաչվել Պորենացու հեղինակությամբ: XVI դարում է, վոր ստեղծվում է այդ կարծիքը, ընդհանրականանում և այնուհետև սկսում է հիշվել բոլոր ընդորինակողների մոտ: Այդ տեսակետից հետաքրքիր փաստ կարող է հանդիսանալ ՀԽՍՀ մատենադարանի թիվ 1267 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի վերնագիրը, վորը գրված է XIV դարում: Ձեռագիրն ընդորինակող Պետրոս գրիչը չի հիշատակում «Աշխարհացոյց»-ի հեղինակին, բայց XVIII դարում մի այլ գրիչ, վորն արդեն ծանոթ է յեղել «Աշխարհացոյց»-ի Պորենացուն վերագրվելու փաստի հետ, անհրաժեշտ է գտել ավելացնել Պորենացու անունը:

XVI—XVII դարերում, յերբ աշխուժանում է առևտրական փառաստալը և սկսում է համեմատաբար ավելի ուշադրություն դարձվել դրական գիտություններին, մասնավորապես աշխարհագրություններ գրելու և ընդորինակելու գործի վրա, հավանական է՝ ընդորինակող գրիչներից մեկն անհրաժեշտ է գտել նշանակել «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Բայց թվ եր այդ խոշոր գիտնական հեղինակը, վորին կարելի յեր վերագրել «Աշխարհացոյց»-ը և ահա ընդորինակող գրիչը վորոշում է հոգուտ Պորենացուն, վորովհետև նա յեր ամենամեծ հեղինակություն վայելողը: Այնուհետև սկսում է աշխարհագրությունը ճանաչվել Պորենացու հեղինակությամբ և գործ է ածվել վերնագրում նրա անունը:

Հարց է առաջ գալիս՝ չունե՞ր արդյոք «Աշխարհացոյց»-ի նախագաղափար որինակը վորևե վերնագիր, և յեթե ունե՞ր՝ ինչպե՞ս եր նա վերնագրված:

Փորձենք քննել այդ հարցը:

Ձեռագրի մեր բերած «Աշխարհացոյց»-ների վերնագրերից առաջին խմբի վերնագիրն է «Աշխարհագիր»: Այս վերնագիրն առաջին անգամ գործ է ածված Հեթում թագավորի յեզրոր ձեռագրում: Այստեղ, սակայն, ինչպես մենք ասել ենք «Աշխարհացոյց»-ի բերլիոգրաֆիայի բաժնում, «Աշխարհացոյց»-ի առաջաբանը տեղավորված է վերջաբանի փոխարեն, իսկ «Աշխարհա-

ցոյց»-ը սկսվում է «Բ հատածից», իսկ վորովհետև մենք գիտենք, վոր այդ հատվածը, սովորաբար «Աշխարհացոյց»-ներում ունի «Աշխարհագիր» վերնագիրը, ուրեմն՝ այդ վերնագիրը վճռ թե «Աշխարհացոյց»-ի ընդհանուր վերնագիրն է, այլ նրա մի հատվածի: «Բ հատած»-ի վերնագրի մասին խոսք կլինի հետո:

Ձեռագրի յերկրորդ խմբի վերնագիրն է «Տեսակ աշխարհաց և հանգամանք երկրի»: «Աշխարհացոյց»-ների այս խումբը խմբագրվել է Կիլիկյան շրջանում, վոչ շուտ XIII դարից: Այս խմբի «Աշխարհացոյց»-ի տեքստերում ավելացված է Կիլիկիայի տնտեսական աշխարհագրությունը, վորը բացակայում է «Աշխարհացոյց»-ի մյուս որինակներում և կատարված փոփոխությունների համաձայն փոփոխվել է նաև վերնագիրը: Այս վերնագիրը սկսում է գործ ածվել կիլիկյան շրջանում և նախկին «Աշխարհացոյց»-ի վերնագիրը չե՛ս:

Յերրորդ, չորրորդ և հինգերորդ խմբի «Աշխարհացոյց»-ների վերնագիրը փաստորեն միևնույն խմբին են պատկանում: Ձեռագրերի ուսումնասիրությունից յերևում է, վոր այդ խմբի «Աշխարհացոյց»-ների վերնագիրը սկզբում յեղել է «Յաղագս աշխարհագրութեան», հետագայում սրա վրա ավելացվել է «ստոյգ» բառը և դառել է «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ», իսկ ավելի ուշ՝ ավելացվել է «ճմարիտ» ու «Մովսէս Պորենացի» բառերը և դառել «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ և ճմարիտ Մովսէսի Պորենացոյց»:


«Յաղագս աշխարհագրութեան ստոյգ» վերնագիրը, պիտի ասել, մեզ հայտնի վերնագրերից ամենահինն է, սակայն այս ևս կասկածելի չե, վոր «Աշխարհացոյց»-ի վերնագիրը լինի: Այստեղ, հավանական է, վերցվել ու գործ են ածվել «Աշխարհացոյց»-ի տեքստի առաջին յերեք բառերը: «Աշխարհացոյց»-ը, ինչպես հայտնի յե, սկսվում է «Յաղագս աշխարհագրութեան <ստոյգ> յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ, այլ դոյզն ինչ դուն ուրեք, և այն դժուարահաս և տաժանելի» նախագասությամբ (տես Վենետ. հրատ. եջ 585): Ընդորինակող գրիչներից մեկը, վորը, հավանական է, ձեռքի տակ ե ունեցել հնացած այնպիսի մի նախագաղափար որինակ, վորի վերնագիրը ջնջված կամ պատուված է յեղել, վերցրել է «Աշխարհացոյց»-ի տեքստի յերեք բառերը («Յաղագս աշխարհագրութեան ստոյգ») և գրել վերնագիր: Նման

աղավաղումը մեր հայկական ձեռագրերում մի բացառիկ յերե-  
վույթ չէ: Անսլոգիկ փաստերի մենք շատ ենք հանդիպում  
հայկական ձեռագրերում—վերնագիր չունեցող տեքստերի համար  
հաճախ վերցնում և վերնագիր են նշանակում տեքստի առաջին  
բառերը: Ճիշտ նման ձևով էլ վարվել են «Աշխարհացոյց»-ի վեր-  
նագրի հետ:

«Աշխարհացոյց»-ի վերնագրի ճշտման հարցում խոշոր չափով  
մեզ ոգնում է այն աղբյուրների վերնագրերի քննութձյունը,  
վորից ոգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Պապպոս Աղեք-  
սանդրացու աշխատութձյունը, ինչպես հայտնի յե, վերնագրված  
է յեղեւ «Χωρογραφία οὐκουμένης», իսկ Պաղոմոսինը—Γεωγραφικὴ  
ἑπιφανεία»: Մեզ համար այստեղ կարևոր է հատկապես Պապպոս  
Աղեքսանդրացու աշխատութձյան վերնագիրը, վորից «Աշխարհա-  
ցոյց»-ի հայ հեղինակն ոգտվել է մեծ չափով: Նրա վերնագրից  
Χωρογραφία բառը—«երկրագրութձյուն» են թարգմանում: Սակայն  
հնում այդ թարգմանվել է վնչ թե յերկրագրութձյուն, այլ «երկրա-  
չափութիւն» (տես Վատիկանի մատենադարանի հայկական ձե-  
ռագրաց Փոնդի թիվ 8 ձեռագիր, թերթ 303ա: Հմ. «Հանդէս  
ամսօրեայ» 1892 թ., էջ 246):

Հետաքրքիրն այն է, վոր դրան նմանվող վերնագրեր ունեն  
մեր մատենադարանի Կարապետ գրչի ձեռագիր «Աշխարհա-  
ցոյց»-ը (ինչպես և նրանից ընդորինակված Լոռիի Ագուր գյուղի  
գրչագիրը) և նա մեծ չափով ոգնում է մեզ վերնագրի պարզարան-  
ման հարցում: Նրա վերնագիրն է. «Մովսէսի Խորենացույ ասացեալ  
է երկրաչափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց», իսկ տեքստն  
սկսվում է. «Չաստուածային գիրս ոչ ուրեք գտանիմք ոճով ասա-  
ցեալ» բառերով: Վերնագրում Մովսես Խորենացու անունը, մենք  
արդեն ցույց ենք տվել, վոր ուշ շրջանում են սկսել գործ ածել,  
իսկ «Յաղագս աշխարհագրութեան տիեզերաց» տեքստի հետ պիտի  
լինի, այլապես տեքստի առաջին նախադասութձյունը չի ունենա  
իր յենթական: Այդպիսի ուղղում կատարելու դեպքում, տեքստը  
կկարգացվի. «Յաղագս աշխարհագրութեան տիեզերաց յաստուա-  
ծային գիրս (և վնչ թե «զաստուածային» գիրս) ոչ ուրեք գտա-  
նեմք ոճով ասացեալ», այսինքն՝ կրօնական գրքերում վորինչ  
չգտանք աշխարհագրութձյան մասին հանգամանորեն ասված:  
Այսպիսի ուղղումներ կատարելուց հետո, մենք վերնագրում կու-

նենանք միայն «Երկրաչափ» բառը: Սա հենց, մեր կարծիքով,  
«Աշխարհացոյց»-ի նախնական որինակի վերնագիրն է հանդի-  
սացել:



Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի ընտիր այն որինակը, վորի  
վերնագրում հիշատակված է «Երկրաչափ».

«Աշխարհացոյց»-ի նախնական վերնագիրը «Երկրաչափ» լի-  
նելու փաստը հաստատվում է մեր մատենադարանի մի այլ ձեռա-  
գրով: Մեր 4166 թվակիր գրչագիրը, ընդորինակված XIII դարում,  
պարունակում է մղոնների չափը՝ «Մղոնահամարք երկրաչափու-  
թեան» վերնագրով (տես թ. 209): «Մղոնաչափք»-ը, ինչպես ճիշտ  
նկատել է ակադ. Հ. Մանանդյանը, «Աշխարհացոյց»-ի հավելվածն  
է հանդիսացել: Այնքան, վորքան մենք գիտենք, վոր «Աշխար-  
հացոյց»-ի հեղինակը «Մղոնաչափք»-ով ցանկացել է «Աշխարհա-  
ցոյց»-ում արդեն հիշված քաղաքների տարածութձյունը տալ  
մղոնական չափով, հետևապես նա «Երկրաչափութիւն» է հասկա-  
ցել նաև «Աշխարհացոյց»-ի առաջին հատվածը, ուր նույնպես  
պատմվում է, թե ով է չափել յերկիրը, չափելու համար ինչ գոր-  
ծիքներ են հարկավոր և այլն: Այստեղ կարող է այսպիսի մի

առարկութիւն լինել, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ինչպես և հին հայկական մյուս մատենագիրները շատ լավ տարբերել են աշխարհագրութիւնը յերկրաչափութիւնից: Շատ ճիշտ է, բայց այստեղ «Երկրաչափ» վերնագիրը յեղել և վնչ թե ամբողջ աշխատութեան վերնագիրը, այլ միայն նրա առաջին գլխի: Անանիա Շիրակացին, վորի հեղինակ հանդիսանալու մասին մենք կ'ստաննք իր ակումբ, իր վնչ մի աշխատութեան համար չի գրել ընդհանուր վերնագիր: Նրա աշխատութեանների առաջին գլուխը ավշալ աշխատութեան վերնագիրն է: Այսպես՝ նրա թվարանութեան վերնագիրն է «Սոստուէն աշակերտացն», տիեզերագիտութեան՝ «Առ խոստացեալսն» և այլն: Նույն ձևով ել նա վարվել է նաև «Աշխարհացոյց»-ի հետ: Նրա առաջին գլխի վերնագիրն է յեղել «Երկրաչափ», յերկրորդ գլխինը՝ «Աշխարհագիր», և այլն: Ի միջի այլոց, յերկրորդ գլխում «Հատած բ»-ն, յեթե միայն ուշ շրջանում մտցված գլխակարգութիւնն չի, պիտի լինի վերնագրից առաջ «Հատած բ—աշխարհագիր», ինչպես Շիրակացու մյուս աշխատութիւնների գլխակարգութիւնն է:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, վոր «Աշխարհացոյց»-ի վերնագիրը դարբեր ընթացքում խոշոր փոփոխութիւնների յի յենթարկվել: Նրա նախնական տեքստի վերնագրում չի հիշատակվել Սորենացու անունը: Այդ անունը գրվել է «Աշխարհացոյց»-ի վերնագրում հետագայում: Միակ հնարավոր վերնագիրը, վոր ունեցել է «Աշխարհացոյց»-ի առաջին գլուխը—«Երկրաչափ»-ն է:

#### «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՏԵԿՍՏՈՒՄ ՆԿԱՏՎՈՂ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող կրճատումների և այլ տիպի աղավաղումների վրա, Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի կապակցութեամբ, մասամբ մենք կանդ ենք առել մեր ներկա աշխատութեան առաջին գլխում: Մենք այնտեղ նշել ենք տեքստում նկատվող այն փոփոխութիւնները, վորոնք, մեր կարծիքով, կատարվել են նախնական տեքստի համեմատութեամբ: Դժբախտաբար, ՀԽՍՀ Պետ. մատենադարանում չգտնվեցավ Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբին պատկանող մի այլ ձեռագիր, վորպեսզի հնարավոր լիներ նրա հիման վրա վորոշ համեմատութիւն կատարել: Նման աշխա-

տանք այժմ հնարավոր և կատարել համառոտ համարված «Աշխարհացոյց»-ի տեքստի նկատմամբ, վորի խմբին պատկանող ընտիր ընթերցումներ ունեցող մի շարք ձեռագրեր ունենք ՀԽՍՀ Պետ. մատենադարանում: Մենք ի նկատի ունենք հատկապես Կարապետ և Վարդան գրիչների ընդորինակած ձեռագրերը, վորոնք մի շարք տեղերում եյական փոփոխութիւններ են մտցնում «Աշխարհացոյց»-ի համառոտ համարված տեքստում:

Համեմատական նման աշխատանքը, մեր կարծիքով, անհրաժեշտ է այն պատճառով, վոր դրա շնորհիվ նախ՝ վորոշ չափով կճշտվի «Աշխարհացոյց»-ի տեքստը և ապա՝ դա զգալի չափով կոգնի մեզ ավելի վստահ մտենալ տեքստի վերլուծմանը՝ նրա հեղինակը գտնելու հարցում:

«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող աղավաղումները, մեր կարծիքով, յերեք հիմնական խմբի կարելի յե բաժանել— ընդմիջարկութիւններ, կրճատումներ և տեքստի ներքին ու նախադասութեան փոփոխութիւններ: Ընդմիջարկութիւնները և հապավումները մենք դիտարկելով կերպով ենք աղավաղումների շարքը դասում, վորովհետև ուշ շրջանում նախնական տեքստում կատարած ամեն մի ավելացում կամ կրճատում, ինչպիսի նպատակ էլ հետադնդելիս լինեն, փոփոխութիւնն է նախնական տեքստում, հետևապես աղավաղում է:

Վենետիկյան Մխիթարյանների հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստը համեմատելով ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ընտիր գրչագրերի հետ, նկատվում են հետևյալ ավելացված բառերն ու նախադասութիւնները<sup>1)</sup>, վորոնց վորոշ մասը հավանական է, ընդմիջարկութիւններ են:

ՅՉ 591. «Իսկ Ովիլիանոս երթեալ ընդ հիւսիսի և դարձեալ ընդ արևելս, առնէ երկու կղզիս մեծամեծս՝ որ կոչին Բրիտանացոց աշխարհք, և զԹուլիս [մեծ] կղզի՝ որոյ հասարակն յանձանօթ երկիր համարեալ է» (հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 168բ):

ՅՉ 596. «ԺԲ. Ելլաղա առ երի կալով Մակեդոնիոյ ի մէջ պեղագոսացն, ունի փոքր աշխարհս վեց՝ զԵպիոսս, զԱքայիա, զԱտտիլէ, զԵւբիա ապառաժ, [և զԿրիտ մեծ կղզի] և զՊեղոպոնիսս ցամաք կղզի» (հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 172ա):

<sup>1)</sup> Ավելացված բառերը և նախադասութիւնները մենք վերցնում ենք քառակուսի փակագծերի մեջ:

Եջ 600. «Ա. Բիւթանիա, յեւրոյ թագաւորական քաղաքին Կոստանդինուպօլսի: Ունի Բիւթանիա լերինս և գետս, կղզիս և լիճս, և մայրաքաղաքս երիս, զՆիկիոս, զՔաղկեդոն, զՆիկոմիդիա. որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասան, և գեղաքաղաքս ծովեզերեայս, և վաճառատեղիս: [Լինի ի Բիւթանիա հող սպիտակ, զոր մանր աղացեալ և ցանեալ ի քանդուկս ի վերայ ցորենոյ՝ ձճի չուաէ]» (հմմ. Պետ. մատ. թիվ 1883 ձեռ.):

Եջ 600. «Ե. Փոխգիտ յեւրոյ կալով առանձնակ Ասորոյ և յերի Լիկիոյ, ունի յինքեան աշխարհս երիս, զՊիսիդիա՝ որ ունի մայրաքաղաք զԱնտիոքիա, [ուր ասնն շինեալ դտապանն Նոյի]...» (հմմ. Պետ. մատ. թիվ 582 ձեռ., թերթ 174բ):

Եջ 601. «Զ. Սնորիա յեւրոյ կալով Բիւթանիոյ առ երի Փոխգիտոյ մինչև ցՊոնտոս ծովն... և գետ ունի զՊարթենիոս երեքվտակեանն. [յայսմ արեւը երդնուին զեքն վասն անչափ ցրտութեանն]» (հմմ. Պետ. մատ. № 582 ձեռ., թերթ 175ա):

Եջ 608. «Կորճայք յեւրոյ կայ Մոկաց առ ասորեստանիւ գաւառս ունի մետասան. զԿորզուս [զԿորզիս վերին, զԿորզիս միջին, զԿորզիս ներքին], զԱյտուանս...» (հմմ. Վննետ. հրատ. ծանոթ. և թիվ 582 ձեռ.):

Եջ 611. «ԼԱ. Միջագետք յեւրոյ կալով Ասորոց և Եփրատ գետոյ, Ասորեստանիւ առ Իկղաթ գետով... և քաղաքս բազումս [յորոց մի է Ուռնս՝ ուր անձեռագործ պատկերն է փրկչին]» (հմմ. Պետ. մատ. թիվ 1883 ձեռ.):

Եջ 614. «ԼԹ. Արիք, որ կոչին Քուստի Խորասանք, յեւրոյ կալով Մարաց և Պարսից մինչև ի հնդկիս և յերի Վրկանի ծովուն... Լինի հրամուշկ չպէտ և ոչ ագնիւ [Եւ կղզի մի է հանդէպ Արեաց ի հնդկաց ծովուն, յորում թզուկք լինին երեքթզեան հասակաւ, որք պատերազմին ընդ խորդուց հաւուց վասն ձարակերոյ նոցա զանդաստանս թզկացն]» (հմմ. Պետ. ձեռ., 1883):

Եջ 614. «Հնդկաստան յեւրոյ կալով Արեաց աշխարհին և յերի Սկիւթիոյ. և են հնդկիք բաժանեալ յերկուս աշխարհս զոր բաժանէ Գանգէս գետ՝ [որ է Փիսոն]...» (հմմ. Պետ. մատ. 582 ձեռ., թերթ 182բ):

Յեւ, վերջապես, Սուբբյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ում կան մի քանի բացահայտ, տեքստի հետ բոլորովին չկապվող ընդմիջարկութիւններ, վորոնք դարձյալ ապացուցում են յերբորք ձեռքի գործողութիւն փաստն այդ տեքստում: Այդպիսի ընդմիջարկութիւններէ կարելի չէ նշել.

Եջ 23—24. Սավրիայի նկարագրութիւնից հետո. [«Եւ զխունկսն ոչ է պարտ միայն ծխել, զի ոչ տայ ագնիւ հոտ. այլ խառնեալ ընդ այլ՝ յոյժ անուշէ. եւ արժէ լիարն դանկեան մի. բայց զագնիւն ժողովին օձք եւ դնեն ի բոյնս, ի կտապս իւրեանց, զոր սպանեալ աւնուեն. եւ ծառք ուստի ծորին՝ բարակք են. սառւարն լինի որպէս լուծ, ընդ որ մտեալ ձճին ընդ տակն, երթայ ուտելով մինչև ցծայրն՝ դտանէ, եւ սպա մեռանի, եւ թափին խունգըն ի խնամոցն Աստուծոյ]»:

Եջ 41. Պարսկաստանի նկարագրութիւնից հետո. [«Լինի տասն գոհարք. Ա. աղար որ վեցդանկեան է, արժէ դրամ քառասուն. Բ. սոմիա. Գ. մէշիա. Դ. անքա. Ե. պարմուշա որ է անգոյն. Զ. պարմուշիա. Է. հաւթադրամ. Ը. շաշտադրամ. Թ. նոյնադրամ. Ժ. դասադրամաքարթա, զոր մեք անիծ կոչեմք]»:

Հետաքրքիր է, վոր Արարիայի աշխարհագրութեան մասում Սուբբյանի խմբի տեքստն ընդունել է մի ընդմիջարկութիւն, վորն ունեն նաև համառոտ տեքստի ուշ շրջանում ընդորինակված որինակները: Այդ ընդմիջարկութիւնը հետևյալն է. «Եւ աղբիւր մի, յոր աղբիւր գիքն երդնուին վասն անչափ ցրտութեան» (Եջ 39): Համառոտ «Աշխարհացոյց»-ի հնագույն ընդորինակութիւնները չունեն այս ընդմիջարկութիւնը:

Սրանով, իհարկէ, չի սահմանափակվում ընդմիջարկութիւնների քանակը: Ընդմիջարկութիւններ են ընդունել իրենց մեջ, անկասկած, մեղ չհասած «Աշխարհացոյց»-ի այն գրչագրերը, վորոնք մայր են հանդիսացել մեղ հասած գրչագրերի: Բերված ընդմիջարկութիւնները հնարավոր է լինում մատնացուց անել նույն խմբին պատկանող «Աշխարհացոյց»-ի մեղ հասած հնագույն գրչագրի համեմատութեան հիման վրա: Յույց տալու համար, թե ինչ խոշոր չափով ընդմիջարկութիւններ են ընդունում իրենց մեջ աշխարհագրական բովանդակութիւն ունեցող ձեռագրերը, մենք անհրաժեշտ ենք համարում համեմատել իրար հետ Պետ. մատ. թիվ 5613 ձեռագիրը թիվ 582 ձեռագրի հետ, վորոնք պարունակում են «Աշխարհացոյց»-ի միևնույն խմբի տեքստերը: Թիվ 5613 ձեռագիրը, մոտավորապես յերկու հարյուր տարի ուշ է ընդորինակված թիվ 582-ից: Այդ յերկու ձեռագրերի մի խմբի պատկանող մայրից արտագրվելու փաստն անկասկած է:

«Երկրորդ. Մաւրաւանիա կեա-  
ւանի սեան յեւրոյ կալով Տին-  
զոնեան տարածի ի հիւսիս(ս)ի  
հարաւ կոչս առ շեղ դիւրեքս ն  
զետս ունի ժէ, և փոքր լինս Գ, և  
լեբինս ն, քաղաքս բազում, և  
զաւառս Ին, զ(ս)դնձ փողանոցս  
էրկրին: Լինի յանս (!) Գինարա-  
սիս, այսինքն(ն) դեղ կարմիր»:

(Թիվ 582, Թերթ 183բ)

«Պերորդ. Սկիւթիա է, որ են  
Ապարարք, այսինքն թուրք, որք  
սկսանին Յաղթ (յԱթլ?) գետ(ոյ)  
մինչև ցձենս և Էմաւոն լեան»:

(Թիվ 582, Թերթ 182բ)

«Պերորդ. Ճենաստան է, յեւրոյ  
կալով Սկիւթիայ մինչև յԱնձանթ  
երկիրն: և է Ճենաստան ընդար-  
ձակ լեզ զաշտ տարածեալ... արքայն  
կոչի Ճենրակուր, որ նստի ի քա-  
ղաքին Սիոխայ, առ անձանթ երկ-  
րաւ»:

(Թիվ 582, Թերթ 183բ)

«Երկրորդ. Մաւրիտան(ի)ա է,  
կեա առնի սեան<sup>1</sup> յեւրոյ կալով  
Տինդոնեան, տարածի ի հարաւայ-  
կոչս առ ի շեղ դիւրեքս ն և գետս ունի  
ժէ, և փոքրայ լինս Գ, և լեբինս ն և  
քաղաքս բազում, և գաւառս Ին, և  
զ(ս)դինձ փողանոցս երկրին լե-  
բինս յանս (!) և ընտիր կինարա-  
սիս, այսինքն դեղ կարմիր»:

[Ծակ, որ ելանէ քամի ի հան-  
գընդոց մեծ և ահագին սրտա զոր  
լսիմք ի պարզոյ ձայն և սրտ յա-  
մանային ժամանակին»]:

(Թիվ 5613, Թերթ 285ա)

Պերորդ. Սկիւթիա է, որ են  
աբասպարք, այսինքն թուրք [որ  
է Սըմըրղանդ, վասն զի թուրքն  
և թուրք լեզուն ամէնն ի Սըմըր-  
ղանդէ տարածէր ի բոլոր աշխարս,  
վասն զի Մանձաղն արաբացի էր,  
որ է յարաբն, թուրք(ք)ն շուտով  
հաւատացին նորա կրօնքն և զաշ-  
խարս հեշտ և մարբ խրատի տի-  
րեցին և բազմացան]: և Սկիւթա-  
ցոց աշխարհ սկանի Յաղա գետոյ  
[մինչև ի Ճենաստան, որ է Պը-  
թիայիստան, որ է չին: և Էմաւոն  
լեան է բարձր և երկայն քան  
զամենայն լեռնս]:

(Թիվ 5613, Թերթ 287ա)

«Պերորդ. Ճենաստան է յե-  
ւրոյ կալով Սկիւթացոց մինչև յԱն-  
ձանթ երկիրն: և է Ճենաստան  
ընդարձակայեր զաշտ տարա-  
ծեալ... արքայն նոցա կոչի Ճենրա-  
կուր, որ նստի ի քաղաքին Սիոխայ  
(առ) անձանթ երկրաւ: [և է Ճե-  
նաստան, որ է Պըթիայիստան, որ է

չին անշափելի վայելուչ աշխարհ,  
զոր բերանովք ոչ կարէ պատմել,  
վասն զի մարդիք աշխարհին բազ-  
մայի(ե)ացք և խաղաղասէր, հաւա-  
տարիմ, արծաթ և ոսկի անբաւ և ան-  
շափելի բազմաշարած աշխարհք»]:

(Թիվ 5613, Թերթ 298)

«Պերորդ. Միւնացոցն է, առ  
երկ կալով Ճենաց, մինչև ցան-  
ձանթ երկիր»:

(Թիվ 582, Թերթ 183բ)

Պերորդ. Միւնացոցն է [որ  
ասի ծայր աշխարհիս և ըռն  
արևելք, որ ի վերոյ է քանց Պթա-  
յիստան և մաւտ է դբախտին]. սա  
է առեալ ի Ճենաց առ երկ կալով  
մինչև ցանձանթ երկիր»:

(Թիվ 5613, Թերթ 288բ)

Յեթի մենք չունենայինք «Աշխարհացոյց»-ի ավելի հնա-  
գույն գրչագիր, քան թիվ 5613 ձեռագիրն և և չկարողանայինք  
ձանաչել այդ տեքստում յեղած ընդմիջարկությունները, հավա-  
նական է, այդ ընդմիջարկությունները կովան դարձրած, պիտի  
վիճեյինք այն մասին, թե «Աշխարհացոյց»-ը XIII—XIV դարերում  
չի գրված արդյոք:

Թիվ 5613 ձեռագիրն ընդմիջարկություն ընդունելու տեսա-  
կետից մի ինչ-վոր բացառություն չեւ Մենք հատկապես նրա վրա  
կանգ առանք այն պատճառով, վոր նա արտադրված և թիվ 582  
ձեռագրի «Աշխարհացոյց»-ի խմբին պատկանող որինակից, հետևա-  
պես հեշտ է ձանաչել տեքստում յեղած ընդմիջարկությունները:  
Պետական մատենադարանում կան «Աշխարհացոյց»-ի այնպիսի  
գրչագրեր, վորոնք ընդմիջարկություն ունեն իրենց մեջ ամբողջ  
հատվածներով և գլուխներով: Հատկանշական է, վոր նախնական  
տեքստի վրա ուշ շրջանում ավելացրած հատվածների մեծ մասը  
սնտախապաշտական բնույթ ունեն: «Աշխարհացոյց»-ի հեղինակն  
իր աշխարհայացքով և մտավոր պատրաստությամբ անհամեմատ  
բարձր է կանգնած յեղել, քան նրա աշխատությունն արտագրող  
ու իրենց կազմից վորոշ հատվածներ ավելացնող ուշ շրջանի միջ-  
նադարյան նախապաշարված գրիչները:

«Աշխարհացոյց»-ի տեքստում կատարված յերկրորդ տիպի  
աղավաղումները—կրճատումներն են: Սուքրյանի տեքստի, ինչպես  
և Պետ. մատենադարանի ընտիր գրչագրերի՝ վննետ. Մխիթա-

<sup>1</sup> Հետաքրքիր և այստեղ «կեա առնի սեան», վորը «Կեսարիանա»-յի  
աղավաղումն է:

ը յանձների հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստի հետ կատարած համեմատութիւնը ցույց է տալիս, վոր նախնական բնագործը կրօնաւիճակէն բազմաթիւ հատվածներ: Վորպէսզի պարզ լինի կրօնաւիճակէն ազատ արժեքը պատմական գիտութիւն համար, մենք կրեւնք այստեղ Պետ. մատենադարանի թիւ 582 ձեռագրից Վրաստանի և Աղվանքի աշխարհագրութիւն մասը՝ Վենետ. Մխիթար յանների հրատարակած «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածները հետ համեմատելով:

Թիւ 582 գրչագիր

«Ինկերոզ. Վրխայ է, այսինքն») Վիրք, յեւրոյ կալով Եգեր առ երի Սարմատիոյ, առ Կաւկասաւ մինչև ցԱղուանից սահմանն և հայոց սահմանն առ Կուր գետով: Եւ գաւառք են ի Վիրք այսորիկ՝ Կաղարշք, Արտահանք, Ծաւշք, Չաւաղք, Սամցղի, Աճարա, Թորգով, Աթխի, Տառնիս, Մանգեղացիոր, [Քուիշափոր], Բողնափոր, Թոնդք, Կանգառք, Տաշիրք, և Աչաւ, և Գուան, Ետիսի, Քուզիթ, Կաւկիսի, Սացխումիթ, Խանիսի, [Տիւրաս, Ձմա, Բալզալէթ, Կիււէթ, Երծո, Խերի, Թիւնէթ, Մուխա, Քեթ, Չեւթ, Վեղիս, Յիխէու, Ելդա, Ծուշք, Պարուար, Մորիոր, Զորոփոր]: Եւ քաղաք վրաց Տիփիսիք, Մամշուղէ, Մսիսիթիթա, ուր սուրբ խաչն է: Ունի և բերդս և գետս [և ծովս] լի ձկամբք:

ԻՁ. Ալլիան է, այսինքն Աղուանք, յեւրոյ կալով վրաց, յեւրոյ Ս(մ)արմատիոյ առ Կաւկասաւ մինչև ի Կասբից ծով և ցհայոց սահմանն առ Կուր գետով: Եւ ունի Աղուանք գաւառ արգավանդս, և գետս բազումս, և եղեգունս հզաւրս, և քաղաքս, և բերդ, և գեղաքաղաքս: Եւ գաւառք են այսորիկ՝ Եխի, Քեխ, Քամբէճան, [Հոլմաշ], Ծաքէ, [Քեզաւու], Ոստան, [Պարանդի], Մարծ,

Վենետ. հրատ.

«Ին. Վրխա, այսինքն է Վիրք, յեւրոյ կալով Եգերայ առ Սարմատեաւ, առ Կուր գետով: Եւ գաւառք են ի Վիրք այսորիկ: Կղարշք. Արտահան, Ծաւշեղք, Չաւախք, Սամցիլի, Աճարա, Գորովաթիսի, Տառնիսիսք, Մանգեղացիոր, Քուիշափոր, Բողնոփոր, Թոնդք, Կանգառք, Տաշիր և Աչայի և Գուան, Երիսիք, Քուզիթ, Կոսի, Սացխումիթ, Խանիցի, և քաղաք Տփլիս, Ծաւշուղէ, Մցիթիթայ ուր խաչն և: Ունի գետս լի ձկամբք:

ԻՁ. Աղրանիա, այսինքն է Աղուանք, յեւրոյ կալով վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչև ցԿասբից ծովն և ցհայոց սահմանն առ Կուր գետով: Ունի գաւառ արգաւանդս, քաղաքս և բերդս և գեղաքաղաքս, գետս բազումս, եղեգունս հզորս: Եւ գաւառք են այսորիկ: Եխի, Քեխ, Քամբէճան, Ծաքէ, Ոստան, Իմարծպան, գաւառ ի Բայասական, և այլ գաւառս ի Հայոց հա-

Պանան, Քաղայ գաւառ, Իրաղական, և այլ գաւառք, զոր ի հայոց հանեալ է՝ Շակաշէն, Գարգմանք, [ուստի Փաննես,] Կողք, Աղուէ, [Թուշքատակ, Ուրոստակ, Ռոսպալակ, Մեծ Գուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հաճլանք, Պածանք, Մոխանք, Վահուիք, Փոքր Հարանք, Միսսիան, Ռոստատակ, Բերձորոս,] Աստուա, մինչև ի խառնումն Երասխայ ի Կուր գետս:

(Թիւ 582, թերթ 177բ—178ա., հմմ. Վենետ. հրատ. ծանոթութիւնը):

Տվյալ հատվածներում կատարված այս հապավումները, անկասկած, մեծ արժեք են ներկայացնում մեր յեղբայրակից Վրաստանի և Աղբրեջանի պատմութիւն համար: Նման բազմաթիւ հապավումներ կան նաև «Աշխարհացոյց»-ի մյուս հատվածներում:

Բացի ընդմիջարկութիւններից ու կատարված հապավումներից, «Աշխարհացոյց»-ում կատարվել են մեծ չափով նաև այլ տիպի աղավաղումներ ու աղճատումներ: Մենք ցանկանում ենք բերել այստեղ մի քանի որինակ այդ տիպի աղավաղումներից և ցույց տալ, թե վորքան անհրաժեշտութիւնն է այժմ «Աշխարհացոյց»-ի գիտական հրատարակութիւն կատարելը, վորի հարցը շատ ճիշտ ձևով առաջ է քաշել ակադ. Հ. Մանանդյանը: Բերված առաջին սյունյակում տալիս ենք Վենետ. Մխիթար յանների հրատարակութիւնից, իսկ յերկրորդը—Պետ. մատենադ. թիւ 582 կամ 1883 ձեռագրերից:

Վենետ. Մխիթ. տեխստով տպված է

«Արդ վասն զի անհասք գոցա եղեալ մեր յարտաքինսն հարկաւորիմք ձեռնարկել. որ ու՞մ գաշխարհադրութիւնն յարմարեցին ի ճանապարհորդութենէս...»<sup>1</sup>

(Եջ 585, տող 5—9)

<sup>1</sup> Այն բոլոր հատվածները, վորոնց վրա աստղանիշ է դրված, նրանց մասին նշումներ կան Վենետ. հրատ. ներքին լուսանցքի ծանոթագրութիւններում:

նեալ է, Շիկաշէն, Գարգման, Կողք, Չաւէ, և այլ քսան գաւառ մինչև ցխառնումն Երասխայ ի Կուր գետս:  
(Վենետ. հրատ., էջ 605—606)

Թիւ 582 և 1883 գրչագրերում

«Այս վասն զի անհասք եղեալ մեր զոցա՝ հարկաւորիմք ի յարտաքինս ձեռնարկել, որ ք գաշխարհադրութիւնն յարմարեցին ի ճանապարհորդութենէս...»

(Թիւ 1883, թերթ 145ա)

«... Դեռողորս սամէացի պամէ՛ ձեզ զհնդկաց՝ թէ ի Լիմնոսիկոնն նաւելով յերկիրն՝ ունելով զսաւառն միջերկնեայ և զպալախա ընդ մեջ Կեոէայ»:

(Եջ 586, տող 7—10)

«ԺԱ. Մակեդոնիա յելից կայով յունական պեղազոսին, աւ երի Դաղմատիոյ և Թրակիոյ, ի հարաւ թողով զԵլլադա Ունի լերինս վեց, գետս ասան, դեղս երեսուն, քաղաքս վեղասասն, ծովս վեց, կըզդիս երկուս»:

(Եջ 596, տող 12—16)

«Եւ ունի Հայք լերինս անուանիս, և գետս մեծամեծս և մանունս, և ծովակս վեց»:

(Եջ 607, տող 1—2)

«... Բարձր Հայք... Ունի և լերինս երիս, էրէս բազումս, և հաւ պիտանիս և ջերմուկս և աղս, և զամենայն պարարտութիւն, և քաղաք զԹէոդուպոլիս»:

(Եջ 607, տող 10—17)

«Տուրուբերան... Ունի և զազպէն և մեղր և մաշկամիրք, և սպիտակ նաւթ, և երկաթ»:

(Եջ 608, տող 2—3)

«ԻԸ. Ասորիք... ունի... զբունս երկուս, և վայրս ընդարձակս և բարերս»:

(Եջ 611, տող 12—13)

«Եւ է Պասրա մեծնալից վաճառք. և եկք նաւաց ի հընդկաց և յամենայն կողմանց արեւից»:

(Եջ 612, տող 6—8)

«... Դեռողորս Սամէացի պամէ՛ զհնդկաց՝ թէ Լիմնոսիկոնն նաւելով յերկիրն՝ ունելով զՏաւառն միջերկնեայ և զ(Պ)ալախա ընդ մեջ կիսեայ»:

(Զ. թ. 582, թերթ 165բ)

«ԺԱ երորդ. Մակեդոնիա յելից կայով յունական պեղազոսին աւ երի Դաղմատիա և Թրակիա ի հարաւ թողով զԵլլադա եւ ունի Մակեդոնիա լ(եր)ինս 9, և գետս Ժ, և զսաւառս Լ, քաղաքս Ժ9, ծովս 9 և կըզիս Դ»:

(Զ. թ. 582, թերթ 171բ)

Եւ ունի Հայք լերունս անուանիս և գետս մեծամեծս մատուս և ծովակս երկուս»:

(Զ. թ. 582, թերթ 178ա)

«Բարձր Հայք... Ունի և լերունս, էրէս բազումս և հաւ պիտանիս և ջերմուկս և աղս և զայլ պարարտութիւնս և քաղաք Կարնոյն»:

(Զ. թ. 582, թերթ 178բ)

«Տուրուբերան... Ունի և զազպէն մեղր և մաշկամիրք և սպիտակ, նաւթ և երկաթ»:

(Զ. թ. 1883, թերթ 153բ)

«ԻԸ. Ասորիք... ունի... զբունս երկուս և վայրս ընդարձակս և բարերս»:

(Զ. թ. 582, թերթ 180բ)

«Եւ Բասրա մեծնալից օլտղովք և եկք հաւաց Հնդկաց և համենայն կողմանց արեւիկից»:

(Զ. թ. 1883, թերթ 155ա)

«ԼԹ. Արիք, որ կոչին Քուստի Սորասանք... Լինի հրամուշկ չպէտ և ոչ ազնիւ»:

(Եջ 614, տող 10)

«Ա. Սպանիա... Բովանդակի ի նմա չորս\* աշխարհս փոքունս, որք և ունին զուստս բազումս և քաղաքս, զորս անուամբ յայտնել աշխատութիւն անշահ համարեցաք»:

(Եջ 593, տող 23—26)

«Եւ անուն արեւմտեան կըզոյն Իբեանիա, և է զարեհատած և ճղճը կէն»:

(Եջ 594, տող 3—5)

«Եւ ունի Թրակիա փոքր աշխարհս ճինդ, և մի մեծ՝ յորում են սկիւտայիս ազգը՝ քսան և ճինգ...»:

(Եջ 596, տող 7—9)

«Գ. Կիւսնականն... ունի... զանգուժաբեր երկիրն, և տեղիս ինչ նորակերպ զազանուս...»:

(Եջ 597, տող 23—25)

«Եւ ունի եգիպտոս լերինս երկուսսս, և զուրս երկուս շինուս ծոյս, և լիճս երիս ինքնեղս...»:

(Եջ 597, տող 29—31)

«... և մի այլ անանձնակ, որ Տրապոլիս անուանի»:

(Եջ 597, տող 11)

«Քանդի և յեթնէ նահանգէն դառաջինն տուեալ է հարաւային միջօրէական գծին, և զայլ ևս վիցն ի նմանէ յարջայինն կոյս...»:

(Եջ 586, տող 16—19)

«ԼԹ. Արիք են, որ կոչին Քուստի Սորասան... Լինի (ի) նոսս հրամուշկ թէ պէտք է չ, բայց ազնիւ»:

(Զ. թ. 1883, թերթ 156ա)

«Ա. Սպանիա... Երաժանի նա ի փոքր աշխարհս երիս, որք ունին զուստս բազումս և քաղաքս, զոր անուամբ յիշատակել աշխատութեամբ անշահ համարեցաք»:

(Զ. թ. 1883, թերթ 148ա)

«Անուն արեւմտեան կըզոյն Ուրաուիա, և նա է զարեհատած և ճղճը կէն»:

(Զ. թ. 1883, թերթ 148ա)

«Եւ ունի Թրակիա փոքր աշխարհս Ե, և մի մեծ՝ յորում են սկիւտայնոց ազգն իջ»:

(Զ. թ. 1883, թերթ 149ա)

«Դ. Կիւսնականն... ունի... զանգուժաբեր է երկիրն այն. և տեղի կայ նորս անապատս և զազանուս»:

(Զ. թ. 1883, թերթ 150ա)

«Եւ ունի եգիպտոս լերինս ԺԲ, զուրս Բ շինածոյս Գ ինքնեղս»:

(Զ. թ. 1883, թերթ 150ա)

«... և մի այլ անանձնակն, որ Տրապոլիս անուանի»:

(Զ. թ. 582, թերթ 172բ)

«Քանդի յեթնէ նահանգացն գմինն տուեալ է հարաւային միջօրէական գծին և զայլ ևս վիցն ի նմանէ յարջայինն կոյս...»:

(Զ. թ. 582, թերթ 165բ)

«Դ. Գերմանիա յերկը կալով Գաղ-  
ղիոյ առ հիւսիսային Ովկիանոսին  
մինչև ցարմատացոց լիբրիանսն և  
զԴանսը գետաւ»:

(Եջ 594, տող 18—20)

*Handwritten Armenian text in a cursive script, likely a manuscript or a page from a book.*

«Դ. Գերմանացոցն է, յերկը կա-  
լով Գաղղիոյ առ հիւսիսային ով-  
կիանոսիւ մինչև ցարմատացոց լի-  
բրիանսն և ցԴանսը գետաւ»:

(Չ. Թ. 1883, Թերթ 148բ)

*Handwritten Armenian text in a cursive script, likely a manuscript or a page from a book.*

Նույն հասկածը Թ. 1717 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի տեքստից

«Ունի Բիւթանիա լիբրիսն և զետս,  
կղզիս և լիճս, և մայրաքաղաքս  
երիս... որք ունին ընդ ինքեանս  
քաղաքս չորքստասան, և զեղա-  
քաղաքս ծոփեղերեայս, և  
վահապատեղս»:

(Եջ 600, տող 8—11)

«Է. Սարգոնիս... Ունի զետս հինգ,  
և լիբրիսս զծուարանունս  
և փոքունս, և ամուր տեղիս»:

(Եջ 595, տող 15—16)

«Ունի Բիւթան(իս) լիբրիսն և զետս  
և լիճս և կղզիս Ունի և մայրաքա-  
ղաք(ս) երիս... որք (ունին) ընդ  
ինքեանս քաղաքս ժԴ, և զեղա-  
քաղաքս ծոփեղերայինս վա-  
հապատեղիս (ՅՐԿՆՈՏ)»:

(Չ. Թ. 582, Թերթ 174ա)

«Է. Սաղոնիս... ունի և զետս և  
լիբրունս զծուարունս և ամուր  
տեղիս»:

(Չ. Թ. 582, Թերթ 171ա)

«Ը. Ներքին և Եթովպիա... Առ որով  
վատթարակեանք եթովպացիք... Որոց  
ըստ հիւսիսայ փրփրեղ Չիւր  
և Եթովպացիք...»:

(Եջ 599, տող 3—5)

«Եւ սոցա ի հարաւոյ աշխարհն մի  
առ անձանօթ երկրաւ, յորում է  
զազան ինչ՝ կանացի ունեւ լով  
զլուսի և ձեւս...»:

(Եջ 599, տող 12—14)

«... և ի ներքոյ սոցա մարդակեր  
եթովպացիք, յորում զազան ինչ հրա-  
շունչ վարազանման. և սաղամանդը  
զազան՝ որ նման է կովի եցի,  
անցանէ ընդ հուր և շիջուցանէ»:

(Եջ 599, տող 19—22)

«Ժ. Պամփիլիս... Լինի ի նմա  
խունկ ստիւրակ ի Թփոյ ի փո-  
րոյ ի կերուածէ ճճոյ»:

(Եջ 602, տող 2—3)

«Եւ բնակին ի Սարմատիա աղգք  
բազումք... Փուխք, Չրուանք, Պա-  
րանք...»:

(Եջ 604, տող 11—24)

«... և ունի Եգեր փոքր աշխարհս  
չորս. զՄիւնիսա, զԵսեւի,  
զՊաղիւ, զՃանիթ...»:

(Եջ 605, տող 11—12)

«Աւանդեն զԹուլիս կղզի՝ որ  
մեկն է զհիւսիսականացն և ծանու-  
ցելոյ երկրի իբրև զգետ ըստ լայ-  
նութեանն չափ վաթսուն և երեք...»:

(Եջ 585, տող 23—24)

Եջ 586, տող 1—2)

«Քանդի և յեթնէ նահանգէն  
զառաջինն՝ առեալ է հարաւային

«Ը. Ներքին և Եթովպիա է... Առ  
որով վատթարակեանք եթովպացիք...  
որոց ըստ հիւս(ի)սոյ փոքր եղ-  
ջիւրք և Եթովպացիք»:

(Չ. Թ. 1883, Թերթ 150բ)

«... ի հարաւոյ աշխարհն մի առ  
անձանօթ երկրաւ, յորում զազան  
ինչ՝ կանացի ունեւ լով ձեւս»:

(Չ. Թ. 1883, Թերթ 150բ)

«... և ի ներքոյ սոցա մարդակեր  
եթովպացիք, որ լինի առ նոսա զա-  
զան հրաշունչ վարազանման. և սա-  
ղամանդը զազան, որ նման է կո-  
վոյ, որ երթայ մտանէ և ան-  
ցանէ ի հուր և անցուցանէ զկրակն»:

(Չ. Թ. 1883, Թերթ 151ա)

«Ժերոզ. Պանփիլիս է... Լի-  
նի (ի) նմա խունկ ստիւրակ Թփոյ  
միոյ ի կերուածէ ճճոյ»:

(Չ. Թ. 582, Թերթ 175բ)

«Եւ բնակին ի Սարմատիա աղգք  
բազումք... Փուխք, Չրուանք, Պա-  
րանք...»:

(Չ. Թ. 1883, Թերթ 152բ)

«... և ունի Եգեր փոքր աշխարհս  
Դ՝ զՄառնիղիս, զԵգրեւիկի  
(Էքորդաւի), զՂաղիւ (Λαζοι)  
և զՃանիթ...»:

(Չ. Թ. 582, Թերթ 177ա)

«Աւանդեն զԹուլիս կղզի, որ  
մեկն է զհիւսիսականացն և ծանու-  
ցելոյ երկրի իբրև զգետ ըստ լայ-  
նութեանն չափ վաթսուն և երեք...»:

(Չ. Թ. 582, Թերթ 165բ)

«Քանդի յեթնէ նահանգացն  
զմինն առեալ է հարաւայ միջ-



միջօրէ ահան գծին...»

(Եջ 586, տող 16—17)

«... ի ձեռն երեկոյ առաւորաբան և սկիթառն դործարանաց...»

(Եջ 587, տող 12—13)

«... զանծանօթ երկրէ առ շրջապատեալ զընակութեամբ մարդկային բնութեանս...»

(Եջ 589, տող 22—24)

«Բայց թէ և է զանծանօթ երկրաւ ծով, կամ շուրջ զանծանօթ ծովու երկիր, մեք որպէս անհաս եղեալ մեծութեան լեմբ...»

(Եջ 590, տող 20—23)

«... և զոցա ըստ հիւսիսոյ են շորս կղզիք հանդէպ Մաւրիտանեայ, և միջոցն որ կոչի Սեփաէ...»

(Եջ 591, տող 16—18)

«Չորրորդ Հայք... Ունի բերդս և գետս և լեռքինս և բիւրեղի»

(Եջ 607, տող 20)

«Վաստուրական... ի նմա զաւտօք են... Անձեացիք, Ատրպատունիք, Երթթունիք, Մարդաստան, Արտաղ, Ակէ... ձուաշ, Ռոտակը ճուռնիք...»

(Եջ 608, տող 22—24, էջ 609, տող 1—2)

«Այրարատ... և զաւտօք են ի նմա քան... Վարաժնունիք, Ռոտանն, Դունա քաղաքն, Արածանոյ կողմն մինչև ի դաշն Շարուր»

(Եջ 610, տող 26—28)

«Վերին Եթովպիա... Ունի և զմարեր երկիրն և զինկարեր և

աւրէական գծին...»

(Ձ. Թ. 582, Թերթ 165)

«... ի ձեռն երեկոցն աստուղղորոն և զսկիթաթեառն գործականացն»

(Ձ. Թ. 1883, Թերթ 145բ)

«... Չանծանօթ երկրէ շրջապատեալ զընակութիւն մարդկային բնակութեանս...»

(Ձ. Թ. 1883, Թերթ 146ա)

«Բայց թէ և է զանծանօթ երկրաւն ծով և կամ շուրջ զանծանօթ ծովաւն երկիր՝ մեք որպէս անհաս եղեալ մտածութեան լեմբ...»

(Ձ. Թ. 1883, Թերթ 146բ)

«... և զոցա ի հիւսիսոյ են Դ կղզիք հանդէպ Մաւրիտանիոյ, և մի նեղուցն, որ կոչի Սեփաէ...»

(Ձ. Թ. 1883, Թերթ 147ա)

«Չորրորդ Հայք... Ունի Չորրորդ Հայք բերդս և գետս, (և) լեռքինս բիւրեղի»

(Ձ. Թ. 1883, Թերթ 153բ)

«Վաստուրական... ի նմա զաւտօք են՝ Անձեացիք, Ատրպատունիք, Երթթունիք, Մարդաստան, Արտաղ, Ակէ... ձուաշ յոտն, Կըրճունիք...»

(Ձ. Թ. 1883, Թերթ 147ա)

«Այրարատ... և զաւտօք են նմա... Վարաժնունիք, Ռոտանն, Դունա քաղաքն, Արածանոյ կողմն մինչև ի դաշն Շարուր»

(Ձ. Թ. 1883, Թերթ 154բ)

«Վերին Եթովպիա... (Ἡ ὕψις Αἰγυπτου Αἰθιοπία) ունի և զըմ-

դիին ամոմոնարեր զաւտօք»

(Եջ 598, տող 22—24)

«Բայց է յիտալիա և այլ աշխարհ Կորսիկա անուն ի Կիւսնոս կղզունն, շորս հարիւր մղոնաւ շրջապատելով...»

(Եջ 595, տող 7—8)

«... և ունի Ասիա փոքր աշխարհս շորս, զԼիւդիա, զԵւոզիա, զԹոյնս, զԿառիա»

(Եջ 600, տող 20—22)

«Ս. Սիւլիթիա, որք են Ապախտարք, այս էնքն թուրք...»

(Եջ 614, տող 15—16)

Կան նաև բազմաթիվ հատուկ անուններ, վորոնք ճիշտ են պահպանւած ՀիՍՏ Մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների հնագույն որինսկներում: Այսպիսի բառերից են որինսկ՝ Թանհիս (=Τάνης վոչ թե Տոնալիս), Լուկիա (=Λυκία և վոչ թե Լիկիա), Տապրոբանիա (=Ταπροβάνης և վոչ թե Տափոբանիա), Իոնեթնիա (=Ἰουβόνια և վոչ թե Իրեոնիա), Պիւսիոն-Պեդիոն (=Πυρρόν-Πεδίον և վոչ թե Պիւսոն-Պեդիոն), Նելոս (հնագույն ձեռք) և այլն:

Ինքզինքն այս աղավաղութիւններից պարզ յերևում է, վոր մեզ հասած «Աշխարհացոյց»-ի տեքստերից վոչ մեկն էլ իդեալական տեքստ չի: Նրանք զգալի փոփոխութիւններ յեն յեն թարգմանելու շրջանում, ընդորինակվել են բազմաթիվ անգամ տարբեր գրիչների կողմից, և ամեն մի գրիչ իրավունք և համարել մտցնել իր փոփոխութիւնները: Իսկ այդպիսի փոփոխութիւններ կատարվել են վոչ թե մի տեղում և հնագույն շրջանում միայն, այլ բազմաթիվ տեղերում և բոլոր ժամանակներում: Այս բոլոր աղավաղումները մտել են «Աշխարհացոյց»-ի տեքստի մեջ, արտագրվել են ավելի ուշ շրջանում իրենց համապատասխան տեղերում և շատ շուտ «Աշխարհացոյց»-ի որդանական մաս դառնալու քաղաքացիութիւն են ձեռք բերել: Հետևապես, «Աշխարհացոյց»-ի այս կամ այն անունը կամ հատվածն անվիճելի

հեղինակի դորձ համարելը և այդ մտեցմամբ «Աշխարհացոյց»-ի տեքստը քննութեան առնելը կարող է տանել սխալ յեղրակացութեան: Անհրաժեշտ է նախ զտել, դուրս հանել հետագայում մոցված բոլոր հավելումները, հնարավորութեան սահմաններում լրացնել կրճատված մասերը, ճշտել աղավաղումները և հետո միայն ուսումնասիրութեան յենթարկել «Աշխարհացոյց»-ի բուն տեքստը:

«Աշխարհացոյց»-ով զբաղվող բանասերների վորոշ մասի հիմնական թերութեանը, մեր կարծիքով, հենց այն է յեղել, վոր նրանք այդ տեսանկյունով չեն մտեցել «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրութեանը: Հետևանքը յեղել է այն, վոր յերբեմն հասարակ բանի համար սկսվել են հսկայական վեճեր, կատարվել են անչափ հնարավոր յեղրակացութեաններ, վորից, պարզ և, առժեղ և առաջին հերթին «Աշխարհացոյց»-ի հեղինակը:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ԳՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

«Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակի վերաբերյալ բանասերները հայտնել են իրարից տարբեր շորս հիմնական կարծիք: 1) Մխիթարյաններն «Աշխարհացոյց»-ը համարել են Մովսես Խորենացու աշխատութեան՝ Խորենացուն համարելով V դարի հեղինակ: 2) Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»-ը համարել է կեղծ (սուտ) Մովսեսի գործ՝ գրված IX դ. վերջերում կամ X դարի սկզբներում: 3) ակադ. Հ. Մանանդյանն «Աշխարհացոյց»-ը համարել է Խորենացու աշխատութեան՝ Խորենացուն բերելով IX դար և, վերջապես, պրոֆ. Բ. Պատկանյանն «Աշխարհացոյց»-ը համարել է Անանիա Շիրակացու գործ՝ գրված VII դարում: Ժամանակի տարբերութեանը, ինչպես տեսնում ենք, բավականին մեծ է—V-ից մինչև X դ.: «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը պարզելու նպատակով փորձենք քննել վերոհիշյալ գիտնականների յուրաքանչյուրի կողմնները: Սկսենք Սեն-Մարտենից:

Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»-ի ժամանակի և հեղինակի հարցը մանրամասն քննութեան է առել իր «Աշխարհացոյց»-ի հրատարակութեան և ֆրանսերեն թարգմանութեան առաջաբանում (տես Mémoire sur l'époque de la composition de la

Géographie, attribuée à Moïse de Khoren, II, էջ 301—317): Նա «Աշխարհացոյց»-ը, ինչպես վերևում ասացինք, համարում է կեղծ Մովսեսի գործ: Այդ կեղծ Մովսեսը, նրա կարծիքով, ապրած պիտի լինի IX դ. վերջում կամ X դարի սկզբներում: Իր աշխատութեան առաջաբանում Սեն-Մարտենը թվում է մի շարք փաստեր, վորոնք, նրա կարծիքով, թույլ չեն տալիս «Աշխարհացոյց»-ը համարել V դարում ապրող Մովսես Խորենացու գործ: Նրա բերած այդ փաստերից վորոշ մասը հիմք են տվել նրան «Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակն անգամ հասցնել մինչև X դար: «Շառլզա» գետի, Խերսոնեսի «Որիմ» և «Շաղախ»-ի հիշատակութեան փաստերը, Սեն-Մարտենի կարծիքով, X դարից առաջ հիշատակվել չէին կարող:

Սեն-Մարտենի կողմնները քննութեան են առնված մի շարք հայագետ բանասերների կողմից (Ինճիճյան, պրոֆ. Պատկանյան, ակադ. Հ. Մանանդյան և ուրիշները): Նրանք ցույց են տրվել, վոր Սեն-Մարտենի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ձեռագիրը սխալաշատ մի ձեռագիր է հանդիսացել և նրա բերած կողմնների զգալի մասը հանդիսացել են ընդմիջարկութեաններ: Կոնկրետ այդ նշված է «Շառլզա», «Որիմ» և «Շաղախ» բառերի նկատմամբ: Յեղած կասկածանքներին այսուհետ վերջ տալու համար, մենք անհրաժեշտ ենք համարում Սեն-Մարտենի կողմն հանդիսացող վերոհիշյալ յերեք հատվածները համեմատել ՀԽՍՀ մատենադարանի լավագույն գրչագրերից մեկի հետ և ցույց տալ, վոր իրոք նրանք հանդիսացել են ընդմիջարկութեաններ:

Սեն-Մարտենի հրատ.

«Գերմանիա, յելից կալով Գաղղիոյ, առ հիւսիսային Ովկիանոսիւ, մինչև ցՄարմատացոց լիւրիսան, և ցՄանք գետ, [որ է Յօզու Ռուսաց Գայ և մոտն է՝ Պոնտոս ծովն, և սա մեծ է քան զՏօնալիոյ]: Ունի Գերմանիա աղոյս եօթն...»:

(Saint-Martin, էջ 336)

«Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքունս՝ և բրիստոնէից զՔեսոնն [Որիմն, որ է] ցամաք կղզի, և ի հեթանոսաց բազումս»:

(Saint-Martin, էջ 338)

ՀԽՍՀ մատ. գրչագիր.

«Գ—Գերմանիացոցն է՝ յելից կալով Գալղիոյ առ հիւսիսային Ովկիանոսիւ մինչև ցՄարմատացոց լիւրիսան և ցՄանք գետ և ունի Գերմանիայ աղոս է...»:

(Թիվ 1883 ձեռ., թերթ 148բ)

«Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքունս և ի Գրիստոնէից զՔեսոնն ցամաք կղզի. և ի հեթանոսաց՝ բազումս...»:

(Թիվ 1883 ձեռ., թերթ 149ա)

«Չորրորդ Հայք, յերի կայ Բարձր Հայոց, և դաւառք են ի նմա ութն. Խորձէն, Հաշտեանք, Բազնատուն, Բաղանովիտք, Ծոփք, [Շաղախ], Հանձիթ, Գորեք, Գեղիկ»:

(M. Saint-Martin, էջ 360)

«Չորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց... և դաւառք են ի նմա Ը՝ Հաշտեանք, Խորձէն, Պազնատուն, Բաղանովիտ, Ծոփք, Հանձիթ, Գորեկ, Գեղիկ»:

(Թիվ 1883 ձեռ., թիւթ 153ր)

Քառակուսի չափերտները, Սեն-Մարտենի տեքստում, մենք ենք գրել ցույց տալու համար նրանց մեջ առնված բառերի ընդմիջարկութունն լինելու փաստը: Այդ ընդմիջարկութուններից առաջին յերկուսը մեկնողական բնույթ ունեն: Ուշ շրջանի ընդորինակող գրիչները՝ ցանկանալով հասկանալի դարձնել իրենց ժամանակի ընթերցողներին նախկին անունները՝ անհրաժեշտ են համարել մեկնել նրանք, ցանկանալով ասել, վոր Դանուբ գետը—գա «Յօզու ուսաց»-ն է, իսկ Խերսոնը—«Սրիմ»-ը: Վերջին ընդմիջարկութունը, ինչպես պարզվում է, լրացում է:

Հետաքրքիր է այն, վոր ՀՍՍՀ մատենադարանի հին գրչագիր «Աշխարհացոյց»-ներից վնչ մեկը չունեն վերոհիշյալ ընդմիջարկութունները: ՀՍՍՀ մատենադարանի ամենավաղ գրված գրչագիր «Աշխարհացոյց»-ը, ուր հանդիպում են մեզ այդ ընդմիջարկութունները, 1624 թ. Ստավամատուր գրչի ընդորինակած ձեռագիրն է: Մատենադարանում գտնված դրանից առաջ ընդորինակված վնչ մի ձեռագիր չունի այդ ընդմիջարկութունները:

Այսպիսով, Սեն-Մարտենի կովանները՝ «Աշխարհացոյց»-ը IX դարի վերջը կամ X դարի սկզբներում ապրող հեղինակի դործ համարելու խնդրում՝ չեն հաստատվում: Նրա՝ X դարու հասցնելու հարցում բերած կովանները բացահայտ ընդմիջարկութուններ են:

\* \*

«Աշխարհացոյց»-ի ժամանակի հարցով լուրջ զբաղվել է ակադ. Հ. Մանանդյանը: Նա՝ ի տարբերութուն այդ հարցով զբաղված այլ գիտնականներից, ուսումնասիրել է «Աշխարհացոյց»-ի վնչ թե մեկ, այլ հրատարակված բոլոր տեքստերը, և իր յեզրակացութունները, մեծ մասամբ, աշխատել և հիմնավորել նրանց համեմատական ուսումնասիրության վրա: Ցավալի յե սակայն, վոր ակադ. Հ. Մանանդյանը ծանոթ չի յեղել ՀՍՍՀ մա-

տենադարանի հնագույն գրչագիր «Աշխարհացոյց»-ների տեքստերի հետ, վորոնք մեծ չափով ոգնում են պարզելու «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ժամանակը և ոգտագործած աղբյուրները: Այդ բացի համար, անկասկած, մեղավոր է վոր թե ակադ. Հ. Մանանդյանը, այլ աղբյուրագիտությամբ զբաղվող մասնագետներն ընդհանրապես, վոր վնչ մի տեղեկութուն մինչև այժմ չեն հրատարակել մատենադարանում յեղած 36 գրչագիր «Աշխարհացոյց»-ների մասին ու չեն կազմել բանասիրության համար այնքան կարևորութուն ունեցող յերկի համեմատական տեքստը:

Ակադ. Հ. Մանանդյանը ուսումնասիրելով «Աշխարհացոյց»-ը, գլխավորապես Խորենացու ժամանակի պարզաբանման կապակցությամբ, յեկել է այն յեզրակացության, վոր «Աշխարհացոյց»-ը Խորենացու աշխատությունն է, և «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած վորոշ տվյալներ ցույց են տալիս, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը, Խորենացին, IX դարի հեղինակ է, Չաքարիա կաթողիկոսի ժամանակակից անձնավորություն: Փորձենք քննել ակադ. Հ. Մանանդյանի կովանները՝ «Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում:

1. Ակադ. Հ. Մանանդյանի յեզրակացության հիմք հանդիսացող կովաններից մեկի մասին մանրամասն խոսել է պրոֆեսոր Մարկվարտի իր Eranschahr աշխատության մեջ: Վերջինս սխալմամբ կարծել է, թե Սուբբյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստը նախնական բնագիրն է, ու քննության առնելով Խորասանի շրջանների ցուցակում հիշված «Գճակտան» անունը, յեկել է այն յեզրակացության, թե այդ անունն աղավաղվել է նա առաջարկել է այդ ուղղել «Գճակ» և «Ոստան» ձևով: Այդ նա այդ անունները հիման վրա հանել է այն յեզրակացությունը, թե այդ անունները հետ ծանոթ հեղինակը պիտի վոր ապրած լիներ 737 թվից հետո Խաղանատի և արևմտա-թուրքերի միջև այդ նույն տերիտորիայում տեղի ունեցած կովից հետո (1): Յեկ պրոֆ. Մարկվարտի բերած ահա այս յենթադրությունը հիմք է ծառայել ակադ. Հ. Մանանդյանի համար: Պրոֆ. Մարկվարտի այս յեզրակացությունը ակադ. Հ. Մանանդյանը համարում է «ուշագրավ» ու «կարևոր փաստ» «Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում:

«Աշխարհացոյց»-ի հնագույն որինակների ուսումնասիրու-

թյունից պարզվում է, վոր «Քուռտի Սորասան»-ում հիշվել են վոչ թե «Մաշան Գճակատան» շրջանները, վորոնք սխալ համարելով պրոֆ. Մարկվարտը ուղղում է «Մանսան, Գճակ, Ասան» ձևով, այլ «Ման, Շանջակատան»: «Ման»-շրջանը— դա Մանսանն է, Իստար- խու հիշած *سان من*-ը, իսկ «Շանջակատան»-ը— դա Շանջանն է,

պարսկական *شیرجان* Սեբեոսի հիշած «Զբեջան»-ը (տես «Սեբե- ոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Արմֆանի հրատարակություն, էջ 61):

Մարկվարտի յեզրակացությունը, ինչպես տեսնում ենք, չեն հիմնավորվում «Աշխարհացոյց»-ի հնագույն տեքստի տվյալնե- ցով: Մատենագրական նոր փաստերով, յիթե անգամ հակառակը պարզվեր, այսինքն հաստատվեր Մարկվարտի առաջարկած ուղ- դումը «Գճակ» և «Ասան» ձևով և այդ շրջանների թվարկումը մեզ հանդիպեր «Աշխարհացոյց»-ի «Քուռտի Սորասան»-ի շրջանների շարքում, այնուամենայնիվ, Մարկվարտի յենթադրությունը կմը- նար բռնաձիգ մի յենթադրություն, վորովհետև Մարկվարտը չի կարող վոչ մի փաստով ապացուցել, վոր այդ շրջաններն իրենց հին անուններով 737 թվից, այսինքն Սաքանատի և արևմտա- թուրքերի միջև տեղի ունեցած կռից առաջ չեյին կարող հիշա- տակվել ու 737 թվից հետո ապրող հեղինակը միայն պիտի ծա- նոթ լիներ դրան: Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանի՝ պրոֆ. Մարկվարտից վերցրած այս կովանը, հնագույն ձեռագրերի տե- քստով չի հաստատվում:

2. Վենետիկյան համեմատական հրատարակության մեջ, Յեվրոպայի աշխարհագրության բաժնում, ֆրանսիացիների մա- սին կա հետևյալ հիշատակությունը. «Գաղղիուս... Ունի քաղաքս և ազգս բազումս և հզորս, և զազգն Փռանգաց: Լինի ի նմա գոմէշ սպիտակ և սպանող» (Վենետ. հրատ. էջ 594, տող 15—18): Ակադ. Հ. Մանանդյանը հիմնված ֆրանկների մասին յեղած այս հիշա- տակության վրա, յենթադրում է, վոր ֆրանկները վորպես հզոր ազգ կարող եյին հիշատակվել IX դ. Կարլոս Մեծի ժամանակ, հետևապես «Աշխարհացոյց»-ը գրվել է այդ ժամանակ: «Ֆը- րանկները, ինչպես հայտնի յե, — գրում է ակադ. Հ. Մանան- դյանը, — արարների դեմ հաղթական կռիվներ եյին մղել Մպանիա-

յում Կարլոս Մեծի ժամանակ (768—814 թ.): Նույն այս Կար- լոս Մեծը բարեկամական հարաբերություններ է ունեցել Հարուն ալ-Ռաշիդի հետ: Հավանական է բառ այսմ, վոր «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի հենց այս ժամանակաշրջանից հետո, այսինքն՝ իններորդ դարում» (տես «Սորենացու առեղծվածի լուծումը», էջ 83):

Ֆրանկների մասին յեղած այս հիշատակությունը, մեր կար- ծիքով, ճիշտ չի մեկնաբանված ակադ. Հ. Մանանդյանի կողմից: Այդ հիշատակության մեջ վոչ թե ֆրանկներն են «հզոր» հիշատակ- ված, այլ Գալլիայի ժողովուրդներն ընդհանրապես: Այդ տեքստը պիտի հասկանալ այն ձևով, վոր Գալլիայում կան բազմաթիվ և հզոր ազգեր, Գալլիայում ապրում են նաև ֆրանկները: Ֆրանկ- ները նման ձևով են հիշատակված նաև ՀՊՄՀ մատենադարանի հնագույն «Աշխարհացոյց»-ներում: Որինակ՝ թիվ 2748 ձեռագրում կարդում ենք. «Գալլիա... Ունի քաղաքս և ազգս բազումս և հզաւրս. և զազգն Փռանգաց: Լինի ի նմա գոմէշ սպիտակ և սպանող» (թերթ 223ա): Այստեղ, ինչպես տեսնում ենք, Գալ- լիայի «հզոր» ազգերի հիշատակությունը միջակետով բաժանվում է ֆրանկների հիշատակությունից: Մատենադարանի «Աշխարհա- ցոյց»-ների վորոշ որինակներում հանդիպում ենք այնպիսի ձեա- կերպումների, յերբ «հզոր» են հիշատակված վոչ թե Գալլիայի ժողովուրդներն ընդհանրապես, կամ ֆրանկները, այլ—գոմէշնե- րը (տես 54 էջի նկարը): Այսպես, թիվ 582 ձեռագրի «Աշխարհա- ցոյց»-ում կարդում ենք. «Եւգ. Գաղղիուս... ունի և քաղաքս, և ազգս բազումս. ազգն ֆռանկ լինի նմա, և հզորս գոմէշ սպիտակ և սպանող» (տես թիվ 582, թերթ 170բ): Նախադասության այս կառուցվածքն ուղղելով ՀՊՄՀ մատենադարանի թիվ 1883 ձեռա- գրի «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածով, ստանում ենք հետևյալը. «Գաղղիուս ունի քաղաքս և ազգս բազումս և ազգն ֆռանգաց. լինի ի նմա գոմէշս հզորս, <որ է> սպիտակ և սպա- նող գաղան»: «Սպիտակ ցուլ» ասելով («Աշխարհացոյց»-ի հեղի- նակն ի նկատի յի ունեցել վայրի ցուլը, зыбр-ը): Իժվար է, ի- հարկի, համոզված պնդել թե այս նախադասություններից վոչն է նախնականը, սակայն կասկած լինել չի կարող, վոր յերկու դեպքում էլ ֆրանկները չեն, վոր «հզոր» են հիշատակված, ուս- տի և ակադ. Հ. Մանանդյանի այս կովանը ևս չի հիմնավորվում:

Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի այն որինսկը, որ Գալլիայում հիշված են  
 ինչ թե «Փրանկսկի հօգորս», այլ զգոմեչս հօգորսս:

Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի այն որինսկը, որ Գալլիայում հիշված են ինչ թե «Փրանկսկի հօգորս», այլ զգոմեչս հօգորսս:


3. Ակադ. Հ. Մանանդյանը վիճելով պրոֆ. Պատկանյանի հետ  
 արարների նվաճումների հարցի շուրջ, պնդում է, Վոր «Աշխարհ-  
 հացոյց»-ը գրելու ժամանակ արարների նվաճումների հետևան-  
 քով Առաջավոր Ասիայի վիճակում արդեն կատարվել էյին տե-  
 րիտորիալ փոփոխություններ: «Աշխարհացոյց»-ի մեջ,—ասում է  
 նա,—կան ակներև նշաններ այն փոփոխությունների, Վոր առաջ  
 էյին յեկել արարական տիրապետության ժամանակ. որինսկ՝  
 «Աշխարհացոյց»-ում հիշատակված է Բասրա քաղաքն «ամենալից  
 վաճառօք» (Մ. 612,7), Կուֆա կամ Ակոդա քաղաքը՝ իբր «բնա-  
 կեալ բանակ տաճկաց» (Տ, 38,16), «Արուաստան, որ կոչի Ասոր-  
 քեստան՝ աշխինքն Մուճղ» (=Մոսուլ, տես Մ. 613,8 և այլն)  
 (տես «Աոր. տեղգովածի լուծումը», էջ 78—79):

Ակադ. Հ. Մանանդյանի բերած այս կովանները նույնպես  
 մատենադարանի հնագույն «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրու-  
 թյամբ չեն հաստատվում: Ամենից առաջ պարզվում է, Վոր Բաս-  
 րա քաղաքը հիշատակված է յեղել վնչ թե «ամենալից վաճառօք»,  
 այլ «ամենալից պողովք»: Այսպես, թիվ 1883 ձեռագրի «Աշխար-  
 հացոյց»-ում գրված է. «եւ է Բասրա ամենալից պողովք» (Թերթ  
 155ա): Ուրեմն Բասրա քաղաքը Վորպես վաճառատեղի «Աշխար-  
 հացոյց»-ում չի հիշատակվել, հետևապես ակադ. Հ. Մանանդյանի  
 այս կովանը ևս չի հիմնավորվում:

Սուբբյանի տեքստից բերված հիշատակությունների վրա  
 մենք կանգ չենք առնի, Վորովհետև չկան այնտեղ այնպիսի փաս-  
 տեր, Վորոնք VII դարի յերկրորդ կեսից ուշ շրջան բերելու փաս-  
 տեր հանդիսանային: Ինչ վերաբերում է Ասորքեստանի «Մուճղ»  
 կոչվելուն, մենք կարծում ենք, այս ևս ընդմիջարկություն պիտի  
 լինի: Նախնական տեքստում, հավանական է, յեղել է «Արուաս-  
 տան, Վոր կոչի Ասորքեստան», իսկ հետագայում ընդորինակող գը-  
 րիչը ցանկանալով մեկնել աշխարհադրական հին անունը նորով,  
 ավելացրել է իր ժամանակի անունը—«Արուաստան, որ կոչի Ասոր-  
 քեստան՝ [այս ինքն Մուճղ]»:

4. Ակադ. Հ. Մանանդյանը ցանկանալով ապացուցել «Աշ-  
 խարհացոյց»-ի արարական շրջանում գրվելը, բերում է մի շարք  
 բառեր, Վորոնք, յենթադրում է, թե արաբերեն բառեր են և ապա-  
 ցուցում են այն մասին, Վոր «Աշխարհացոյց»-ը գրվել է այն  
 ժամանակ, յերբ Հայաստանը նվաճվել էր արաբների կողմից և

արարական լեզվական կուրսերան կարողացել էր թողնել իր ազդեցութիւնը: Նա թվում է հետևյալ բառերը՝ «Աղխունա» (V. 612, 26), «Իհունադունար» (V. 612); «Մաղապ» (V. 612, 25. S. 39, 29), «Երալասան» (V. 612, 27) (տես «Թորհնացու անեղծ. լուծումը», էջ 82):



Մատենադարանի ընտիր «Աշխարհացոյց»-ի տեքստի այն էջը, ուր Բատրան հիշատակված է վոչ թե ամենալից վաճառոր, այլ ամենալից պողովը:

Ակադ. Հ. Մանանդյանի բերված այդ բառերի ըննութիւնից պարզվում է, վոր դրանցից վոչ մեկն էլ արարական բառ չէ: «Մաղապ» բառը (հնագույն ձևով «Մալապ») — դա հունական *μαλάβαθρον*-ն է (տես Патканов, Арм. География, стр. 57): «Բալասան»-ը — *βαλαραμον*-ն է (տես Патканов, Арм. география, стр. 57): Ինչ վերաբերում է «Աղխունա» և «Իհունադունար» բառերին, ապա դրանք անանձին բառեր չեն, այլ յերկրորդը առաջինի աղավաղված ձևն է (տես Վենետիկյան հրատարակութեան «Աշխարհացոյց»-ի էջ 612) և նրանց ճիշտ նշանակութիւնը կամ ինչ լեզվով լինելը պարզված չէ: Պատկանյանը և այլ բանասերներ կարծում էյին, թե այդ բառը աղավաղված է «Ախունա» բառից, սակայն մեր ստուգումից պարզվեց, վոր հին «Աշխարհացոյց»-ներում գործ է ածված դարձյալ նախկին «ալխունա» ձևով, վորը, կարծում ենք, արարական չէ: Այսպիսով, պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստից ակադ. Հ. Մանանդյանի կողմից մատնացույց արված բառերից վոչ մեկն էլ արարերեն չէ ու «Աշխարհացոյց»-ն ուշ շրջան բերելու հարցում նրան արդու-մենտ ծառայել չեն կարող:

5. Վերջապես, մի այլ կտրկոր փաստ, վորը կովան է հանդիսացել ակադ. Հ. Մանանդյանին «Աշխարհացոյց»-ի ժամանակը վորոշելու հարցում — դա Բատրա և Ակողա քաղաքների հիշատակութիւնն է «Մղոնաչափը»-ում:

Հնագույն «Աշխարհացոյց»-ներին կից պահված «Մղոնաչափը»-երի ուսումնասիրութիւնից պարզվում է սակայն, վոր Բատրա և Ակողա քաղաքների հիշատակութիւնն ընդմիջարկութիւն է: Այդ շատ պարզ յերևում է հատկապես ՀԽՍՀ մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Մղոնաչափը»-ից, վորի վրա դեռ մենք կանգ կառնենք իր տեղում: Ակադ. Հ. Մանանդյանի՝ ՀԽՍՀ մատենադարանից ստացած 971 թվի գրչութեամբ «Մղոնաչափը»-ը հնայած ՀԽՍՀ մատենադարանի հնագույն գրչագրերից է, բայց խմբագրված տեքստ է: Այդ տեքստում ավելացվել են արարական շրջանում գործող առևտրական մագիստրալի այնպիսի նոր ուղղութիւններ, վորոնք չեն յեղել հում և նշված չեն յեղել նախնական տեքստում:

Այսպիսով, ըննութիւնը պարզում է, վոր «Աշխարհացոյց»-ն IX դ. յերկրորդ կիսում գրելու վերաբերյալ ակադ. Հ. Մանանդյանի մեջ բերած կովանները չեն հիմնավորվում:

Հարց և առաջ գալիս, ապա յե՛րբ և գրվել «Աշխարհացոյց»-ը: Չի կարելի արդո՞ք դա հինգերորդ դարի աշխատութեան համարել, ինչպես ընդունված և յեղել վենետիկցիների կողմից: Մտնենադարանի ձեռագրերի ուսումնասիրութեանից պարզվում և, վոր վնչ, «Աշխարհացոյց»-ը 5-րդ դարի աշխատութեան չի կարելի համարել: «Աշխարհացոյց»-ի հնագույն օրինակների տեքստում անգամ կան մի շարք այնպիսի փաստեր, վորոնք ցույց են տալիս, վոր «Աշխարհացոյց»-ը գրվել և ուշ շրջանում: Գլխավոր փաստը, վոր մատնացույց և արել պրոֆ. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի V դարից հետո գրելու վերաբերյալ, — դա «Աշխարհացոյց»-ի առաջաբանում, նրա հեղինակի կողմից յերկու տեղ, Կոստանդին Անտիոքացու «Քրիստոնեական տեղագրութեան» աշխատութեանից վորպես աղբյուր ոգտվելու փաստն և: «Եւ ոչ միայն զայրեցեալ գօտեաւն ասին զՈվկիանոս, այլ և զամենեայն իտէ երկրաւ շուրջ գոլ. զոր և Կոստանդինոս Անտիոքացի ի Քրիստոնէական տեղագրութեան ասէ յազազս տապանին անցանելոյ յարևելեան երկրէն առ մեղի մէջս կոյս» (Վենետ. հրատ., էջ 589): Մեզ հայտնի յե, վոր հեղինակի հիշատակած Կոստանդին Անտիոքացին (Косьма Индикоплевст) ապրել և VI դարում. պարզ և, վոր V դարում ապրած հեղինակը չէր կարող վորպես աղբյուր ոգտագործել VI դարում ապրած հեղինակի աշխատութեան:

«Աշխարհացոյց»-ի տեքստում Արևմտյան Հայաստանը հիշվում և բաժանված չորս մասի — Առաջին Հայք, Յերկրորդ Հայք, Յերրորդ Հայք և Չորրորդ Հայք: Այդ բաժանումը, ինչպես հայտնի յե, կատարված և VI դարի կեսերում Հուստինիանոս կայսեր կողմից: Պարզ և, վոր V դարում ապրած հեղինակը չէր կարող ծանոթ լինել և իր աշխատութեան մեջ արձանագրել այդ բաժանումը:

«Աշխարհացոյց»-ի տեքստում, Արևելքը նկարագրելիս, հեղինակն արաբներին հանդիստ ընակեցնում և իրենց յերկրում, իրարից դեռ անջատված վիճակում գտնվող յերեք Արաբիաներում՝ նշելով այդ Արաբիաների յուրաքանչյուրի սահմանը. «Է. Ապառաժ Արաբիա յեղից կալով Եգիպտոսի և արևմտեան ճղիւ Կարմիր ծովուն՝ ընդ որ անցն Իսրայէլ, յերի կալով Ասորուց և

Հրէաստանի» (Վենետ. հրատ., էջ 611), «Է. Անապատ Արաբիայերի կայ միջագետաց ըստ հիւսիսոյ, յեղից կալով ապառաժ Արաբիոյ և ի մտից Խուժաստանի» (Վենետ. հրատ., էջ 612), «Է. Երջանիկն Արաբիա յերի կալով անապատ և ապառաժ Արաբիոյ՝ մտանէ ընդ մէջ խորշից Կարմիր ծովուն որպէս ցամաք կղզի» (Վենետ. հրատ., էջ 612): Հայաստանի և Մերձավոր Արևելքի շրջանները «Աշխարհացոյց»-ում նկարագրվում են նախաարաբական վարչական բաժանմամբ: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, պարզ և, վոր չի տեսել արաբական նվաճումները, ավելի ճիշտ, նա ապրել և այն ժամանակ, յերբ արաբները նոր ելին դուրս յեկել իրենց յերկրից և նրանց գերիշխանութեանը հաստատուն հիմքեր դեռ չէր ստեղծել, դեռ մնում էր նախկին բաժանումը:

«Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում մենք անհրաժեշտ ենք համարում բանասերների ուշադրութեանը հրավիրել մի կարևոր փաստի վրա, վորը, մեր կարծիքով, Եյական նշանակութեան ունի «Աշխարհացոյց»-ը գրելու ժամանակի պարզման հարցում — դա Ղեվոնդ պատմիչի «Աշխարհացոյց»-ից ոգտվելու փաստն և: Ղեվոնդի պատմութեան մեջ կան հատվածներ, վորոնք պարզ ցույց են տալիս, վոր նա ոգտվել և «Աշխարհացոյց»-ից: Ղեվոնդի «Աշխարհացոյց»-ից ոգտվելու այս փաստն ակնբախ և հատկապես «ԷԱ» (31) գլխում: Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ Ղեվոնդի պատմութեանից ու «Աշխարհացոյց»-ից համապատասխան այդ հատվածներն ու համեմատել իրար: «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած շրջանների անունները մենք շատ աննշան փոփոխութեամբ դասավորում ենք այն կարգով, ինչպես Ղեվոնդի պատմութեան մեջ և:

Թիվ 582 ձեռագիր

«... եւ Թագաւորն հիւսիսոյ է Սա-  
կանն, որ է Սաղբաց տէր, և Դշխոյն  
Թագունի է Սաթուն, որ է կին Սա-  
կանայ...»

ԻՉ. Աղբիւն է, այսինքն Աղու-  
անք... ունի Աղուանք՝ Բաղաց, Ոս-  
տան, Մարծ, Պանան, Սաբանդի, Գե-

Ղեվոնդի պատմութեանից

«...ենդիտ յղէր դեսպան առ արքայն  
հիւսիսոյ, որում Սաբանն կոչէին... եւ  
հաւանեալ արքայն Սաղբաց՝ տայր  
զքոյրն իւր նմա կնութեան, որում  
անունն էր Սաթուն...»

...անունին բաղում գաւառս զԼեջար,  
զԲաղա, զՈստանի, զՄարդպանեան,  
զՍաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ-

գաւու Շարէ, Բեխ, Եխնի, Քամբէ-  
ճան, Հոգմազ, դաշտն Իբրաղական:

զՅեհնի, զԿամբէխճան, զՅոզմազ Այ  
գաւառք աշխարհին Աղու անից: Առին  
և զցանկալի, դաշտն Բաղարական...:

և և գաւառք են ի Վերս աշտ-  
քիկ՝ Շուշք, Քուէշփոր, Չեւթ, Ծու-  
փա, Քեթ, Վեղիս Յիխէքու, Թխանէթ,  
Խերկ:

«...Առին և յաշխարհէ իշխանու-  
թեանն Վրաց գուռաս ևօթն, զՇուշք,  
զՔուէշփոր, զՉեւթ, զԾուքէթ,  
զՎեղիսցիսէ, զԹխանէթ և զԵրկ»:

(№ 528 թերթ 177ր)

(Ղեվոնդ, Էջ 131—132):

Տարբերությունները, ինչպես տեսնում ենք, աննշան են.

Քաղաք—Քաղա  
Ոստան—Ոստանի  
Մարծ, Պանան—Մարզպանեան  
Սարանդի—Հարանդ  
Գեղաւու—Գեղաւու  
Շարէ—Շարէ  
Բեխ—Բեխ  
Եխնի—Յեհնի  
Քամբէճան—Կամբէխճան  
Հոգմազ—Յոզմազ

դաշտն Իբրաղական — դաշտն  
Բաղասական  
Շուշք—Շուշք  
Քուէշփոր—Քուէշփոր  
Չեւթ—Չեւթ  
Ծուքա Քեթ—Ծուքէթ  
Վեղիս Յիխէքու—Վեղիսցիսէ  
Թխանէթ—Թխանէթ  
Խերկ—Երկ:

Նկատվող տարբերությունները զրչական բնույթ ունեն:  
Իբրաղական նման ազավաղուսները սովորական փաստ են բոլոր հնա-  
գույն ձեռագրերում, լինեն այդ հին հայկական, հունական, արա-  
բական, թե ուրիշ մեկը: Վերև բերված բառերի համեմատություն-  
նից պարզ յերևում է, Վոր Ղեվոնդն ոգտվել է «Աշխարհացոյց»-ից:  
Ղեվոնդի «Աշխարհացոյց»-ից ոգտվելու փաստն այնքան է ակն-  
բախ, Վոր մենք ավելորդ ենք համարում բերել Ղեվոնդի պատ-  
մության մեջ ոգտագործած «Աշխարհացոյց»-ի մյուս հատվածները:  
Ղեվոնդի «Աշխարհացոյց»-ից ոգտվելու այս փաստը պարզ  
վկայում է, Վոր Ղեվոնդի ժամանակ «Աշխարհացոյց»-ն արդեն  
գրած, պատրաստ մի աշխատություն էր, այլապես Ղեվոնդը  
չեր կարող ոգտվել նրանից: Մեզ հայտնի չէ, Վոր Ղե-  
վոնդն իր պատմությունը գրել է Բագրատունիների նշանավոր  
իշխանի, Շապուհի պատվերով (8-րդ դարի յերկրորդ կիսում), պարզ  
է ուրեմն, Վոր «Աշխարհացոյց»-ը 8-րդ դարից ուշ գրված լինել

չեր կարող. այս փաստը միանգամայն հերքում է Սորենացուն,  
ինչպես և «Աշխարհացոյց»-ի հեղինակի 8-րդ դարից ուշ բերող  
բանասերների բոլոր կովանները: Պարզ է դառնում, Վոր Ղեվոն-  
դի ժամանակ (8-րդ դարի յերկրորդ կիսում) «Աշխարհացոյց»-ն  
արդեն գրված էր և Ղեվոնդն ոգտվել է այդ աշխատությունից:

Վերև բերված փաստերը մեզ հաստատուն հիմք են տալիս  
պնդելու, Վոր «Աշխարհացոյց»-ը գրված է VII դարում, Հայաս-  
տանն արաբներից դեռ չնվաճված ժամանակ:

«ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՅՅՎ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻԻՆ  
ՀԱՅՈՅ»-Ի ԲՆՈՐՈՇ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ը Սորենացուն վերագրող բանասերների  
մոտ ուշադրության հատուկ առարկա չեն հանդիսացել «Աշխար-  
հացոյց»-ի և Սորենացու «Պատմութեան» տեքստերում նկատվող  
վորոշ բառերի և դարձվածքների նմանությունները: Իրա վրա  
հատկապես ծանրացել է ակադ. Հ. Մանանդյանն իր «Սորենացու  
առեղծվածի լուծումը» աշխատության մեջ: Նա քննելով Սորենա-  
ցու «Պատմութեան» և «Աշխարհացոյց»-ի տեքստերում գործած-  
ված լեզվի ու շարադրման ձևի վորոշ առանձնահատկություններ,  
յեկել է հետևյալ յեզրակացության. «Սորենացին իբրև պատմա-  
գիր ունի, ինչպես հայտնի չէ, հետաքրքիր առանձնահատկու-  
թյուններ, վորոնցից գուրկ են մյուս հայ պատմագիրները: Սո-  
րենացին հիշում ու քննադատում է, սովորաբար, իր գործածած  
աղբյուրները: Պատմական անցքեր նկարագրելիս նա անտար-  
բեր արձանագրող չէ, այլ նաև այդ անցքերը լուսաբանող ու  
գնահատող» (Էջ 67): Ակադ. Հ. Մանանդյանն այնուհետև թվում է  
այն բոլոր դարձվածքները, վորոնք հատուկ է նա համարում  
վերև հիշված Սորենացուն և համոզված հայտարարում, Վոր զրանք  
«գրեթե չեն հանդիպում մյուս մատենագիրների մոտ» (Էջ 68): Այդ  
նմանություններն ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով այնքան  
կարևոր են և ծանրակշիռ «Աշխարհացոյց»-ը Սորենացու հեղինա-  
կությանը պատկանելու հարցում, Վոր իր կատարած համեմատու-  
թյունից հետո «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցը նա համարում  
է վերջնականապես լուծված. «Արդ՝ նոր այս դիտողություններն  
այնքան կարևոր են և ծանրակշիռ, Վոր կարող ենք, ինձ թվում



և, «Աշխարհացոյց»-ի հեղինակի խնդիրը համարել վերջնականապես պարզված: «Աշխարհացոյց»-ի հեղինակն է, անտարակուշ, Մովսես Խորենացին, և վենետիկի Մխիթարյաններն այդ կետում կատարելապես իրավացի չեն» (Եջ 74):

Հեղինակի վորոշման խնդրում, անկասկած, վորոշ նշանակութուն ունեն բառերի և դարձվածքների նմանութունները: Բառեր ու դարձվածքներ կան, վորոնք հատուկ են այս կամ այն դարաշրջանին և այդ դարաշրջանում ապրող առանձին հեղինակներին: Անհրաժեշտ է, անպայման, ուսումնասիրութեան մեջ ողտագործել լեզվական համեմատութեան ավյալները: Նրանք խորը հասկացում են մեզ պարզելու ուսումնասիրվող աշխատութեան հեղինակին: Սակայն լեզվական ուսումնասիրութեան իրենց ստացած ավյալները, մեր կարծիքով, անպայման պիտի կապակցվեն մատենագրական կոնկրետ հիշատակութեան հետ, կամ, գոնե, հիմնավորվեն կողմնակի փաստերով, այլապես լեզվական ուսումնասիրութեան իրենց հանված յեզրակացութեանները կարող են միակողմանի լինել: Լեզվական ուսումնասիրութեան կատարելու ժամանակ չպիտի մոռանալ նաև մի կարևոր հանգամանք, վոր հնագույն շրջանում գրված մի շարք աշխատութեաններ, վորոնց թվում նաև «Աշխարհացոյց»-ը, գործ են անում վորպես դասագրքեր, նրանց վրա դաստիարակվել և մի ամբողջ սերունդ, ստեղծվել է շկոյա, և միանգամայն հնարավոր էր, վոր այդ շկոյաով անցած այս կամ այն անձնավորութեան ճիշտ նման բառերով ու դարձվածքներով կրկներ իր ուսուցչին: Չպիտի մոռանալ նաև այն հանգամանքը, վոր հնագույն շրջանից մեզ հասած հայկական մատենագրերի մեծ մասը խմբագրման/ե յենթարկվել ուշ միջնադարում ժամանակակից սոցիալական պատվերի ու պահանջի համաձայն: Այդ յերևում է՝ կորյունի, Ծիրակացու, Սոկրատի և այլ հեղինակների տեքստերից: Ուշ շրջանում ընդգործակող կամ խմբագրող հեղինակն իր բառերով ու դարձվածքներով ուղղումներ է մտցրել հաճախ համանման կամ տարբեր մի շարք աշխատութեաններում, այնպես վոր, առանձին բառերի և դարձվածքների հիման վրա հանած յեզրակացութեանները, վորոշ զեպրում, կարող են խաբուսիկ լինել: Հայկական մատենագրութեամբ գրադավոր վորոշ ուսումնասիրողների հիմնական սխալը, մեր կարծիքով,

հենց կայացել է նրանում, վոր նրանք իրենց յեզրակացութեաններին ծանրութեան կենտրոնը դարձրել են հենց լեզվական փորձալ նմանութեանները, վորոնք, անկասկած, պիտի բերեյին և բերել են նրանց սխալ յեզրակացութեաններին: Մենք այստեղ նպատակ չունենք քննութեան առնել «Աշխարհացոյցի»-ի և Խորենացու բառապաշարը—դա մասնագիտական այլ թեմայի հարց է, սակայն ցույց տալու համար լեզվական նմանութեանների հիման վրա «Աշխարհացոյց»-ի հեղինակի պարզման մեթոդի սխալ լինելը, ցանկանում ենք մի քանի խոսք ասել այդ մասին և ցույց տալ, վոր բանասիրութեան կողմից «Աշխարհացոյց»-ի տեքստում մատնացույց արված դարձվածքները բոլորովին էլ ընտրող չեն միայն Խորենացուն, այլ վոր այդ բոլոր դարձվածքները, առանց բացառութեան, գործ են անում նաև Անանիա Ծիրակացու կողմից:

«Աշխարհացոյց»-ի և Խորենացու «Պատմութեան» տեքստերում բանասիրութեան մեջ մատնացույց են արված հետևյալ բառերը՝ «գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ճշմարիտ է», «ասեմ», «գրեմ» և «սկսայց»: Չերկարացնելու համար, մենք չենք բերի Խորենացու «Պատմութեան» համապատասխան հատվածները,—հետաքրքրվողն այդ կարող է գտնել ակադ. Հ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատութեան մեջ, այլ կհամեմատենք «Աշխարհացոյց»-ում մատնացույց արված «ընտրող դարձվածքները» Անանիա Ծիրակացու համապատասխան այն հատվածների հետ, վորոնք հանդիպում են մեզ նրա աշխատութեաններին մեջ.—

«Ինտեմ»:—

«Ասեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս յեփրատ, որ հաւաստի գիտեմք, կենդանի քարքաշամ զուգեալ...»

(S., էջ 31, տող 27—30)

«Չայս երկու զետս գիտեմ Միլագետաց Ասորոց...»

(S., էջ 37, տող. 17.

հմմ. նաև S., 37/32, S., 42/25)

«Գիտեմ սակաւսի Յունաց որք զայդ տօնէին մինչև ի Յուստ(ին)անոս թագաւոր...»

(Ծիր. Յայտ. ճառը, էջ 13)

«...երանելոսցն ասեմ Բարդի և Գրիգորի Անձխանձու. գիտեմ զտա սուրբ...»

(Ծիր. Յայտ. ճառը, էջ 9.

հմմ. նաև Ծիր. զատիկ ճառը, էջ 23)

«Կարծեմ»։—

«... ասեն թէ գնաց Չոսիմոս միայնակեացն. բայց կարծեմ թէ դրոյցն այլաբանութիւն է...»։

(S., էջ 20, տ. 14—15)

«Բայց կարծեմ զայս վտակ, որ այժմ Բուժայտ անուանի, սա կոչել Արիւթեանայ...»։

(S., էջ 38, տ. 17—18. Հմմ. նակ ծ. 12/7, 22, 8/24, 19/16, 37/13)

«Ինձ բուի»։—

«... գետն Մառգիւ ի Մարգանի աշխարհի, որ ի նձ թուի՝ Մըւ և Մըվառա»։

(S., էջ 12, տ. 15—16)

«Եւ ասառածային գիրն գամեանայն Արեաց աշխարհն Պարթեւք կոչէ. ինձ թուի վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ»։

(S., էջ 41, տ. 32—35

հմմ. նակ S. 18/8, S. 42/10)

«Հաւանեալ եմ», «հաւատամ»։

«Եւ յաղազս միջոցի աշխարհի բնակութեան մարդկան, Պողոմէոս ասէ զԵրջանիկն Արարիտ... Բայց ոչ հաւանի մ...»։

(S., էջ 13, տ. 10—13)

«Այլ հաւանեալ եմ Պողոմէոս վաստութեանն...»։

(V., էջ 590, տ. 7—8)

«... բայց ես ոչ հաւատամ...»։

(V., էջ 592, տ. 24—28.

Հմմ. նակ S, 11/1, 13/12)

«... յումէ՞ այնչափ բիւրք լուսաւորեալք. կարծեմ թէ և ոչ ի սրբոյն Պաւղոսէ»։

(Շիր. Յայտ. ճառք, էջ 7)

«Բայց ես կարծեմ զսա վեհագոյն քան զառաջիկան, որպէս ամենեցուն յայտնի է...»։

(Շիր. Յայտ. ճառք, էջ 7.

հմմ. նակ Շիր. «Յղ. երկրի», էջ 38)

«Այս են անմտութիւնք մեծ, և աւելի թուի ինձ ի սոցանէ ասացեալքն...»։

(Շիր. «Յաղազս երկրի», էջ 39)

«Եւ եթէ որ կամեցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել... ինձ ի դէպ թուի ասացեալն իբրև զձու...»։

(Շիր. «Յաղազս երկրի», էջ 38.

հմմ. նակ Շիր. Յայտ. ճառք, էջ 11)

«Արդ թէպէտ և արտաքինքն յաղազս երկրի այսպէս ասացին... թէպէտ և սակաւիկ ինչ մաքրագոյն, բայց ես ոչ հաւանի մ նոցա...»։

(Շիր. «Յաղազս երկրի», էջ 38)

«Արդ թէպէտ և հողերք են և սորթ, սակայն ես հաւանեալ եմ ... միտքանելոց»։

(Շիր. «Յաղազս արեգական» էջ 55)

«... ես հաւատամ Սաղմոսին որ ասէ...»։

(Շիր. «Յաղազս երկրի» էջ 40.

հմմ. նակ Շիր. էջ 22, 37, 39, 10)

«Է նշմարիտ»։—

«... զկասրիականն՝ որ է վրկանին ծով, և երկիր բնակութիւն մարդկան ասէ շուրջ լինել զնոքօք. և է ճշմարիտ»։

(V., էջ 589, տ. 25—28)

«Ասեմ»։—

«Բայց ասեմ թէ ըստ զիպուածոյ անցանէ անդ պատկուճ հաւորում ոչ հաւատացաք...»։

(S., էջ 39, տ. 24—25

հմմ. նակ S. 23/9, 37/12, 17, 41/26)

«Գրեմ»։—

«... մեք որպէս անհաս եղեալ մեծութեան լսեմք, և գրեմք զայս միայն զոր կոխեաց օտն կամ ետեսակն մարդոյ»։

(V., էջ 590, տ. 23—26)

«Եւ մեք հայեցեալ ի հեռասանէ չկարացեալք ճշմարտությամք ի վերայ իրացն հասանել հաստատութեամք, աստեղ թափելոյ նշան ասեմք... որ է ճշմարիտ»։

(Շիր. «Առ խոստաց.» ձեռ. ՀՊՄՀ Պետ. մատ. № 2762, էջ 145)

«Արդ՝ ես այսպէս ասեմ՝ թէ քաղղէացիք ոչ միայն վասն մեղացն օտն պատիժս... այլ և վասն այնոցիկ, որ զկնի նոցա լինելիցին...»։

(Շիր. «Առ խոստաց.» ձեռ. ՀՊՄՀ Պետ. մատ. № 2180, թիւք 490ա; Հմմ. նակ նույն աշխատության վերջին գլուխք)։

«Գրեմ ձեզ և խրատականս, յորժամ ի կերտակուրս և շքմբելիս դուարձանայք...»։

(Շիր. «Նորիսձականք», տես իմ «Շիրակացու թվար. դասագիրք»-ը, հրատ. Յերեմ. պետ. համալսարանի)։

Դեպի առասպելները և իր ողտազործած աղբյուրները քննադատական վերաբերմունք ունի վնչ միայն Նորինացին, այլ և Շիրակացին։ Դրանում համոզվելու համար անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի փաստեր։

Շիրակացին տիեզերագիտական բովանդակություն ունեցող իր «Առ խոստացեալն» աշխատության «Յաղազս երկնային զարդուց» գլխում, խոսելով քաղղեյական զրույցների մասին, քննադատում և նրանց ու զայրացած բացականչում. «Եւ ես զարմանամ թէ զիմարդ այնպիսի դատարկացեալք զործոյ են՝ միշտ զհետ անտեսաց առանց ամօթոյ և պատկառութեան» (ՀՊՄՀ Մատ. ձ. թ. 2180, թ. 493ա)։

Շիրակացին խոսելով «կաթին ծրի» մասին և մեջ բերելով

տարածված լեզենդաներից մի քանիսը, խորհուրդ է տալիս իր ընթերցողներին չլսել նման լեզենդաներ. «Թողէ՛ք ի բաց զայդ ով աստուածասէր լսողք, և մի զայդպիսի բան լսէ՛ք...» (Շիր. «Յաղագս Կաթին ծրոյ», էջ 48):

Շիրակացին խոսելով ծովի ջրի մասին ու բերելով մի շարք որինակներ, չի համաձայնում «արտաքին» կոչված գիտնականների տեսութան հետ, չնայած նրանց բերած որինակները հավանական են յերևում Շիրակացուն. «Արդ թէպէտև օրինակս հաւանականս տան արտաքինքն, սակայն ինձ ոչ է հաճոյ»... (Շիր. «Յաղ. ծովու», էջ 42):

Մի այլ տեղ Շիրակացին նորից կանգ առնելով «արտաքին» գիտնականների տեսությունների վրա, դրանք համարում է ծաղրի արժանի տեսություններ. «Թէպէտ և չարաց փիլիսոփայիցն ոչ թուեցան հաճոյ, քանզի կէսքն ի նոցանէ երկին բազում և աշխարհս անհամար ասացին... Բայց ինձ արդարև ծաղու և եպիբանաց արժանի թուին»... (տես Շիր. ՀՍՍՀ Պատ. մատ. ձև. թիվ 2762, էջ 106):

Յեւ, վերջապես, ճիշտ չե, թե Սորենացին և միայն, վոր հատուկ ուշադրություն է դարձրել առասպելների վրա: Հանրաժանութ և Շիրակացու «Կաթին ծրոյ» գլխում հունական, քաղղիյական և հայկական առասպելները հիշատակելու փաստը:

Գաղղիյական առասպելների վրա Շիրակացին չերկար կանգ է առել հատկապես իր տիեզերագիտական բովանդակություն ունեցող աշխատության՝ «Յաղագս երկնային զարդուց» գլխում: Շիրակացու բերած այդ դրույցները, դժբախտաբար, պրոֆ. Պատկանյանի հրատարակած ձեռագրի տեքստում անդամահատվել է: Դա իր ծավալով մոտ կես մամուլ նյութ է և տեղավորված է յեղև Պատկանյանի հրատարակած տեքստի 43-երորդ էջի «աշխատութիւն անշահ համարիմ» նախադասությունից հետո: Շիրակացին այդտեղ սպանիչ քննադատության և յինթարկում քաղղիյական դրույցները (տես ՀՍՍՀ մատ. ձ. թ. 2180, «Յաղագս երկնային զարդուց»):

«Աշխարհացոյց»-ը Սորենացու աշխատությունը հանդիսանալու առթիվ ակադ. Հ. Մանանդյանը մատնացուց է անում մի այլ փաստ — «Աշխարհացոյց»-ի և Սորենացու «Պատմութեան» տեքստերի բաժանումը ըստ «հատած»-ների: Նա յենթադրում է, վոր Սորենացու «Պատմութեան» II և III մասերը ևս կոչվել են

վնչ թե «գրքեր», այլ «հատած»-ներ, ինչպես «Աշխարհացոյց»-ի տեքստում է «Աշխարհագիր. հատած երկրորդ» (V, էջ 590), «Լիբրիա. երկրորդ հատած աշխարհիս» (S, 18), «կատարեցաւ երկրորդ հատածն» (S, 21): Ակադ. Հ. Մանանդյանը տեքստերի նման բաժանումը հատուկ է համարում միայն Սորենացուն և արտասովոր փաստ՝ մատենագրական մյուս հին յերկերում. «Արդ՝ ուշագրավ և առանձնապես, վոր խորթ ու արտասովոր նույն «հատած» վերնագիրը, վոր չեն հանդիպում մատենագրական մյուս հին յերկերում, ունի նաև «Աշխարհացոյց»-ը» («Սոր. առ. լուծումը», էջ 76):

Հին մատենագիրների յերկերի ուսումնասիրությունը պարզում է, վոր «հատած» բառը «կարվածք», «մաս», «բաժին» իմաստով, գործ է անված մի շարք տեքստերում, հատկապես հունարան դպրոցի քերթողների մոտ, ինչպես շատ ճիշտ նկատել է հենց ինքը ակադ. Հ. Մանանդյանը: Կարելի չե բերել վորոշ որինակներ. «Յերիս հատածս կենաց մերոց կամ ժամանակաց» («Ատենաբանութիւն ժողովական՝ Յովհաննու իմաստասիրի»), «Յերիս հատածս բաժանի առաջիկայ շարագրութիւնս» (Գալիթի Մեկն. Պորփիլերի), «Ուղիղ կարգեալ երկրի. հատած առ ի բնակութիւն մարդկան: Երկրի հատած՝ անբաւ ցամաք, և կղզիք, և քէսոնէոս» (Փիլ. նիս. և լին), «Ոչ օր, և ոչ ժամ, և ոչ մասն հատածի» (Վարդ. Պատմ.), «Անորակի արիւոյն հատածք՝ հոսմամբ որակացեալ» (Ան. Նարեկացի), «Այս իսկ հատած է առաջին միոյ յերկոտասան մասնէ: Գնայ արեգակն ի հատածն առաջին, յորժամ հաւասարի տիւ դիշէրոյն: Պատմութիւնս ժամանակացն, յոր յառաջն եղեալ է մեր՝ ի հատածս հատածս դրոշմեալ է մեր» (Եւսեբ. Պատմ.) (հմմ. այս բոլորը ՆՀԲ, II հատ., էջ 57): «Հատած» բառը բաժին իմաստով յերեք տեղ մեզ հանդիպել է գործածված նաև Անանիա Շիրակացու մոտ. «Բաժանեալ երից հատածաց ուղեկնացութեամբ ծովային ճանապարհան» (Շիր. «Յաղագս հիւս. աստեղաց», էջ 49), «Կենդանատեսակ բոլորակութիւն շարժի առշեղապէս՝ բաժանեալ ի հատածս երկոտասան» (Շիր. «Յաղ. կենդանատեսակ բոլորակութեան», էջ 68), «... Բիւրեակն, որ լինի Դ հատածք» (Շիր. «Սակս բաց. թուոց»): Վերջինս, յենթադրվում է, վոր Շիրակացուն է և և տեքստը գեւ չի հրատարակված:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, վոր «Աշխարհացոյց»-ը Սորենացու աշխատությունը համարող բանասերների բերված դարձ-

վածքները բոլորովին ել «բնորոշ չեն» միայն Պորենացուն և «արատավոր չեն» հին հայ մատենագրության մեջ: Մատնացույց արված բոլոր բնորոշ դարձվածքները գործ են անված նաև Անանիա Շիրակացու աշխատություններում:

ՇԻՐԱԿԱՅՈՒ ՅԵՎ, «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻՋԵՎ  
ՄԱՏՆԱՅՈՒՅՑ ԱՐՎԱՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐ

Ակադ. Հ. Մանանդյանն իր «Պորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ ցանկանալով ապացուցել «Աշխարհացոյց»-ը Շիրակացու աշխատություն չլինելը, բերում է մի շարք այնպիսի փաստեր, վորոնք, նրա կարծիքով, ապացուցում են Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի աշխարհագրական վորոշ տերմինների և աշխարհագրական հատուկ հայացքների տարբերությունները: Կանո առնենք նրանց վրա և քննենք դրանք:

1. Ակադ. Հ. Մանանդյանը մեջ բերելով պրոֆ. Բ. Պատկանյանի «Աշխարհացոյց»-ի ուսերեն թարգմանության ծանոթությունը («Наш автор употребляет одно и то же слово միջօրէակն գիծ для определения экватора и меридиана, между тем как для первого существует выражения «հասարակած», «հասարակօրեայ») և համաձայնելով նրա հանած յեղրակացության հետ՝ այդ տերմինները եկվատորի նշանակությամբ գործ անելու խնդրում անհրաժեշտ է համարում նշել Շիրակացու աշխատության այն հջերը, ուր գործ են անված «հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները: Նա այնուհետև պնդում է, վոր Շիրակացուն ծանոթ այդ տերմինները «ծանօթ չեն «Աշխարհացոյց»-ի հեղինակին» (եջ 56):

Պրոֆ. Պատկանյանը, ինչպես և ակադ. Հ. Մանանդյանը «հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները, մեղ թվում է, ներկայացնում են վնչ իրենց բուն իմաստով: Շիրակացին «հասարակած» և «հասարակօրեայ» տերմինները գործ է անում վնչ թե եկվատորի, այլ յերկնային ծրի, գիշերը և ցերեկը հավասարեցնող կետի (հունական Խորոն-ի) նշանակությամբ: Գրանում համոզվելու համար կարելի յե բերել այդ տերմինները գործ անված նախադասությունները. «Եւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աշտիճանել ի հարաւակողմանց՝ գալ հասանել ի հասա-

րակածն երկնից՝ դ՛աւասարութիւն տուրնջիւն և գիշերոյ կատարէ» (Շիր. «Մնաց. բանից», էջ 57), կամ «Եւ ոչ յորժամ ծագէ (արեգակն—Ա. Ա.) առ բնակչացն արևելեայց, և ոչ յորժամ գայ հասանէ ի հասարակածն երկնից, փոխի ինչ ի կերպարանացն գոր ունէր» (Շիր. «Մնաց. բանից», էջ 59), դարձյալ՝ «Արգ է սկիզբն կենդանատեսակ բոլորակութեան Պոյն, արական, հասարակօրեայ՝ յեղանակ դարնանային...» (Շիր. «Մնաց. բանից», էջ 68): «Հասարակած» տերմինն այս նույն նշանակությամբ գործ է անված ՀԽՍՀ Պետ. մատենագրարնում գտնվող Շիրակացու տոմարական, չհրատարակված մի աշխատության մեջ: Յեթե հաջողվեր Շիրակացու աշխատության մեջ կոնկրետ ցույց տալ «հասարակած» տերմինի գործածության իրոք յերկրի հասարակածի իմաստով՝ գուցե հնարավոր լիներ խոսել «Աշխարհացոյց»-ի հեղինակի և Շիրակացու գործ անած աշխարհագրական տերմինների հակասության մասին, բայց քանի վոր մատնացույց արված փաստերը յերկնային ծրին են վերաբերում, ուստի և այդ հակասություն համարել չի կարելի:

2. «Շիրակացին և «Աշխարհացոյց»-ի հեղինակը,— գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— միանգամայն տարբեր հասկացողություններ ունեն յերկրի ձևի մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, համաձայն Պտղեմեոսի տեսության՝ յերկիրը համարում է գնդաձև, իսկ Անանիա Շիրակացին, վոր կանգնած է քրիստոնեական մեկնիչների տեսակետի վրա՝ յենթադրում է յերկիրը «չորեքկուսի» (տես «Պոր. առեղծ. լուծ.», (եջ 57—58):

Ճիշտ չէ թե Շիրակացին յերկրագունդը կըր չի պատկերացրել: Նրա աշխատությունների մեջ կան բազմաթիվ հատվածներ, վոր հակառակն են վկայում: Կարելի յե բերել մի քանի որինակներ. «Եւ եթէ ոք կամեսցի օրինակ տեսական դարտաքնոցն լսել, իբր թէ դեպս երկրի նմանեցուցանել ինձ ի դէպ թուի ասացեալն իբրև դձու, որպէս նորա դեղինն ի միջին գնդաձև կառուցեալ կայ և սպիտակն շուրջ գնդալ, և խնձաղն պատ անեալ դամենայնիւ, նոյնպէս և երկիրս ի միջոցին կառուցեալ կայ և օդ<sup>1</sup> շուրջ գնդալ և երկին պատ անեալ դամենայնիւ» (Շիր.

<sup>1</sup> ՀԽՍՀ Պետ. մատենագրարնի թիվ 2180 ձեռ. հիման վրա մենք ուղղում ենք պրոֆ. Բ. Պատկանյանի հրատ. տեքստում «ապա» բառը «օդ» բառով:

«Մնաց. բանից», էջ 38): Կամ՝ մի այլ տեղ՝ «ճանճք խնձորով պտտեալք, նուշնպէս և մարդիկ երկրաւ»: Ճիշտ և, Շիրակացին այդ նուշն աշխատութեան մեջ խոսում է նաև յերկրի չորեքկուսի լինելու մասին («Նւ քանզի երկիր չորեքկուսի է միջոցի երկնի կառուցաւ...» (էջ 37), սակայն նա այստեղ թվում է գոյութեան ունեցող տեսակետներից մեկը միայն: Շիրակացին իր աշխատութեան այդ գլխի հենց սկզբից հիշում է գոյութեան ունեցող մի շարք տեսակետներ. «Ջերկիր ոմանք է բարեաց փիլիսոփայիցն ապացին թէ ձևացեալ է իբրև սկուտեղ, և ոմանք ասացին իբրև զգուտ, և ոմանք իբրև զքուէս երկերեակ...» (Շիր. «Մնաց. բանից», էջ 37):

3. Շիրակացին, ահադ. Հ. Մանանդյանի կարծիքով, արեգակը մեծ է համարում յերկրից, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ ընդհակառակը, յերկիրն է մեծ համարում արեգակից:

Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի մեջ այս հարցում ևս հակասութեան չկա: «Աշխարհացոյց»-ի տեքստում յերկրի մեծութեան մասին խոսված է հետևյալ հատվածում. «Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուէ և վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զըզվանգակութիւն արեգական, այսինքն օթեանս քառասուն» (Մուք., էջ 7), (... ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան զերկիրս լինել...» (էջ 588): Յերկու տեքստում էլ «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ինչպես տեսնում ենք, դարձյալ թվում է տեսակետներ, նա անգամ շեշտում է, վոր «ասացին» թե այսպիս է: Զպիտի մոռանալ, վոր գիտութեան այն ժամանակվա զարգացման աստիճանում այնքան էլ հեշտ չէր նման հարցեր համոզված, վճռականորեն պնդել, ուստի և Շիրակացին անհրաժեշտ է համարում թվել այս հարցում տարբեր գիտնականների տեսակետները միայն:

4. Անանիա Շիրակացին իրարից տարբեր է համարում թյուրիմացարար «Հիւրկանիա» և «Ասպիս» ծովերը (= ըստ յերկվույթին κασπίς) ծովերը, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը գիտե, վոր այդ յերկու անունն էլ վերաբերում են Կասպից ծովին՝ շարունակում է ահադ. Հ. Մանանդյանը (տես «Խոր. առեղծ. լուծումը», էջ 57):


Պրոֆ. Բ. Պատկանյանի Շիրակացու «Մնացորդք բանից» աշխատութեան «Յադագս ծովու» գլխում իրոք վոր Կասպից ծովը տարբերվում է Հյուրկանա ծովից. «Թէպէտ և ասեն ոմանք

(Պատ. տեքստում—«ամանք») զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս՝ եթէ զատեալ մեկնեալ են ի բուն ծովէն, այլ որ փոյթ յանձին կալան զաշխարհ ամնայն ի դիր առնուր... ասեն թէ ծակք են ի միմեանս ծովք, և երթան կցին ի միմեանս...» (Շիր. «Մնաց. բանից», էջ 41): ՀնՄՀ Պատ. մատենագրարնում յեղած Շիրակացու տիեզերագիտութեան ընդարձակ տեքստի համապատասխան հատվածի համեմատութեանը հիմք է տալիս յենթադրելու, վոր այդ պարբերութեան «և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս» նախադասութեանն, ընդմիջարկութեան պիտի լինի: Մատենագրանի այդ ձևագրում, վորը կրում է 2180 համարը, վերև բերված նախադասութեանը զբված է աստղանիշով ներքին լուսանցքում տարբեր թանաքով: Այնքան, վորքան վոր Պտղեմեոսի և Պապոսի աշխատութեաններին մոտից ծանոթ Շիրակացին յերեք էլ Կասպից ծովին «Ասպիս» չէր ասի, նախադասութեանը զբված է քերականական սխալ ձևի տակ և չի կապակցում ընդհանուր մտքի հետ, ուստի և հաստատվում է այդ նախադասութեան ընդմիջարկութեան լինելը: Հավանական է, թիվ 2180 ձևագրի ընդորինակող գրիչը (զուցե և հետագայում ուրիշ մեկը, վորովհետև ավելացած նախադասութեան զբշուութեանը բուն ձևագրի զբշուութեանից տարբերվում է) համեմատելով այլ ձևագրի հետ, կարծել է, թե իր ձևագրից թերի յե և կատարել է իր կարծիքով անհրաժեշտ լրացումը ներքին լուսանցքում:

5. Շիրակացին ծովը տարբերում է ծովակից, ասում է ահադ. Հ. Մանանդյանը, նա անգամ դատապարտում է շփոթողներին, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակն այդպիսի տարբերութեան չգիտե (տես «Խոր. առեղծ. լուծումը», էջ 56):

Ճիշտ չէ, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը ծովակը և ծովը չի տարբերում իրարից: Այսպես, նա Հայաստանի աշխարհագրութեան բաժնում հիշում է. «Նուշնի Այրարատ լերինս և դաշտս, և զամենայն պարարտութիւն, և ծովակն Գայլատոյ...» (էջ 610—611), կամ զարձայլ՝ «Լե. Մարք, որ կոչին Բուստիկ Գալկոզ... Ունի լերինս և դաշտ, և ծովակն որ կոչի Կապուտան՝ ուր զբուռամղիղն գործեն» (էջ 613): Իսկ ծով բառը նա «Աշխարհացոյց»-ում գործ է ածել բաղմամբով տեղերում: Ինչ վերաբերում է «Աշխարհացոյց»-ում Բզնունյաց ծովակի ծով անվանվելը, այդ, մեզ թվում է, աղավաղված է: Սկզբնական տեքստ-

տում յեղել և «ծովակ»), սակայն հետագա ընդորինակությունները դարձրել են ծով: Այդ անհավանական մի բան չե, վորովհետև Բզնունյաց լիճը մեզ մոտ, սովորաբար, ծով է անվանվել, և դրա



Մատենադարանի թիվ 2180 ձեռագրի Շիրակացու «Տիեզերագրություն» տեքստի այն էջը, ուր «Հիրեկանիա» ծովը ավելացված է ներքևում:

համար ել հենց Շիրակացին զգուշացնում է. «... ոչ է պարա դժովակն ծովս կոչել... Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչենք Բզնունեաց, և ոչ այլք որ յարևելս են որ կոչին նոյնանմանք. զի սորա զոր ասացար՝ ծովակք են և ոչ ծովք» (Շիր. «Մնացբանից», էջ 41): Շիրակացին դատապարտում է Բզնունյաց ծովակի ծով անվանելու արագիցիոն սովորությունը:

Այսպիսով, սկզբ. Հ. Մանանդյանի կովանների քննությունը ցույց է ապիս, վոր Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի միջև աշխարհագրական անունների և հասկացողությունների վճռի հակասություն չկա: Ընդհակառակը, հնադույն ձեռագրերի հիման վրա ուղղելով Շիրակացու հրատարակված աշխատությունները և համեմատելով նրանք «Աշխարհացոյց»-ի տեքստի հետ, մենք բազմաթիվ նմանություններ ենք տեսնում հենց այդ նույն հակասող համարված հատվածներում: Յերկու տեքստում ել մեր առջև կանգնում է հայ խոշոր մտթեմատիկոս և աշխարհագրագետ Շիրակացին՝ իր հին հունական գիտության մեծ պատրաստությամբ:

ՓԱՍՏԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒՄ ԾԻՐԱԿԱՑՈՒՑ ԱՌԱՋ ԱՊՐԱՄԾ ՀԵՂԻՆԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աշխարհացոյց»-ի ժամանակի վորոշման հարցում վճռական նշանակություն ունի իրեն, Սորենացու ժամանակի վորոշման հարցը: Յեթն պարզվել, վոր Սորենացին ավելի վաղ ապրած մատենագիր է, քան Անանիա Շիրակացին, պարզ է, վոր «Աշխարհացոյց»-ը 9—10-րդ դար բերող բանասերների կովանները 99 %-ով կխախտվեն: Այստեղ մեր նպատակից զուրս է Սորենացու ժամանակի հարցը մասնագիտական հատուկ ուսումնասիրուցության յենթարկելը, նման հարցով զրաղվելու համար անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրել հենց իրեն, Սորենացու Պատմության ոգտագործած աղբյուրները, բոյց այնքան, վորքան այդ հարցը սերտ կերպով կապվում է «Աշխարհացոյց»-ի հարցի հետ, ուստի և անհրաժեշտ ենք համարում միջանկյալ ձևով կանդառնել նրա վրա:

Սորենացու հարցով զրաղվող բանասերներից շատերի ուշադրությունից, մեր կարծիքով, վրիպել է մատենագրական մի

կարևոր հիշատակութուն, վորը մեծ կարևորութուն ունի Պորենացու ժամանակի վորոշման հարցում, — դա 7-րդ դարում հայերեն գրված անանուն հեղինակի ժամանակագրութունն է: Այդ ժամանակագրութունը, ըստ Տաշյանի<sup>1</sup> և մի շարք այլ աղբյուրագետների, պատկանում է Անանիա Շիրակացուն: Ժամանակագրութան հեղինակի վերաբերյալ նույն կարծիքն է հայտնել նաև նրա հրատարակիչ Բ. Սարգսյանը<sup>2</sup>:

Սարգսյանի և մյուսների հայտնած այդ կարծիքը լիովին հաստատվում է ՀՊՍՀ մատենադարանի թիվ 102 (ներկայումս մատենադարանի 2679 համարի) թղթի նշանավոր ձեռագրում՝ յեղած նույն բովանդակութուն ունեցող ժամանակագրությամբ: Այդ ձեռագրի մասին, Շիրակացու այլ աշխատությունների կապակցությամբ, խոսել է արդեն Գալուստ Տեր-Մկրտչյանը (տես «Արարատ»-ի 1896 թվի փետրվարի №, հջ 96), սակայն անհասկանալի պատճառով լռությամբ է անցել ժամանակագրության վրայով, վոր հաստատում է նրա՝ Շիրակացուն պատկանելու վերաբերյալ արտահայտված կարծիքները:

ՀՊՍՀ մատենադարանի ժամանակագրութուն պարունակող այս ձեռագիրը մեր ամենաարժեքավոր հնություններից մեկն է — մեզ հասած ամենահին թղթի վրա գրված հայերեն ձեռագիրը: Նա ընդորինակված է 971 թվին և պարունակում է պատմագրատեղան արժեքավոր նյութեր, վորոնց մեծ մասը գեռ ուսումնասիրված ու հրատարակված չեն: Ձեռագրում ժամանակագրությունը սկսվում է ԾԹ (59) հոգվածից, իսկ նրան նախորդող բոլոր նյութերը Շիրակացու գործերն են: Այսպես՝ թերթ 5 ր-ից սկսվում է «Անանիայի համարողի վասն ընթացից արեգական»-ը<sup>3</sup>, թերթ 9ա-ից (ԾԼ հոգված) «Անանիայի Շիրակացույ համարողի, Յաղագս ամպոց և նշանացն» և (սրանք հրատարակված են Գալուստ Տեր-Մկրտչյանի կողմից «Արարատ» ամսագրում 1896 թ.),

թերթ 13 ր-ից — Անանիայի Շիրակացու «Յարութեան» և «Ջատկի» ձառերն են և վերջապես, մի փոքրիկ հատված «Նորին Անանիայի» վերնագրով:

Ժամանակագրությունը վերջանում է 685 թվականի մի դեպքի հիշատակությամբ. «Յուստինիանոս, որդի երբորդ Կոստանդնի՛ ամս կրկուս: Ի սորա առաջին ամին տիրեցին հիսուսային ազգն, որ ասին հաղիք՝ հայոց, վրաց և աղուանից և սպանին ի պատերազմի դիշխանս հայոց, վրաց և աղուանից, յամսեանս սահմի, որ աւրջտասն էր ամսոյն, ի ձԼԳ թուականին հայոց»:

Ժամանակագրության այս վերջաբանից յերևում է, վոր նա իրոք գրվել է 685 թվին, Կոստանդնի վորդի Հուստինիանոսի յերկրորդ տարին, յերբ դեպի Անդրկովկաս ելին արշավում խաղարները: Ընշտ նույն ժամանակով էլ վերջանում է Պարսկաստանի թագավորների ժամանակագրությունը: Ժամանակագրության մեջ չկա պատմական վոչ մի փաստ, վոր հիմք տար նրա գրելու ժամանակը 7-րդ դարի յերկրորդ կեսից ուշ շրջան բերելու: Այս բոլորը, կարծում ենք, վնչ մի կասկած չեն թողնում ժամանակագրության իրոք վոր 7-րդ դարի յերկրորդ կեսում գրված աշխատություն լինելու մասին: Այնքան, վորքան ժամանակագրությունը համընկնում է մոտավորապես Անանիա Շիրակացու ժամանակին, ընդորինակված է 971 թ. գրչություն ունեցող ձեռագրում և տեղավորված է Շիրակացու գործերի շարքում, ժամանակագրության մեջ ոգտագործված են այն աղբյուրները, վորոնք ոգտագործել է Շիրակացին իր մյուս աշխատություններում ևս, այդ բոլորը վոչ մի կասկած չեն թողնում ժամանակագրության իրոք վոր Շիրակացու գործ լինելու վերաբերյալ, ինչպես շատ ճիշտ յենթադրել է Լ. Բ. Սարգսյանը իր «Մովսէս Պորենացույ պատմագրության ընթացքը և անոր հնութեան նոր ապացոյցները» աշխատության մեջ (տես «Բաղմավէպ» ամսագիր, 1903 թ., 11, հջ 509—517 և թիվ 12, հջ 541—547):

ՀՊՍՀ մատենադարանի վորոշ ձեռագրերում մենք հանդիպում ենք դեպքերի, յերբ այս ժամանակագրությունը պարզապես հիշատակված է Շիրակացու անունով: Այսպես՝ թիվ 2271 (2287) ձեռագրում, վորն ընդորինակված է Ջուղայում, 1724 թվին, տեղավորված է հայ մատենագրերի մի ցուցակ «Պատմագիրք հայոց» վերնագրով: Այս ցուցակի 12-րդ համարի տակ


<sup>1</sup> Բ. Վ. Տաշյան, Յուզակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, հջ 1057:

<sup>2</sup> «Անանուն ժամանակագրութիւն... 7-րդ դարու» (տես Լ. Բ. Սարգսյանի ներածությունը):

<sup>3</sup> Շիրակացու այս աշխատության հրատարակության մասին տես Անանիայի Շիրակացու Մնացորդք Բանից, ՄՊԲ, 1877 (հրատարակ. պրոֆ. Բ. Պատկանյանի), հջ 4—26:

կարգում ենք. «Անանիայ Շիրակացին—սկիզբն առեալ յԱզամայ, համարոտ գաւաղանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ» (թերթ 410ա): Տուցակի հեղինակն, անկասկած, ի նկատի յե ունեցել Շիրակացու ներկա ժամանակագրությունը:

Դ-րդ դարի յերկրորդ կիսում գրած անա այս ժամանակագրության վերնագրում, շատ պարզ, սպիտակի վրա սև տառերով



Թղթի վրա գրված ամենահին ձևագիրը (971 թ. ընդորինակություն), ուր Անանիա Շիրակացու ժամանակագրության մեջ հիշված և Վոսվեստի Մորենացույն անունը

գրված և ընդգծված և «Մովսէսի Մորենացույ և Անդրէասի» բառերը: Յեթն վիճակագիրների հրատարակած ժամանակագրության մեջ Մորենացու անվան հիշատակումը կարող եր վորոշ չափով կասկածանքների տեղիք տալ, ապա մեր մատենադարանի 971 թվի ընդորինակությունն ունեցող այս ձևագրի պարունակած ժամանակագրության մեջ, Մորենացու անվան հիշատակումը ցրում և բոլոր նման կասկածները: Դ-րդ դարի յերկրորդ կիսում կազմող ժամանակագրության հեղինակը, պարզ և, ոգտվել և Մորենացու աշխատությունից և հիշում և այդ մասին իր աշխատության մեջ: Վորպեսզի ժամանակագրության հեղինակ Անանիա Շիրակացու Մորենացուց ոգտվելու այդ փաստն ընթերցողի համար ավելի քան պարզ լինի, անհրաժեշտ ենք համարում այդ ժամանակագրությունից բերել Մորենացու «Պատմութիւն»-ից ոչտված մի հատվածը՝ համեմատելով այն Մորենացու «Պատմութիւն հայոց»-ի համապատասխան հատվածի հետ:

«Անանուն ժամանակագ. VII դ.»

Մորենացի

Մովսէսի Մորենացույ և Անդրէասի, — Ազամ նախասեղծ. սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն, ծնանի զՍէթ: Եւ եկեաց ամս եւթն հարիւր, մինչև ի հարիւր երեսուն և հինգ ամ Մաղազակի: Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնանի զԵնոփս, և եկեաց ամս 26 մինչև ի քսան ամս Ենոփքայ Սորա երկուքն յարձանագրութեանց ընդգէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսէպէս թէպէս և ուրն անյայտ է: Ենոփս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած: Եւ ընդէր արդեւք այս և կամ վասն որոյ պատճառանց նախն է սացեալ կոչեցելոյն զԱստուած, կամ որպէս կոչելն ի նմանէ, քանզի Ազամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն, և սա ի բերանոյ աստուծոյ առեալ ասի պատուէր այլ և յանցուցեալ և ի թագստեան եղեալ զոր Եսն յԱստուծոյ և ոչ յայդ ումեքէ հարցանի. սապէս և զճիտ վարկին ի

Ազամ նախասեղծն՝ սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն, ծնանի զՍէթ: Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնանի զԵնոփս: Սորա երկուքն յարձանագրութեանցն ընդգէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսէպէս. թէպէս և ուրն անյայտ Ենոփս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած:

Եւ ընդէր արդեւք այս, և կամ վասն որոյ պատճառանց նախնիս ասացեալ կոչելոյն զԱստուած, և կամ որպէս կոչելն իմանի Քանդի է Ազամ ճշմարտապէս աստուածաստեղծ. և սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր, այլ և յանցուցեալ և թագստեան եղեալ զՈւր Եսն յԱստուծոյ և ոչ յայլ ումեքէ հարցանի. սապէս և զճիտ վարկին ի նորին բերանոյ լսել Իսկ յեսոյ և Աբել մերձաւոր և ծանօթ Աստուծոյ լեալ, պատարազ մատու-



ճմին բերանոյ լսէ, իսկ յետոյ Աբեղ մերձաւոր եւ ծանօթ Աստուծոյ լեալ պատարագս մատուցանէ և ընկալեալ լինի Արդ՝ սոցա այսպէս ընդելու-թեան եւ ծանօթութեան Աստուծոյ լինել, է՞ր աղագս առաջին սա ախի կոչել զԱստուած եւ այս յուսով, այդ զայդսն վասն սորա ի տեսու-թեանց՝ ի հրաւիրեալքն մեր յուղար-կեացուք տեղի, իսկ որ առ ձեռն պատրաստն է ասացուց: Քանզի ի պատուիրանդանցութեան գտեալ ա-ռաջինն ի մարդկանէ՝ ի գրախտէն եւ յԱստուծոյ՝ շարութեան աղագու, որպէս ասացեալ է, գտանի արտա-սահմանեալ Ձկնի եւ ընդանեզոյնն ամենայն որդւոցն Ադամայ՝ ի հարա-գատէն իւրմէ սղանանի յեզբարէ: Յետ որոյ՝ ոչ բանիւ ինչ Աստուծայնոյ եւ ոչ յայտնութեան ինչ իրիք եղի-լոյ ի տարակուսանս եւ յանյուսու-թեան աղջ մարդկան համարեալ լի-նի. այդ եւ ինքնահաճոյ արդարեւ զործո. յորոց միջի սա ըսչայոյս եղեալ՝ ուղղութեամբ հանդերձ, կոչէ զասուած, իսկ կոչելոյ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս մոռաց-եալ, կամ յաւգնականութիւն կար-դար Արդ՝ տնուանել որպէս մոռաց-եալ՝ ոչ է ի դէպ, զի ոչ բաղմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զաստուածդ ամէր անունն եւ կամ զնոյն ինքն՝ որոյ անունն, եւ ոչ դարձեալ մահու եւ թաղման դեռ ևս յԱստուծոյ ստեղծեալն հա-սեալ է: Ապա ուրեմն յաւգնականու-թիւն կոչէ սա զԱստուած: Սա կեց-եալ ամս ձԴ, ծնանի զԿայիանն: Եւ եկեաց ամս ՁԺԾ, մինչեւ ի ԺԳ ամն Մաթուսողայի: Կայիանն.— կեցեալ ամիզ ձԷ, ծնանի Մաղաղել ևւ եկեաց ամս ՁԾ մինչեւ ՁՍ. ամն Ղամեքայ:

ցանէ, և ընկալեալ լինի Արդ, սոցա այսպէս ընդունելութիւն և ի ծանօ-թութիւն Աստուծոյ լինել, է՞ր աղա-գու սա առաջին ախի կոչել զԱ-ստուած և այս՝ յուսով: Արդ զայն վասն սորա ի տեսութեանց ի հրա-ւիրեալն մեր յուղարկեացուք տեղի. իսկ որ ի ձեռն պատրաստն է՝ ասա-ցուք:

Քանզի ի պատուիրանդանցու-թեան գտեալ առաջինն ի մարդկանէ, ի դրախտէն և յԱստուծոյ, շարու-թեան աղագու, որպէս ասացեալ է, գտան արտասահմանեալ Ձկնի և ընտանեզոյնն Աստուծոյ յորդուցն Ադամայ՝ ի հարագատէն իւրմէ սղա-նանի յեզբորէ: Յետ որոյ ոչ բանի ինչ աստուծայնոյ և ոչ յայտնու-թեան ինչ իրիք եղիլոյ, ՚ի տարա-կուսանս և յանյուսութիւն ազգ մարդկան հատեալ լինի, այլ և ինք-նահաճոյ արդարեւ զործո. յորոց միջի սա ըսչայոյս եղեալ ուղղութեամբ հանդերձ, կոչէ զԱստուած: Իսկ կո-չելոյ կրկնակի իմանի. կամ անուա-նել որպէս զմոռացեալ, կամ յոգնա-կանութիւն կարդար Արդ անուա-նելն իբրև զմոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ բաղմութիւն ամաց ընդ մէջ անցեալ, որ ի մոռացումն նոցա զԱստուածդ ամէր անունն, և կամ զնոյն ինքն՝ որոյ անունն, և ոչ դարձեալ մահու և թաղման դեռ ևս ստեղծեալն յԱստուծոյ հասեալ: Ապա ուրեմն յոգնականութիւն կոչէ սա զԱստուած:

Սա կեցեալ ամս հարեւր և իննսուն, ծնանի զԿայիանն. Կայիան կեցեալ ամս հարեւր և եւթսնասուն, ծնանի զՄաղաղիէլ: Մաղաղիէլ կեցեալ ամս հարեւր վաթսուն և հինգ, ծնանի զԹարեղ: Թարեղ կեցեալ ամս հարեւր վաթսուն և երկու, ծնանի զԾնովք:

Մաղաղաէլ կեցեալ ամս ձԿԵ, ծնա-նի զԹարեթ. եւ եկեաց ամս ՁԼ մին-չեւ ԽԸ ամն Նոյի:

Յարեթ կեցեալ ամս ձԿԲ, ծնանի զԾնովք: Եւ եկեաց ամս Պ մինչեւ ՄՁ ամն Նոյի: (Զեռ. Ա 2679)

Ծնովք կեցեալ ամս հարեւր վաթ-սուն և հինգ, ծնանի զՄաթուսողա-ս (Ղեկեա. հրատ., էջ 9—10)

Համեմատությունից պարզ յերևում է, վոր ժամանակագրու-թյան վերնագրում հիշատակված Մովսես Խորենացու անունը պատահական չէ, այլ վոր Շիրակացին իրոք ոգտվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից:


Յեթե 7-րդ դարի կեսում ապրած հեղինակը, կարևոր չէ ան-գամ, թե դա Անանիա Շիրակացին է թե ուրիշ մեկը, ոգտվում է Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ից, այդ նշանակում է, վոր 7-րդ դարի յերկրորդ կիսում Խորենացու պատմությունն արդեն գրված, պատրաստ մի աշխատություն էր: Կնշանակի՝ Մովսես Խորենացին 7-րդ դարի յերկրորդ կիսից ավելի վաղ ապրած հեղինակ է:

Ժամանակագրության մեջ Մովսես Խորենացու հիշատակվե-լու և ոգտագործելու այս փաստը ամբողջապես խախտում է Մով-սես Խորենացուն 8—9-րդ դար հասցնող բանասերների բոլոր կովանները: Նա խախտում է նաև Խորենացուն 7-րդ դարի յերկ-րորդ կիսում ապրող հեղինակ համարող բանասերների յենթա-գրությունը, վորովհետև զժվար է կարծել թե Խորենացու «Պատ-մութիւն»-ը գրելուց անմիջապես հետո հնարավոր դարձավ նրա-նից ոգտվել: Մնում է, վոր մենք Մովսես Խորենացուն 7-րդ դարի կեսից ավելի վաղ փնտռենք:

Խորենացու 7-րդ դարի յերկրորդ կիսից առաջ ապրելու այս փաստը, մյուս կողմից, կարծում ենք, լուծում է նաև «Աշխար-հացոյց»-ի շուրջը յեղած վեճը: Նա հերքում է այն բանասերների տեսակետը, վորոնք «Աշխարհացոյց»-ը Խորենացու հետ ելին կա-պում, պատճառաբանելով Խորենացու ուշ դարերի հեղինակ հան-դիսանալու փաստը:

Շիրակացու՝ Խորենացու աշխատության հետ ծանոթ լինելու և նա ոգտագործելու վերաբերյալ մենք ունենք, սակայն, մի այլ կարևոր տեղեկություն—Շիրակացու չհրատարակված մի աշխա-տության մեջ Հայկի մասին արված մի հիշատակություն, վորը

մեր կարծիքով, վերցված և խորհնացուց: Շիրակացու այդ աշխատութիւնը ինչպես ասել ենք, գտնվում է ՀՊՍՀ մատ. թիվ 2762 և 2180 ձեռագրում: Նա Շիրակացու «Յաղագս երկրի» աշխատութիւն գլուխներից մեկն է: Պարզվում է, վոր Շիրակացու «Յաղագս երկրի» աշխատութիւնը սկզբում ունեցել է առաջարան «Առ խոստացեալսն» վերնագրով: Այդ նույն աշխատութիւնը «Յաղագս կենդանատեսակաց» գլխով չի վերջացել ինչպես Պատ-



Շիրակացու տիեզերագիտութիւն ընդարձակ տեքստի առաջին էջը

կանյանի տպագրված տեքստումն է, այլ շարունակվել է յոթանասուն և չորս այլ գլուխներով, վորոնք ունեն տոմարագիտական բովանդակութիւն: — Ահա այդ գլուխներից մեկում — ԽԳ (43), վորի վերնագիրն է «Զինչ է ամիսն», Շիրակացու կողմից հիշատակվում է Հայկի առասպելը: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր Շիրակացու աշխատութիւն այդ մասը դեռ վոչ վոքի կողմից չի հրատարակված, ուստի և անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ այդ գլուխն ամբողջութեամբ:

«ԶԻՆՉ Է ԱՄԻՍՆ»

Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց, ասացին թէ ի մեզ պատկեր: Եւ դարձեալ, զի՞նչ են ամիսք, և կամ թվ եք զանուանս նոցա: Անուանք ամսոցն ոչ էին յիսկզբանէ, այլ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս՝ զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք, և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջինն լուսինն զգարնանն առաջին լուսին անուանէին, և զկնի՝ Բ-րդ լուսին և Գ-րդ և Դ-րդ մինչև ցԲԺ-րորդ և զողջուն ամս այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանային և դարձեալ յառաջինն զառնային: Իսկ անուանք ամսոց երբանցեոցն ի Մովսէսէ անուանեցան, որ և կարգեաց զլրումն զատկաց նոցա, որ աւր էր ելից նոցա յեգիպտոսէ, և զամենայն տաւնս նոցա նա կարգեաց: Իսկ վասն այլոց ազգացդ ամսոց յայտնի ուրեք ոչ պտաք՝ թէ յճմէ աւերինագրեցան՝ յիմաստասիրաց թէ ի թագաւորաց, զի բազում ամիսք այն են՝ զոր թագաւորք յիւրեանց անունն անուանեցին: Առաջին կայսրն Հռոմայ, Գայիոս, որ կոչեցաւ Յուլիոս, սա ի թագաւորեին իւրում, զԿինտիլիոս ամսոյ, յուլիս անուանեաց ի վերայ անուան իւրոյ և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և Օգոստոս Բ-որդ կայսրն զհեկիտոս ամիս՝ յաւգոստոս անուանեաց իւր անունն և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն. նոյնպէս և այլ ամիսքդ անուանեցան յումէ և իցէ, զոր աւելորդ համարիմ կարգաւ ասել: Բայց զամիսքդ հայոց ասացից՝ զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զղնել թուականին հայոց էին: Եւ ոչ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարգեղութիւն բանին տատուժոյ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ, և այս է պատճառն:

Ջի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ, յազգէ Յարեթի, որդոյ Նոյի, եկեալ ի Բարեխնէ՝ եկեալ տերեաց հայոց և բնակեալ ի հայս. և յանուն նորա կոչեցան Հայք, նոյնպէս որդւոց և դստերաց իւրոց եղ անուանա. գոր առեալ հայոց գանուանս ուստերաց և դստերաց նորա եղին ի վերայ ամառոց՝ վասն մեծարանաց հաւրն և գաւակացն (ընդգծուին իմն և.— Ա. Ա.) և են այսոքիկ՝ Նաւասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի. Արեզ և Մարերի դստերք էին Հայկին... Իսկ մարգաց և հարաւանց, զոր այժմ անկի կոչեն՝ այս ի գործոց անուանեցան՝ զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սորա»։ (ՀՊՍՀ մատենադ. ձեռ., թիվ 2180, թերթ 523ա-բ)։

Շիրակացու այս աշխատութիւնը, վորի վերնագրում պարզ հիշատակված և «Անանիայի Շիրակունւոյ համարող»-ի աշխատութիւն լինելը, վնչ մի կասկած չի թողնում այլևս, վոր Շիրակացու ժամանակ Մովսես Խորենացու աշխատութիւնն արդեն գրված պատրաստ մի աշխատութիւն էր, Շիրակացին ծանոթ է յեղել Պորենացուն և ոգտվել և նրանից։

Հին հայկական մատենագրութիւն մեջ Հայկի առասպելի հիշատակութիւնն յերրորդ փաստն է այս (Պորենացի, Սերեոս և սա), չհաշված Աստվածաշնչում և Թեյոնի մոտ յեղած հիշատակութիւնները, վորոնք թարգմանութիւններ են։ Ուշ շրջանի մյուս բոլոր հեղինակներն ոգտվում և կրկնում են իրենց աշխատութիւններում այս հիշատակութիւնները։ Ի միջի այլոց, Շիրակացու աշխատութիւնից բերված այս գլխից մեծ չափով ոգտվել և վանականը։

Շիրակացին՝ Հայկի առասպելը, անկասկած, ոգտվել և Պորենացուց։ Շիրակացու բերած այս առասպելի կառուցվածքն ու շարադրութիւնը վնչ մի կասկած չեն առաջացնում, վոր նա վնչ թե բանավոր տեղեկութիւնների հիման վրա յի գրել այդ, այլ ոգտվել և Պորենացուց։ Շիրակացու՝ Սերեոսից (ժամանակակից հեղինակից) ոգտվելու վերաբերյալ, իհարկե, խոսք լինել չի կարող։ Նշանավոր հայագետ՝ գիտնական Ստ. Մալխասյանն իր կազմած Սերեոսի պատմութիւնն համեմատական տեքստի առաջաբանում անհերքելի փաստերով ապացուցել է, վոր Սերեոսն ևս ոգտրվել և Պորենացուց<sup>1</sup>։ Նորագույն ուսումնասիրութիւնների ար-

The image shows a page of a handwritten manuscript in Armenian script. The text is written in a dense, cursive style characteristic of historical Armenian documents. The page contains several lines of text, with some words and phrases appearing to be underlined or written in a slightly larger hand. At the bottom of the page, there is a distinct signature that reads "Հայկին" (Haykin). The paper shows signs of age, with some discoloration and wear.

Շիրակացու աշխատութիւնն այն էլը, ուր բերված և Հայկի առասպելը։

<sup>1</sup> Տես «Սերեոսի եպիսկոպոսի պատմութիւն», չորրորդ տպագրութ., հրատ. Արմֆանի, 1930 թ., Ստ. Մալխասյանի առաջաբանը։

դյունքները, այսպիսով, գալիս են լիովին ասպնջուցելու Սորենացու՝ հին հեղինակ լինելու փաստը: Սորենացու ժամանակի վերջնական վորոշման համար այժմ մնում է քննութեան առնել Սորենացու «Պատմութիւն հայոց»-ում Հայաստանի չորս մասի բաժանված հիշատակվելու, Հովհաննես Մաղադասից ու Սեղ-բնատրոսի վարքից ոգտվելու փաստերը և վերջնականապես լուծել այդ հեղինակի ժամանակը: Շիրակացին իր՝ Սորենացուց ոգտվելու փաստերով սահմանագծում է Սորենացու ժամանակի վերջին սահմանը: Այժմ մնում է Սորենացուն փնտռել այդ ժամանակից առաջ յեղած տարածութեան մեջ:

Մեր վերև բերված փաստերը հնարավորութեան են տալիս բացատրելու «Աշխարհացոյց»-ի և Սորենացու պատմութեան մեջ նկատվող այն նմանութեանները, վորոնք մատնացույց են արված Սալաթյանցի, Մարկվարտի և ակադ. Հ. Մանանդյանի աշխատութեաններում: Նմանութեանները պարզ ցույց են տալիս, վոր վնչ թե Սորենացին և ոգտվել «Աշխարհացոյց»-ից, այլ «Աշխարհացոյց»-ի հեղինակ Անանիա Շիրակացին և ոգտվել Սորենացու պատմութեանից: Նկատվող կարևոր նմանութեանները մենք չենք ուզում բերել այստեղ, հետաքրքրվողն այդ կղանի ակադ. Հ. Մանանդյանի «Սորենացու անեղծվածի լուծումը» աշխատութեան մեջ, սակայն Շիրակացու Սորենացու «Պատմութիւն»-ից ոգտվելու փաստը ցույց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ յերկու համեմատութեան միայն:

«Բայց զնախասացեալ կինն Անոյշ բնակեցուցանէ [Տիրքան] որդւովք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածին մեծի լերինն: (Չորմէ լեալ ասեն յանգլին իմն շարժմանէ, դոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամաւ Պաղոմեայ ասպարիտօք զքնակաթիւնս մարդկան շափեցին...»:

(Սոր., I, 30, էջ 83)

«Սքանչելի է և աշխարհն [ձենաց] առատութեամբ ամենայն պաղոց, և

«Որ սլէս Պաղոմէոս Կ դաւդէոս չափեալ ասպարիտօք զամենայն բնակութիւն մարդկան...»:

(«Աշխարհացոյց»-ի Վենետ. հրատ., էջ 587)

«... և լինի անդ (ձենաց աշխարհում) դարբնեանիկ և կասիման, ի

գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրէշից, և որ էշայծեմունտ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառմեղ ստատական և սակաւուց ճաշակիւն՝ զփասեան և զպոր, և այլբայսպիսիք»:

(Սորենացի, II, 81, էջ 223)

հասիա լեանէ, և սկիւթիկան՝ որ է ասրագոյն ինքնեղ. և ունի հրէշ, և մուշկ, և շիրամարգ՝ շատ, և այլ հաւս պիտանիտ, և քրքումս անբաւ. մինչ զի հեծեալ ոք ի սպիտակ զերդակ ձիով... Լինի սպարիշում շատ և աղնիւ քան զամենայն երկիրս:

(«Աշխարհացոյց»-ի Մուքր. հրատ., էջ 46)

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՅԵՎ ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԺՍՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԶԼԻՆԵԼՈՒ ԽՆԳԻՐԸ

Սորենացու ժամանակը վորոշելու հարցում ակադ. Հ. Մանանդյանի կարևոր կովաններից մեկը, ինչպես հայտնի յե, Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում պահված «Զաքարիա կաթողիկոսի և Մովսէսի ի փոխուսմն Աստուածամարն եւ պատկերի նորին» ձառն և հանդիսանում: Այդ ձառը հիմք է տվել նրան յենթադրելու, վոր Սորենացին և Զաքարիա կաթողիկոսը ժամանակակից հեղինակներ են, վորովհետև նրանք, ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, միասին են գրել այդ ձառը ու նրանց անունները միասին են հիշատակված տվյալ ձառի վերնագրում, իսկ վորովհետև մեզ ճշտութեամբ հայտնի յե Զաքարիա կաթողիկոսի ժամանակը (=855—876 թ. թ.), ուրեմն, յենթադրել և նա, այդ նույն ժամանակի մարդ պիտի լինի նաև Սորենացին<sup>1</sup>:

Զաքարիա կաթողիկոսին և Սորենացուն վերագրվող այդ ձառի հիման վրա ակադ. Հ. Մանանդյանը կուսեի և նաև, վոր այդ ձառում աստվածածնի պատկերի մասին յեղած տեղեկութեանները հավանական և և քաղված լինեն Մովսէս Սորենացուն վերագրված «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատութեանից, վորը Վենետիկի միաբանութեան կողմից հրատարակված է Սորենացու «Մատենագրութիւնք»-ի մեջ: «Միանգամայն սակայն հավանական է, —ասում է ակադ. Հ. Մանանդյանը,—վոր այդ թղղ-

<sup>1</sup> Տես «Սորենացու անեղծվածի լուծումը», էջ 157, նաև նույն աշխատութեան վերջում տեղագրված առաքելն և գերմաներեն լեզուներով գրված թեղերը:

Քուճ մեջ բերված Աստվածածնի պատկերի մասին տեղեկությունները քաղված են, իրոք, «Մովսես քերթող»-ի, այսինքն՝ Պորենացու համապատասխան գրվածքից, վորը նա գրել էր Զաքարիա կաթողիկոսի հետ միասին (ընդգծումն իմն է.—Ա. Ա.) և վորը հիշատակված է Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում<sup>1</sup>:

Ակադ. Հ. Մանանդյանը Յերուսաղեմի այդ ձեռագիրն ինքն անձամբ չի տեսել: Նա այդ աշխատությունը վերնագրի հետ ծանոթացել է միայն Գ. Զարբանալյանի «Հայկական հին գաղութեան պատմություն» աշխատության մեջ՝ Զաքարիայի և Պորենացու գրական ժառանգության առթիվ բերված փոքրիկ հիշատակությունից, ուստի և նա իր գրած հարցերի վերջնական լուծումը թողել է կատարել հետագայում, յերբ կուսումնասիրվի Յերուսաղեմի մատենադարանի ձեռագիրը: Նա ասում է. «Այս խնդիրը վերջնականապես պարզելու համար անհրաժեշտ է, իհարկե, համեմատել «Պատասխանի թղթոյն Սահակայ» գրվածքը «Ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» վերոհիշյալ յերկի հետ, վորը դանվում է Յերուսաղեմի մատենադարանում»<sup>2</sup>:

Պորենացուն և Զաքարիա կաթողիկոսին վերագրվող այս ձուռի հնագույն մի ընդորինակություն, բացի Յերուսաղեմի մատենադարանից, բարբախտաբար, պահվել է նաև մեր մատենադարանում: Նա այժմ մեր ձեռքի տակ է և հնարավոր է կատարել այդ համեմատությունը:

Պորենացու և Զաքարիա կաթողիկոսի այդ ձուռը պարունակող ՀՊՄՀ մատենադարանի ձեռագիրն ունի XIII դարի գրչություն: Նրա գրիչն ու գրչությունը վայրը անհայտ են: Այդ տեքստն ունի հետևյալ վերնագիրը. «Զաքարիա(յ)ի հա(յ)ոց կաթողիկոսի և Մուսիսի Բերթողի ասացեալ ի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորայ»: Ձեռագրի նյութը թուղթ է: Գրված է միասյուն, զեղեցիկ բոլոր գրով: Ձեռագիրը կրում է ՀՊՄՀ մատենադարանի 2042 (2054) համարը:

Զաքարիա կաթողիկոսին և Պորենացուն վերագրվող այդ տեքստի ուսումնասիրությունից պարզվում է, վոր Պորենացին և Զաքարիան վնչ թե իրար ժամանակակից հեղինակներ են հան-

դիսացել և իրար հետ միասին կազմել են այդ տեքստը, այլ մի յերբորդ անձնավորություն կատարել և կոմպիլիացիա—վերցրել և Պորենացու և Զաքարիայի առանձին աշխատություններից իր ցանկացած հատվածները, միացրել է և վերնագրում դրել Պորենացու և Զաքարիա կաթողիկոսի անունները (այսինքն այն հեղինակների անունները, վորոնցից նա ոգավել է իր այդ տեքստը կազմելու ժամանակ): Անհրաժեշտ է նշել, վոր կոմպիլիացիա կատարող այդ յերբորդ անձնավորությունը նպատակ չի ունեցել ձուլել Պորենացու և Զաքարիայի տեքստերը, խմբագրական մեծ փոփոխություն չի յենթարկել, անգամ տեքստի լուսանցքներում մի քանի տեղ անհրաժեշտ է համարել հիշեցնել, վոր տեքստի այս հատվածը Պորենացունն է, այս հատվածը—Զաքարիային: Պորենացուց վերցրած հատվածների դիմաց նա կրճատ նշանակել է «Մու», «Մոս» և «Մովս», իսկ Զաքարիայինը—«Զք» կամ «Զաք»: Ի միջի այլոց, կոմպիլիացիայի այս տեսակն ինչ-վոր մի բացառիկ յերևույթ չէ մեր մատենագրությունում մեջ: Այս նույն ձևով կատարվել է կոմպիլիացիա նաև մի շարք այլ տեքստերում: Այսպես՝ ձեռագրերում մեզ հաճախ հանդիպում են քերականությունների այսպիսի տեքստեր, վորոնք կազմված են տարբեր ժամանակներում ապրող հեղինակների աշխատություններից վերցրած հատվածներից (Գավթի, Մամբրեյի Սակիանոսի, Մովսեսի և ուրիշների), վորոնց անունները, ճիշտ վերև հիշված տեքստի նման, հիշատակվում են լուսանցքներում:

Մովսեսին և Զաքարիային վերագրվող այս տեքստի վնչ մի հատվածից, ուղղակի կամ անուղղակի ձևով, չի յերևում, վոր Զաքարիան և Մովսես Պորենացին ժամանակակից մարդիկ են: Ձեռագրից չի յերևում նաև, վոր կոմպիլիացիա կատարող հեղինակը, վորը ժամանակագրական տեսակետից Պորենացուն և Զաքարիային համեմատաբար ավելի մոտիկ կանգնած անձնավորություն է, նրանց վրա նայի վորպես ժամանակակից հեղինակների: Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանի այն յենթադրությունը, վոր Յերուսաղեմի թիվ 413 ձեռագրում յեղած «Զաքարիայի կաթողիկոսի և Մովսեսի փոխումն Աստուածամաւրն և պատկերի նորին» ձուռը գրել են Զաքարիա կաթողիկոսը և Պորենացին վորպես ժամանակակից հեղինակներ, մատենադարանի նույն տեքստի ավելի հին ընդորինակության հիման վրա, չի հաստատվում:

<sup>1</sup> Հ. Մանանդյան, «Պորենացու առեղծվածի լուծումը», էջ 157:

<sup>2</sup> Նույն տեղում:

Այս նույն անքատի ուսումնասիրութեան հիման վրա, սակայն, հաստատուում և ակադ. Հ. Մանանդյանի մյուս յենթադրու-  
թյունը, վոր այդ ճառում ոգտադործված պիտի լինի Սորենացուն վերադրվող «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատութեանը: Մեր վերև հիշած կոմպիլիատոր հեղինակն իրոք վոր ոգտվել և Սորենացու նշված աշխատութեանից: Ասելի ճիշտ, այդ ճառի այն բոլոր հատվածները, վորոնք վերաբերում են Սորենացուն, վերցված են նրա «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատու-  
թյունից: Ի միջի այլոց, անհրաժեշտ և նշել, վոր Սորենացու «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատութեանը, ինչպես շատ ճիշտ նկատել և յեվրոպացի գիտնական Ֆետտերը<sup>1</sup>, անվավերա-  
կան է:

Իժմար և վորոշել կոմպիլիատոր հեղինակի՝ Մովսեսի և Զաքարիայի աստվածածնի վերափոխման ու նրա պատկերի վերաբերյալ գրած այս առանձին աշխատութեաններէից ոգտվելու և նշված ճառը կազմելու ժամանակը: Համենայն դեպս, մեզ թվում է, այդ XII—XIII դարերից ավելի ուշ ժամանակներում չպիտի լինի:

Սորենացու «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատութեանից ոգտվելու փաստն ավելի ակներախ դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել յերկու անքատերից զուգահեռ մի հատված:

(Զաքարիայ) ի հա(յ)ոց կաթողիկոսի Մասիսի քերթողի ասացեալ ի փոխումն Աստուածամարն և պատկերի նորայ):

(Պատասխանի թղթոյն Սահակայ)


Մն || Նասոն Ամինագարտ որդի ծնաւ զՄարման յաղէ Յուզա, և յորժամ անցոյց Յեսու ընդ Յորդանան. զԲԺ ցեղիցն. զբանակն և զկործանելն Երեքոզի ապրեցուցանէն զԲանաբ պոսնիի. զոր առեալ Մարմոն իւր կնութեան. քաղաք շինէ զԲեդղանէ մի սանմանս Յուզայ. և ծնանէր զԲոսս. և Բոսս առ իւր կին զՀուսթ

«... և Նասոն ծնանի զՄարմոն Այս Մարմոն իշխան էր ցեղին Յուզայ, յորժամ անցոյց Յեսու ընդ Յորդանան զորդիսն Իսրայէլի, գերկոտասոն ցեղիցն բանակաւ և ի կործանման Երեքոզի, ապրեցուցեալ Յեսու զԲանաբ պոսնիկն, ետ զնա ի կնութեան Մարմոնի. և քաղաք շինէր սա ինքեան զԲեթղեհէմ ի գե-

Մովսէսաց ի զԲնով աւելիցի հազարդ տարնութեան արգարոց. և ի Հուսթա ծննդեանն ծնաւ ազգ սանն Դաւթի. և ի նոցա դաւակնն ծնաւ քրիստոս. և Բոսս ծնաւ զՍիմէթի. և յՍիմէթի ծնաւ զԵսայ. և յԵսայ սասց ոչ ինչ կրս<ն>ես իշխանս Յուզայ Իսկ Երբաթա բացումն ասէ. վասնդի ի նմա Երանելին Սամուէլ աւժանէր զԴաւիթ թագաւոր Աստուածաբն. զոր մարդարն կանխաւ ճառեալ ի քէն Ելցէ ինձ իշխան որ հոգիսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ. մեծ նահապետին Յակոբաւ լցաւ տարնութիւն որ սասց. մի պակասեցէ իշխանս Յուզայէ. մինչև ի զայն որոյ իւր է թագաւորութիւն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց. ոչ վասն Դաւթի ասացաւ մարդարութիւն. այլ որ ի դաւակն Դաւթի էա զճըշմարիտ մարդեղութիւնն. ի Բեթղեհէմ որ կոչեցաւ. քաղաք Դաւթի ծնաւ ի սուրբ կուսէն. ի սմա բանայ զուսն տեսութեան տիեզերաց, զարարչական բանին մարմնաւայ ճշմարիտ, որ առաջին է, և ոչ կրտսր քաղաք դաւազանին Յուզայ: Ե՛ր քէն Ելցէ ինձ իշխանս, ոչ է ըստ Դաւթայ և կամ ըստ մաքուր թագաւորաց ճառեալ, որք միայնում Իսրայէլի տիրեցին, այլ ի Բեթղեհէմ ծնելոյն ի կուսէն. որ տիրեաց տիեզերաց աստուածաբար: Ոչ մի հրէայքն միայն ճոխացին մարդեղութեամբն. առաջին հաւատալ ի Քրիստոս. զի և հեթանոսաց անմաքուր կանայք ի դոտերացն Իսրայէլի յաշորդեցին մաքրութիւն Թամար, Բախար, Հուսթ. զի և հեթանոսաց պարծեսցի ժողովուրդն պարծեսցին. այսպէս ունելով նախամայրք սրբոյ կուսն. զի վորպէս հրէայքն թագաւորովքն պարծին և նահապետեցն. սուրբ կուսին նախաբարք. նմանապէս և սուրբ Եկեղեցի

տինս Յուզայ. և ի սմանէ ծնանէր զԲոսս և Բոսս առ կին զՀուսթ մովսէսացի, և ի նմանէ ծնանէր զՍիմէթ, և Սիմէթ ծնանի զԵսայ, և Եսայ ծնանի զԴաւիթ: Սա է մարդարէն հոգիսան խոտովանութիւնն. Ե՛լ ինչ կրտսր ես յիշխանս Յուզայ: Իսկ Երբաթա՝ թագաւորի բացումն, վասն զի ի սմա և Սամուէլ օծեալ իւրով զԴաւիթ, զոր մարդարէն նախաճառեալ, զի քէն Ելցէ ինձ իշխան որ հոգիսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Մեծ ի նահապետին լցաւ օրհնութիւն, անպակաս ասացեալ պես ի Յուզայէ, մինչև ի զայ՛ որոյ իւր է թագաւորութիւնն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց: Ոչ վասն Դաւթայ ճառեալ զայս մարդարէացաւ, այլ վասն որ ի դաւակն Դաւթի ճըշմարիտ էա զմարմնաւորութիւնն: Մնայ ի սուրբ կուսէն ի Բեթղեհէմ որ Դաւթի կոչեցաւ. քաղաք: Ի սմա բանայ զուսն տեսութեան տիեզերաց, զարարչական բանին մարմնաւայ ճշմարիտ, որ առաջին է, և ոչ կրտսր քաղաք դաւազանին Յուզայ: Ե՛ր քէն Ելցէ ինձ իշխանս, ոչ է ըստ Դաւթայ և կամ ըստ մաքուր թագաւորաց ճառեալ, որք միայնում Իսրայէլի տիրեցին, այլ ի Բեթղեհէմ ի կուսէ ծնեցելոյ, և տիրեալ տիեզերաց աստուածաբար: Եւ զի մի շրէայքն ճոխացին միայն ինքեանց զմարմնաւորութիւնն հաւատալով, զի և ի հեթանոսաց անմաքուր կանայք զըստերաց Իսրայէլի յաշորդեցին մաքրութիւն, Թամար, Բախար, Հուսթ. զի և հեթանոսաց պարծեսցի ժողովուրդն, այսպիսի ունելով նախարար սրբոյ կուսին Ձի որպէս շրէայք պարծին թագաւորոջ և նահապետոջ, նախապէս և Եկեղեցի սուրբ խնդաղէ տեղեանս, Թամա-

<sup>1</sup> Տես «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ պ. Ֆէթթէրի», թարգմանութեամբ Հ. Տաշյանի, 1895 թ., էջ 98—101:



Զարգարայրի և Մովսես քերթողին վերագրվող հատի առաջին յերեսը

անդրին. Հուսթաւ. և Ռահարաւ. և Քամարաւ. և զեկեալ փրկութիւն նոցա առնելով ընդ թագաւորսն և ընդ նահապետսն զմեծ և զառաջին կանայսն զԲեղղանէմ հասարակաց արար. զաստուածընկալ աշըն հաւատապէս զաստղն անջատակի, զմոզսն անորիշ. զմարմնացեալ ըանն. յերկակի մասանց. յառաքինի կանանց որ ի հեթանոսաց. ի թագաւորացն և նահապետացն որ յիւրայեւի. ի սրբոյ կուսէն հասարակաց

բաւն, Բախարաւն, Հոսթիաւն: Եւ զերեկի փրկութիւնսն նոցա առնելով ընդ թագաւորս և ընդ նահապետս, որպէս զմեծ և զառաքինի կանայս. զԲեթղեհէմ հասարակարար զաստուածընկալ աշըն, հաւատապէս զաստղն, անջատակի զմոզսն, անորիշ զմարմնացեալ Բանն: Յերկակաղ մասանց, յանառաքինի կանանց՝ որք ի հեթանոսաց, ի թագաւորաց և ի նահապետաց որք յիւրայեւի, ի սրբոյ կուսէն հասարակաց փայլեալ

Փայլեաց անմուտ արեգակն, որ ջառագրեաց զընթանուր տիեզերս աննայն. . . »:

(Զեռագիր թիվ 2042 (2054), թիւթ 325ա—բ):


անմուտ արեգակն, ջահագրեաց զընթանուր տիեզերս. . . »:

(Մովսէսի Պորենացոյ, Մասենագրութիւնք, Վենետիկ, 1865 թ., եջ 286—87, «Պատասխանի թղթոյն Սահակայ»):

Համեմատությունից պարզ յերևում է, վոր այդ յերկու անբատերում եյական տարբերություններ չկան: Յեղած տարբերությունները զրչական բնույթ ունեն: Ներկա ճառը կազմող հեղինակը, ինչպես շատ ճիշտ կուտնիլ է ակադ. Հ. Մանանդյանը, վերցրել է Պորենացու «Պատասխանի թղթոյն Սահակայ» աշխատությունից: Սահայն, կրկնում ենք, ակադ. Հ. Մանանդյանի մյուս յեզրակացությունը՝ նշված ճառի հիման վրա Պորենացուն Զարգարիա կաթողիկոսի ժամանակակից մարդ համարելը, ինչպես ցույց ենք տվել վերևում, չի հաստատվում:

«ՄՂՈՆԱԶՍՓՔ»-Ն «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ԵՄԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Ե

«Մղոնաչափք»-ի և «Աշխարհացոյց»-ի մեջ յեղած կապի վրա կանգ է առել արդեն ակադ. Հ. Մանանդյանը իր «Պորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ (եջ 84—89) և հիմնվելով «Աշխարհացոյց»-ի ու «Մղոնաչափք»-ի աշխարհագրական անունների նմանության վրա, հնարավոր է համարել «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի հեղինակի գործ լինելը, միայն այն վերապահությամբ, վոր այդ զրվիլ է վնջ թե 7-րդ դարում, այլ ավելի ուշ—9-րդ դարում: Ակադեմիկ Հ. Մանանդյանի հիմնական կովանք, վոր հիմք է տվել յենթադրելու, թե «Մղոնաչափք»-ը Երևակացու ժամանակից ուշ, IX դարում գրված աշխատանք է, հանդիսացել է «Ալդոդա» և «Բասրա» քաղաքների հիշատակումը «Մղոնաչափք»-ում, վորոնք առևտրական կարևոր կենտրոններ եյին դառել և կարող եյին հիշվիլ 7-րդ դարից հետո: Յերևում է, ակադ. Հ. Մանանդյանը ծանոթ է միայն «Աղվէսագրքի» և ՀնՍՀ մատենադարանի 2679 և 1737 թվակիր ձեռագրերի «Մղոնաչափք»-երի հետ, վորոնք լավ որինակներից չեն: Նա իր տրամադրության տակ չի ունեցել ՀնՍՀ մատենադարանի «Մղոնաչափքեր»-ի լավագույն մյուս որինակները, վորոնք հիմք կտային ավելի համարձակ յեզրակացության:



Զարբարաթիւն և Մովսէս քերթողին վերադրվող ճառի առաջին յերեսը:

տեղովն. Հոութու. || և Ռանարաւ. և Քամարաւ. և զեկեալ փրկութիւն նոցա առնելով ընդ թագաւորսն և ընդ նահապետսն զմեծ և զառաջին կանայսն զԲեղզահէմ հասարակաց արար. զաստուածընկալ աչրն հաւաստապէս զաստղն անշատակի, զմոզսն անորիշ. զմարմնացեալ բանն. յերկակի մասանց. յատարինի կանանց որ ի հեթանոսաց. ի թագաւորացն և նահապետացն որ յԻսրայէլի. ի սրբոյ կուսէն հասարակաց

բան, Բախարան, Հուսթեան: և զերեկի փրկութիւնն նոցա առնելով ընդ թագաւորս և ընդ նահապետս, որդէս զմեծ և զառաքինի կանայս, զԲեթղեհէմ հասարակարար զաստուածընկալ աչրն, հաւաստապէս զաստղն, անշատակի զմոզսն, անորիշ զմարմնացեալ Բանն: Յերկակազմ մասանց, յանառաքինի կանանցն որք ի հեթանոսաց, ի թագաւորաց և ի նահապետաց որք յԻսրայէլի, ի սրբոյ կուսէն հասարակաց փայեալ

փայեաց անմուտ արեգակն, որ Զահաւորեաց զընթանուր տիեզերս ամենայն. . . »

անմուտ արեգակնն, Զահաւորեաց զընթանուր տիեզերս. . . »

(Զեռագիր թիվ 2042 (2054), թերթ 325ա—բ):

(Մովսէսի Պորենացոյ, Մասենազրութիւնք, Վենետիկ, 1865 թ., էջ 286—87, «Պատասխանի թղթոյն Մահակայ»):

Համեմատությունից պարզ յերևում է, վոր այդ յերկու տեքստերում էյական տարբերություններ չկան: Յեղած տարբերությունները գրչական բնույթ ունեն: Ներկա ճառը կազմող հեղինակը, ինչպես շատ ճիշտ կուտնի և ակադ. Հ. Մանանդյանը, վերցրել է Պորենացու «Պատասխանի թղթոյն Մահակայ» աշխատությունից: Սակայն, կրկնում ենք, ակադ. Հ. Մանանդյանի մյուս յեզրակացությունը՝ նշված ճառի հիման վրա Պորենացուն Զարբարա կաթողիկոսի ժամանակակից մարդ համարելը, ինչպես ցույց ենք տվել վերևում, չի հաստատվում:

«ՄՂՈՆԱԶԱՓԻՔ»-Ն «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅ»-Ի ԵՄԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Ե

«Մղոնաչափք»-ի և «Աշխարհացոյց»-ի մեջ յեղած կապի վրա կանգ է առել արդեն ակադ. Հ. Մանանդյանը իր «Պորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ (էջ 84—89) և հիմնվելով «Աշխարհացոյց»-ի ու «Մղոնաչափք»-ի աշխարհագրական անունների նմանության վրա, հնարավոր է համարել «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի հեղինակի գործ լինելը, միայն այն վերապահությամբ, վոր այդ գրվել է վնչ թե 7-րդ դարում, այլ ավելի ուշ—9-րդ դարում: Ակադեմիկ Հ. Մանանդյանի հիմնական կովանը, վոր հիմք է տվել յենթադրելու, թե «Մղոնաչափք»-ը Շիրակացու ժամանակից ուշ, IX դարում գրված աշխատանք է, հանդիսացել է «Ալդոա» և «Բասրա» քաղաքների հիշատակումը «Մղոնաչափք»-ում, վորոնք առևտրական կարևոր կենտրոններ էյին դառել և կարող էյին հիշվել 7-րդ դարից հետո: Յերևում է, ակադ. Հ. Մանանդյանը ծանոթ է միայն «Աղվէսագրքի» և ՀՆՍՆ մատենադարանի 2679 և 1737 թվակիր ձեռագրերի «Մղոնաչափք»-երի հետ, վորոնք լավ որինակներից չեն: Նա իր տրամադրության տակ չի ունեցել ՀՆՍՆ մատենադարանի «Մղոնաչափքեր»-ի լավագույն մյուս որինակները, վորոնք հիմք կտային ավելի համարձակ յեզրակացության:



ՀնՄՀ մատենադարանի 30 ձեռագիր «Մղոնաչափք»-երի ռուսալեզու թղթաբանության արդյունքները այժմ գալիս են լիովին հաստատելու տեղի։ 2. Մանանդյանի յեղբակացու թղթաբանը՝ «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի հավելված լինելու հարցում։ Պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը վերջացնելով աշխարհագրութեան շարադրութունը, իրոք շարունակել է «Մղոնաչափք»-ը՝ ցանկանալով համառոտ ձևով տալ գլխավորապես Արեւիկքի առեարկան կարևոր մագիստրալները և նրանց վրա գտնվող առանձին կարևոր քաղաքները՝ մղոնաչափերով։ Ռուսալեզու թղթաբանի գործը հետագայում հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում տալ այստեղ ՀնՄՀ մատենադարանի ձեռագրերի «Մղոնաչափք»-ի բերվող գրաքերի հասավորված ժամանակագրական կարգով։

1. «Վասն գիտութեան մղոնաչափաց»։— Ընդորինակված է 971 թվին։ Գրված է Դուբոսկի և (Դավթի վորդին)։ Ամենահին հայկական մեղ հասած թղթե ձեռագիրն է։ Գրված է միասուն միջին մեսրոպյան յերկաթագրով։ «Մղոնաչափք»-ը շարունակվում է դրամական չափերով (տես թիվ 2679 (102), թերթ 206ա)։

2. «Մղոնահամարք երկրաչափութեան»։— Ընդորինակված է XIII դ.։ Գրված է Սարգիսն և։ Վերջում ունի «Աշխարհացոյց»-ի ընդարձակ վերջաբանը։ Գրված է թղթի վրա, միասուն, բոլոր գրով (տես թիվ 4166, թերթ 209ա-բ)։

3. «Մղոնաչափք»։— Գրված է պանդանակի վրա։ Գրչութեան ժամանակը հայտնի չի։ Պանդանակին կից ձեռագիրն ունի 1353 թ. գրչութուն։ Գրված է թղթի վրա, միջին մեսրոպյան գրով (տես թիվ 5600, վերջին պանդանակը)։

4. «Յ(ա)ղ(ա)զս Մղոնաց»։— Ընդորինակված է 1413 թ. Թովմա Մեծոփեցու կողմից։ Վերջինիս մի հիշատակութունից յերևում է, վոր նա արտագրել է Սլաթա վանքում գտնվող մի հին ձեռագրից։ Ձեռագրի նյութը— թուղթ է։ Գրված է միասուն, բոլոր գրով։ «Մղոնաչափք»-ը շարունակվում է Շիրակացու ծանրութեան չափերով (տես թիվ 599, թերթ 51ա-բ)։

5. «Յաղազս երկրաչափութեան»։— Ընդորինակված է Մատթեոս վարդապետի կողմից, XV դարում։ Գրված է թղթի վրա, բոլոր գրով (տես թիվ 5184, թերթ 57բ)։

6. «Մղոնահամարք այս են»։— Ընդորինակված է Վարդանի

վորդի Դավթի կողմից։ Գրչութեան թվականը— 1443 թ. և։ Գրված է թղթի վրա, միասուն, բոլոր գրով, տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում (տես թիվ 582, թերթ 173բ—174ա)։

7. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է XV դարում Պետրոս գրչի կողմից։ Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում։ Վերջում ունի ընծայական վերջաբան։ Գրված է թղթի վրա, յերկսուն, բոլոր գրով (տես թիվ 1267, թերթ 363բ—364ա)։

8. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է 1597 թ. Ղազար Բաբրդյու կողմից։ Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում։ Վերջում ունի «Աշխարհացոյց»-ի ընծայական վերջաբանը։ Գրված է թղթի վրա, յերկսուն, նոսր գրով (տես թիվ 1486, թերթ 104բ)։

9. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է XVI դարում։ Գրչին անհայտ է։ Գրված է թղթի վրա, միասուն, նոսր գրով (տես թիվ 3961, թերթ 28ա—29ա)։

10. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է 1600 թ. Յերեմիա գրչի կողմից։ Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում։ Ձեռագիրը— թուղթ է, գրված է յերկսուն, նոսր գրով (տես թիվ 2019, թերթ 291ա-բ)։

11. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է 1608 թ., Պոլսում, Պետրոս գրչի կողմից։ Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում։ Ձեռագիրը— թուղթ է։ Գրված է միասուն, նոսր գրով (տես թիվ 5613, թերթ 299ա-բ)։

12. «Մղոնաչափք»։— Ընդորինակել է Սիմեոն եպս.-ը, Ղեմբերգում, 1614 թ.։ «Մղոնաչափք»-ն սկսում է փոքրիկ ծանոթութեամբ՝ մղոնական չափերի մասին, մի քանի տող խոսվում է ասպարիզական չափերի մասին և անցնում բուն տեքստին։ «Մղոնաչափք»-ի այս տեքստն իր բովանդակութեամբ համապատասխանում է Ալիշանի ոգտագործած Սարգիս գրչի «Մղոնաչափք»-ին։ Գրված է թղթի վրա, յերկսուն, նոսր գրով (տես թիվ 29, թերթ 293—295)։

13. [«Մղոնաչափք»]։— Ընդորինակված է 1624 թ. Աստվածատուր վարդապետի կողմից։ Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում։ Գրչութունը— բոլոր է։ Գրված է թղթի վրա, յերկսուն (տես 2748, թերթ 238ա-բ)։

14. «Մղոնաչափք»։— Ընդորինակված է 1653 թ., Շողթում։

Ձեռագիրը — թուղթ է: Գրուելու են — նոսր է: «Մղոնաչափք»-ն իր վերջում պահել է «Աշխարհացոյց»-ի ընծայական վերջաբանը (տես 4205, թերթ 470ա):

15. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1657 թ. Ալեքսանդրի կողմից նորաշինում: Տեղավորված է վարդանի «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Գրված է թղթի վրա, միասյուն, բոլոր գրով (տես թիվ 1487, թերթ 50ա-բ):

16. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1664 թ.: Գրիչն անհայտ է: Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Ձեռագիրը — թուղթ է: Գրված է յերկսյուն, նոսր գրով (տես թիվ 1717, թերթ 170ա-բ):

17. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1665 թ. Յեփրեմ Տաթևացու կողմից, Կեսարիայում: Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Գրուելու են — նոսր է: Ձեռագիրը — թուղթ է (տես թիվ 2291, թերթ 105ա—106ա):

18. [«Մղոնաչափք»]: — Ընդորինակված է XVII դարում: Ձեռագրի գրիչն ու գրչուլթյան վայրն անհայտ են: Ձեռագրի նյութը — թուղթ է: «Մղոնաչափք»-ն իր վերջում ունի ընծայական վերջաբան (տես թիվ 1127, թերթ 227ա-բ):

19. [«Մղոնաչափք»]: — Ընդորինակված է 1672 թվին Նահապետ Շոռոթեցու կողմից: Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Վերջում ունի ընծայական վերջաբանը: Գիրը — նոսր է: Նյութը — թուղթ է: Գրուելու են — միասյուն է (տես թիվ 3941, թերթ 280բ—281ա):

20. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1676 թ. Գրիգոր Յերեվանցու կողմից: Տեղավորված է «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Ձեռագրի նյութը — թուղթ է: Գիրը — նոսր է (տես թիվ 1864, թերթ 296ա—297ա):

21. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1677 թ. Սարգիս յեպ. Յեղիկեցու կողմից, Յերուսաղեմում: Ձեռագրի նյութը — թուղթ է, գիրը նոսր է (տես թիվ 3657, թերթ 40ա-բ):

22. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է XVII դարում: Ձեռագրի գրիչն ու գրչուլթյան վայրն անհայտ են: Նյութը — թուղթ է (տես թիվ 1737, թերթ 72բ—73ա):

23. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1691 թ. Ներսես սար-

կալագի կողմից: Ձեռագրի նյութը — թուղթ է: Տեքստը վերջում թերի յե (տես թիվ 1459, թերթ 190բ):

24. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է XVIII դ.: Ձեռագրի գրիչն ու գրչուլթյան վայրն անհայտ են: Նյութը — թուղթ է, գիրը — նոսր (տես թիվ 7190, թերթ 95բ—96ա):

25. «Մղոնաչափք»: — Ընդորինակված է 1722 թ. Ալեքսանդրի կողմից: Նյութը — թուղթ է: Գիրը — նոսր է (տես թիվ 7993, թերթ 100բ):

«Մղոնաչափք»-ի ներկա բիրտագրափիան լրիվ չի: ՀնՄՀ Պետ. մատենադարանի ձեռագրերում կան պատմագիտական այնպիսի ժողովածուներ, վորոնք դեռևս ուշագիտը չեն նայված:

«Մղոնաչափք»-երի միջև գոյություն ունեցող կապը, կամ ինչպես, սովորաբար, ասվում է — ճյուղագրությունը, մենք դժվարանում ենք տալ, վորովհետև առանձին ընդորինակությունների միջև յեղած կապի պարզաբանումը, կոնկրետ հիշատակությունների բացակայության պատճառով, անհնար է:

Կարևոր հետևությունը, վոր կարելի յե հանել ՀնՄՀ մատենադարանի ձեռագրերում պահված «Մղոնաչափք»-երի ուսումնասիրությունից, դա նրանց ունեցած սերտ կապի հարցն է «Աշխարհացոյց»-ի տեքստի հետ: «Մղոնաչափք»-ի տեքստերի մեծ մասը ընդորինակված են «Աշխարհացոյց»-ի հավելվածում: Ուշագրություն արժանի յե, վոր «Մղոնաչափք»-երը վորպես հավելված պահել են հատկապես «Աշխարհացոյց»-ի լավագույն և հնագույն սրինակները (թիվ 582 և ուրիշները): Ծիշտ է, պատահում են պատմագիտական բովանդակությամբ հնագույն այնպիսի ձեռագրեր ևս, ուր «Մղոնաչափք»-երը պատահում են «Աշխարհացոյց»-ից անդամահատված ձևով, սակայն այդ ժողովածուները սովորաբար պատմագիտական մանր նյութերի ժողովածուներ են և դրանց նպատակն է յեղել զանազան մատենագիրներից ծաղկաբաղ ձևով արված ներկայացնել տարբեր գիտությունների դժով հասվածներ միայն:

Կարևոր է նշել նաև, վոր «Մղոնաչափք»-ի ընդորինակությունները պարունակող ձեռագրերը սովորաբար պարունակում են նաև Շիրակացու մյուս աշխատությունները («Յաղագս կռոց», «Յաղագս չափոց», «Յաղագս ընթացից արեղական», «Աստեղաբաշխական երկրաչափություն» և այլն): «Մղոնաչափք»-ի Շիրակ-

կացու աշխատութիւններէ հետ և նրան կապակցված հանդես դալը, նրանց միջև զոյուլթյուն ունեցող կապի տեսակետից, անկասկած, ունի երկուսն նշանակութիւն: Հետագայում այլ փաստերից մենք կտեսնենք, վոր «Մղոնաշափք»-ի այդպիսի կապակցութեան մեջ հանդիպելը պատահականութիւն չէ:

Ուշագրութեան արժանի յե նաև այն, վոր վորոշ «Մղոնաշափք»-ի տեքստերը, անդամ այն գեղարու, յերբ անդամահատված դրութեան մեջ են ընդորինակված, իրենց կից պահել են «Աշխարհացոյց»-ի հեղինակի վերջաբանը:

«Մղոնաշափք»-ի «Աշխարհացոյց»-ի հավելված լինելու հարցում ամենակարևոր փաստը—այդ վորոշ «Աշխարհացոյց»-երի վերջում պահված հեղինակի մի հիշատակութիւնն է: Այդ հիշատակութիւնը պահել են մեր մատենագարանի մի շարք ձեռագրեր: Աշխարհագրութեան վերջում, այնտեղ, ուր վերջանում է Սյունացոց աշխարհագրութիւնը («... կիսահաք, կիսամարդք, անգլուխք») և սկսում «Մղոնաշափք»-ը, հեղինակն ամփոփում է հետևյալ խոսքերով. «Ահա կատարեցան ամենայն տիեզերք և պատմածք խաւսից և ահա կամիմ զչափ զորա համառտել մղոնախաղաց ոտնաշափութեամբ՝ աւժանդակաբար ասպարէզաճէմ դիտաւորութեամբ»<sup>1</sup>: «Աշխարհացոյց»-ի հեղինակը շատ պարզ հայտնում է, վոր վերջացրել է «Ամենայն տիեզերք և պատմածք խաւսից»-ը և ցանկանում է այժմ նրա շափերը համառտել «մղոնախաղաց ոտնաշափութեամբ»:

Այն մասին, վոր իրոք այդ հիշատակութիւնը «Աշխարհացոյց»-ի հեղինակինն է և վնչ ուրիշ մեկինը, այդ պարզ յերևում է հեղինակի «Աշխարհացոյցի»-ի վերջում թողած վերջաբանից, վորի վրա մենք գեռ առիթ կունենանք կանգ առնել:

ՀՅՍՀ մատենագարանի ձեռագրերում յեղած «Մղոնաշափք»-ի ուսումնասիրութիւնից պարզվում է դարձյալ, վոր մեզ հասած «Մղոնաշափք»-երն ունեն յերեք խմբագրութիւն, վորոնցից ամենից հինը և արժեքավորը, գծրախտաբար, չի հրատարակված: «Մղոնաշափք»-ի այդ լավագույն ու հնագույն որինակը պահվել է ՀՅՍՀ մատենագարանի 582 թվակիր ձեռագրի «Աշ-

<sup>1</sup> «Աշխարհացոյց»-ի հեղինակի այս հատվածը տպագրվել է «Ազգասագրում» «Մղոնաշափք»-ի հետ միասին:

խարհացոյց»-ի հավելվածում: Այս «Մղոնաշափք»-ը՝ մեզ հայտնի մյուս որինակներից տարբերվում է նրանով, վոր նա իր մեջ չունի աշխարհագրական այն անունները, վորոնք ավելացվել են ուշ շրջանում: Այստեղ չկան, որինակ՝ վնչ Ակոզա և վնչ Ել Բասրա քաղաքները, վորոնք Սորենացու ժամանակի վորոշման հարցում մեր բանասիրութեան մեջ այնքան թյուրիմացութիւններ է պատճառ են դառել: Մենք անհրաժեշտ ենք համարում բերել այս խմբի «Մղոնաշափք»-ի տեքստն ամբողջութեամբ.—

«Ի Դունա(յ) մղոն Մ մինչև ի Կարնո(յ) (բնագրում—Քարնո) քաղաք. անչի Պղոն ձ մինչև ի փոս աշխարհն Հա(յ)ոց և Յունաց. անտի մղոն Ղ ի Կողոնիա բերդ քաղաքաց. անչի մղոն ձ մինչև ի Նիոկեսարիա. անչի մղոն Ձ մինչև յԱմասիա. անչի մղոն ձ՛ մինչև ի Գանգր. անչի մղոն ՅԻ ի Պոնդպաւլիս. անչի մղոն ՅԾ մինչև ի Տրապաւլիս (բնագրում—Առիպաւլիս). անչի մղոն ՌԾ մինչև յԱբրիկէ. անչի մղոն Ձ մինչև ի Սեփաէ. անչի մղոն Ռ մինչև յՈվակիանոս ծով անձանթ» (ՀՅՍՀ Պետ. մատ. ձեռագիր № 582, թերթ 182բ—183ա):

«Աշխարհացոյց»-ի առաջին խմբի այս տեքստից յերևում է, վոր «Մղոնաշափք»-ը իր ներկա խմբագրութեամբ գրված է վոչ թե IX դարում, այլ VII դ. Սալիֆաթի նվաճումից առաջ:

Յերկրորդ խմբի «Մղոնաշափք»-երը — զբանք «Ազվեսագրում» հրատարակված «Մղոնաշափք»-երն են<sup>1</sup>: Այդ խմբին է պատկանում նաև 971 թվին ընդորինակված ՀՅՍՀ Պետ. մատենագարանի նշանավոր (թիվ 2879) ձեռագրի «Մղոնաշափք»-ը, վորի պատճենը մատենագարանից ուղարկվել է ակադեմիկ Հ. Մանանդյանին և վորը նա հրատարակել է: Այս «Մղոնաշափք»-ը նախորդի համեմատութեամբ խմբագրված որինակ է: Մեզ թվում է, վոր նրա խմբագրութիւնը պիտի յեղած լինի 8-րդ կամ 9-րդ դարերում: «Մղոնաշափք»-ի այս տեքստում ավելացվել են առևտրական մազիստրալի նոր ուղղութիւններ և այդ մազիստրալի վրա բարձրացած վարչական ու առևտրական նոր այնպիսի քաղաքներ, վորոնք դարգանալ սկսեցին միայն Սալիֆաթի գերիշխանութեան վերջին շրջանում:

<sup>1</sup> Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք, 1698, էջ 40—42:

Յերբորդ խմբի «Մզոնաչափք»-ը — այդ Դ. Ալիշանի հիշած «Մզոնաչափք»-ն է, վորը խմբագրված է վոսմ Սարգիս գրչի կողմից: Նա իր կողմից նախորդ «Մզոնաչափք»-ի վրա ավելացրել է աստղաբիզական չափերը եւ: Այս խմբի «Մզոնաչափք»-ի տեքստը պահվել է ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 20 ձեռագրում: Անհրաժեշտ է նշել, վոր այս տեքստը, մեր կարծիքով, վերստին խմբագրվել է յերկրորդ խմբի «Մզոնաչափք»-ից:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր «Մզոնաչափք»-ի նախնական տեքստը խմբագրվել ու վերախմբագրվել է ուշ շրջանում: Խմբագրողները «Մզոնաչափք»-ում մտցրել են իրենց ժամանակի առևտրական մագիստրալի նոր ուղղութիւններն ու նրանց վրա բարձրացած առևտրական նոր կենտրոնները: «Մզոնաչափք»-ի տեքստում ուշ ժամանակում մտած այդպիսի կենտրոններից են հանդիսացել «Բասրա» և «Ակոդա» քաղաքները, վորոնք թյուրքի-մաղարար կռվաններ են ծառայել Պորենացուն ուշ շրջանը բերող բանասերների մտա:

«Մզոնաչափք»-ի նախնական տեքստի ուսումնասիրութիւններից պարզ յերևում է, վոր «Մզոնաչափք»-ն իր նախնական խմբագրութեամբ գրված է VII դարում: Անհրաժեշտ է նշել, վոր այդ ժամանակում, հայկական մատենագիրներից միակ անձնավորութիւնը, վոր կարող էր գրադվել տարածութեան այդպիսի չափերով, կարող էր լինել միայն Անանիա Շիրակացին:


«Մզոնաչափք»-ի սկզբնաղբյուրների նոր ուսումնասիրութիւնը, ինչպես տեսնում ենք, հաստատում է Դ. Ալիշանի՝ «Մզոնաչափք»-ի հնութեան մասին վաղուց հայտնած այն կարծիքը, վոր «Հեղինակն՝ թուի Անանիա Շիրակացին, եթէ չիցէ հնագոյն քան զնա որ, զի զրի և ընդ գործս սորա և ընդ աշխարհագրութեան Պորենացոյ»<sup>1</sup>:

#### ԱՍՏՂԱԲԱՇԵԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի հնագոյն ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրութիւններից պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստը «Մզոնաչափք»-ով չի վերջացել: «Մզոնաչափք»-ը շարունակվել է աստղաբաշխական բովանդակութեամբ:

<sup>1</sup> Դ. Ալիշան, Այրարատ, էջ 412:

ուսնցող մի այլ նյութով, վորի վերնագիրն է «Աստղաբաշխական երկրաչափութիւն»: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների հնագոյն վորոշ որինակների «Մզոնաչափք»-երն իրենց կից պահել են այդ նյութը: Այդպիսի ձեռագրերից են թիվ 582, 5154 և 1717:



Մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի շարունակութեամբ հանդիսացող Շիրակացու «Աստղաբաշխական երկրաչափութիւնը»

Աստղաբաշխական բովանդակութեամբ ուսնցող այս նյութը, վորքան մեզ հայտնի չէ, դեռ չի հրատարակված: Նա չի ողտադորժած նաև առանձին ուսումնասիրութիւնների մեջ: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ տեքստն ամբողջութեամբ:

Ի հարաւային ծայրէն մինչև ցհելուսային շրջանակն ասպարէզք ԾԸ բիւր. ի սրտէ երկրէ մինչև յորում բնակեմքս՝ ասպարէզք երկու բիւր ԸԳ է. ի մերմէ բնակութենէս մինչև գունդն լուսնի՝ ասպարէզք ԴԳ բիւր ԸԺ. մինչև ցգունդն փայլածսին՝ ասպարէզք ճԶԳ բիւր ԳԺ է. մինչև գգունդն լուսարեբին՝ ասպարէզք ՆՀէ բիւր ԸԳ է. մինչև ցգունդն արեգական՝ ՎԴԳ բիւր (այստեղ «բիւր»-ը գրված է հնագույն «բեր» ձևով, թողնում ենք այնպես, ինչպես բնագրումն է) Ժ. մինչև ցգունդն հրատին՝ ասպարէզք(ք) ՎՈԺԲ բիւր. մինչև ցգունդն լուսնթագին ասպարէզք ԲՄԳ բիւր մինչև ի ցգունդն երևակին (բնագրում — երակին)՝ ասպարէզք(ք) ԺՈՒ եւթն ճԿԸ բիւր կէս, երբեակ. մինչև ցութեր-բորդ գունդն՝ ասպարէզք(ք) ԾԶՈՒ ԹՃԽ և զբեր և երբորդ. թէ հաւատայ ոք վիպասանիս» (ՀԽՍՀ Պետ. մատ. ձեռագիր թիվ 582, թերթ 183ա):

Աստղաբաշխական այս նյութը հետաքրքիր է վնչ միայն այն տեսակետից, վոր նա աստղաբաշխութեան պատմութեան և ընդհանրապես կուլտուրայի պատմութեան համար արժեքավոր նյութ է, այլ վոր նա խոշոր չափով ոգնում է մեզ պարզելու նաև «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Նյութի բովանդակութեանը նայելով, առանց դժվարութեան համարձակ կարելի չէ ասել, վոր զբա հեղինակը ուրիշ վնչ վոք չի կարող լինել, քան Անանիա Շիրակացին: Հին հայկական մեզ հայտնի մատենագրերից նա յե միայն, վոր կարող եր կատարած լինել աստղաբաշխական այդ բարդ հաշիվները՝ վորձեբով վորոշել յերկրագնդի մյուս մոլորակ-ների միջև գոյութիւն ունեցող հեռավորութեան չափը:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի վորոշ ձեռագրերում այդ նյութը հանդիպում է մեզ «Աշխարհացոյց»-ից անջատված գրութեամբ, «Մղոնաչափք»-ի հետ միասին, կամ բոլորովին առանձին, բայց միշտ Շիրակացու աշխատութիւնների շարքում: Նման ձեռագրերից է, որինակ, ՀԽՍՀ Պետ. մատենադարանի 13-րդ դարի գրչութիւն ունեցող մի հետաքրքիր ձեռագիր, վորը գտնվում է թիվ 4166-ի տակ (տես թերթ 209ա—բ): Այս ձեռագրում մեր հիշած աստղաբաշխական նյութը տեղավորված է «Մղոնաչափք»-ից

հետո, Շիրակացու աշխատութիւնների շարքում: «Մղոնաչափք»-ի վերնագիրն է— «Մղոնահամարք երկրաչափութեան», իսկ աստղաբաշխական նյութինը— «Աւղաչափութիւն»:

ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 4166 ինչպես և այլ ձեռագրերում, «Մղոնաչափք»-ի և աստղաբաշխական այլ նյութի՝ Շիրակացու աշխատութիւնների շարքում ընդորինակվելը, անկասկած, պատահականութիւնն է: Նա ասպարէզում է միևնույն հեղինակի գործ լինելու փաստը:

Աստղաբաշխական այս նյութի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ, բարեբախտաբար, մեզ հասել է մատենագրական մի պարզ վկայութիւն: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 2492 (թերթ 51ա) և 4284 ձեռագրերում աստղաբաշխական այդ նյութի վերնագրում շատ պարզ հիշված է Շիրակացու անունը — «Անանիայի Շիրակացոյն ասացեալ է, հայոց վարդապետի, յաղապ բարձրութեան երկնից»: Աստղաբաշխական այս նյութը «Աշխարհացոյց»-ի տեքստի աստղաբաշխական նյութի համեմատութեամբ խոշոր փոփոխութեան և յենթարկվել միջնադարյան ընդորինակողների կողմից, նրա մեջ մտել են մեծ չափով արիթմարական տարբեր, սակայն հիմնական բովանդակութիւնը մնացել է նույնը:

Մատենագրական այս տեղեկութիւնը, մենք կարծում ենք, կարևոր փաստ է «Աշխարհացոյց»-ի հեղինակը վորոշելու հարցում: Յեթե «Մղոնաչափք»-ը «Աշխարհացոյց»-ի շարունակութիւնն է կազմել, իսկ «Օղաչափք»-ը («Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը)— «Մղոնաչափք»-ի, իսկ այդ անկասկած է, յեթե վերջինը հայտնի յե Շիրակացու անունով, պարզ է, վոր ամբողջ աշխատութեան հեղինակը — Շիրակացին է: «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը, ինչպես և «Աշխարհացոյց»-ը, հնագույն ընդորինակող գրիչներին հայտնի յե յեղել Շիրակացու անունով, սակայն հետագայում անդամահատվելուց հետո «Աստղաբաշխական երկրաչափութիւն»-ը պահել է իր նախկին հեղինակի անունը, իսկ «Աշխարհացոյց»-ը—վնչ:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ԱՂԲՅՈՒԲՆԵՐԸ

«Աշխարհացոյց»-ի տեքստի վերլուծման հիման վրա, բանասիրութեան մեջ մատնացուց են արվել արդեն մի շարք աղբյուրներ, վորոնք ոգտագործել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը:

նշվել է՝ Պապպոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ը, Պտղոմեոսի «Տիեզերագրութիւն»-ը, Կոստանդին Անտիոքացու (Կոսմաս Հնդկաչու հայտնի աշխարհագրագետի, ինչպէս ապացուցել է պրոֆ. Բ. Պատկանյանը) «Քրիստոնէական տեղագրութիւն»-ը, «Աղեքսանդրի գիրքը», Հովնանէս Մաղաղասի «Ժամանակագրութիւն»-ը և այլն: Վեճ է յեղել միայն մի աղբյուրի շուրջը — Պտղեմեոսի շուրջ — «Աշխարհացոյց»-ի հեղինակն անմիջապէս է ոգտվել Պտղեմեոսից, թե միջնորդաբար, Պապպոսի միջոցով: Սեն-Մարտենը<sup>1</sup>, պրոֆ. Բ. Պատկանյանը<sup>2</sup> և ակադ. Հ. Մանանդյանը<sup>3</sup> հիմնվելով «Աշխարհացոյց»-ի հեղինակի արած այն հիշատակութեան վրա, վոր Պապպոսը համառոտել է Պտղոմեոսից («Եւ առաւել յարտաքս կոյս քան զայս չէ ուրուք գեղը երկրի տեսեալ և կամ գիտացեալ, որպէս տէ Պտղոմէոս. այլ անծանօթ կոչի երկիր և ովկիանոս: Յորոյ ինքնաղիր բարեակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացուց համառօտաբար երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցաք...») (եջ 587—588), յենթադրել են, վոր «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապէս չի ոգտվել Պտղեմեոսից:

Սուբբոյանը հանդել է հակառակ յեզրակացութեան: Նրա կարծիքով, մեզ հասած «Աշխարհացոյց»-ի հայերեն տեքստը Պտղեմեոսի աշխատութեան համառոտ թարգմանութիւնն է: Նա անդամ իր հրատարակած «Աշխարհացոյց»-ը վերնագրել է «Géographie de Moïse de Corène d'après Ptolémée».

«Աշխարհացոյց»-ի հայկական տեքստը Պտղեմեոսի աշխարհագրութեան համառոտ թարգմանութիւնն համարելը, պարզ է, վոր ճիշտ չէ: Այս հարցում միանդամայն ճիշտ է ակադ. Հ. Մանանդյանի դիտողութիւնը Սուբբոյանին: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, ճիշտ է, խոշոր չափով ոգտվել է Պտղեմեոսից, սակայն նա ոգտվել է վորոշ գլուխներում միայն և վոչ ամբողջապէս համառոտել նրա աշխարհագրութիւնը:

Ճիշտ չեն, սակայն, նաև Սեն-Մարտենը, պրոֆ. Բ. Պատկանյանը և ակադ. Մանանդյանը, վորոնք կարծում են՝ թե «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապէս չի ոգտվել Պտղեմեոսից: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, մեր կարծիքով, իր տեքստում

շատ պարզ վկայում է իր՝ Պտղեմեոսից ոգտվելու մասին: «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր առաջաբանում, այնտեղ, ուր նա խոսում է ովկիանոսի մասին և բերում է Կոստանդին Անտիոքացու և Պտղեմեոսի կարծիքներն ովկիանոսի մասին, պարզ հայտնում է իր Պտղեմեոսից անմիջապէս ոգտվելու մասին. «Եւ ոչ միայն զայրեցեալ գօտեան ասեն զովկիանոսս, այլ և զամենայն իսկ երկրավ շուրջ գու. զոր և Կոստանդինոս անտիոքացի ի քրիստոնէական տեղագրութեան ասէ յարգս տապանին անցանելոյ յարևելեան երկրէն առ մեզ ի մէջս կոյս: Բայց՝ Պտղոմէոս, որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն շախեցին, ոչ ասեն շուրջ լինել զովկիանոսս, այլ ի մի կողմանէ յանկեան հիւսիսոյ յարևմտից...» (եջ 589, տող 12—21): Կամ թե չն՝ մի այլ հատվածում «Աշխարհացոյց»-ի հեղինակը խոսելով Երջանիկ Արաբիայի մասին, հետեյալն է գրում. «Իսկ միջոց աշխարհի բնակութիւն մարդկան՝ Պագոսոմէոս զերջանիկն Արաբիա ասէ, բայց ես ոչ հաւատամ» (եջ 592, տող 27—29): Պարզ է, վոր «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակն անմիջապէս է ոգտվել Պտղեմեոսից և զրա համար ել հայտնում է՝ թե այդ «ասում է Պտղեմէոսը», այլապես՝ հարկ չէր լինի այդ ձևով Պտղեմեոսին հիշելը:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի Պտղեմեոսից ոգտվելու, և ընդհանրապէս, նրա ոգտված հիմնական աղբյուրների մասին, սակայն, կա մատենագրական մի պարզ վկայութիւն, վորի վրա ուշադրութիւն չեն դարձրել մեր բանասերները:— ՀԽՍՀ Պետ. մատենագրարանի ձեռագիր «Աշխարհացոյց»-ների վորոշ որինակներ, ինչպէս ասել ենք, պահպանել են մատենագրական մի կարևոր հիշատակութիւն: «Աշխարհացոյց»-ի աղբյուրների մասին հիշատակութիւնն պարունակող մատենագրական այդ տեղեկութիւնը փաստորեն «Աշխարհացոյց»-ի հեղինակի ընծայական վերջաբանն է, ուր և նա հիշում է իր ոգտագործած աղբյուրները: «Աշխարհացոյց»-ի հեղինակի այս վերջաբանը հասել է մեզ մի քանի լսմբագրութեամբ: ՀԽՍՀ Պետ. մատենագրարանի թիվ 1267 ձեռագրի «Աշխարհացոյց»-ում նա ունի հետեյալ բովանդակութիւնը. «Այս յինէն ընծայ քեզ գրատրական, զերծանեալ ի Պորփիրի ներգործութենէն և գեղգեղիոյ մղոնական գրամատիկոս տառիցն և ի բազմավէպ պատմութենէն Պապայ Աղէքսանդրացուց: Ողջ լեր ի տէր» (թերթ 364ա):

<sup>1</sup> Saint-Martin, Mémoires, II, էջ 304—305.

<sup>2</sup> Проф. К. Пагканов, Армянская география VII в., стр. IV—V.

<sup>3</sup> Պրոֆ. Հ Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, էջ 23:

Արանից մասամբ տարբերվում է թիվ 582 խմբի ձեռագրի «Աշխարհացոյց»-ի վերջաբանը. «Այս քեզ յինէն ընծա(յ) գրաւորական՝ վերծանեալ ի Պորփիւրի ներգործութենէն և գեղգեղեալ ի Պտողմէական գրամարտիկոս տառիցն, և ի բազմավէպ պատմութենէն Պապա(յ) Աղեքսանդրացիո(յ), զոչ լեր» (թիւթ 183ա-բ)։ Վերջը ձեռագիր «Աշխարհացոյց»-ների այս վերջաբանը վերջանում է վնչ թև «ոչ լեր» բառերով, այլ «ոչ լեր, իմաստուն» քառերով (տես ձեռագիր թիվ 5613 թ., 299բ)։

«Աշխարհացոյց»-ի այս վերջաբանից առաջին համառոտված որինակը հայանի յե յեղել Ղ. Ալիշանին, նա այդ մասին ակնարկում է իր «Այբարատ» աշխատութեան մեջ<sup>1</sup>։ Ակադ. Հ Մանուկյանն այդ տեղեկութիւնը համարում է հետաքրքիր, սակայն դատում է, վոր դա «... կարոտ և զևս գրական՝ ու ավելի պարզ ազայցոյցները»։ Այժմ ՀԽՍՀ Պետ. մատենադարանի ձեռագրերից բերված մատենագրական այս կոնկրետ տեղեկութիւնն այլևս, կարծում ենք, կասկած չի թողնում հեղինակի հիմնական աղբյուրների նկատմամբ։ «Աշխարհացոյց»-ի ընծայական այս վերջաբանից շատ պարզ նկատում է, վոր «Աշխարհացոյց»-ի աղբյուրները, հիմնականում, յերեք են հանդիսացել՝ Պորփիւրի ներածութիւնը, Պապոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ը և Պտողմէոսի «Տիեզերագրութիւն»-ը։ Այսպիսով՝ Պտողմէոսից ուղղակի հարցը, կարծում ենք, լուծվում է վերջնականապես։

Պարզվում է նաև, վոր բանասիրութեան կողմից նշված մյուս բոլոր աղբյուրները՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից ուղղագործվել են միջանկյալ ձևով—նա չի հիշատակում այդ մասին իր հիմնական աղբյուրների շարքում։

Ընծայական այս վերջաբանը, սակայն, վկայում է նաև մի այլ տխուր փաստի մասին—«Աշխարհացոյց»-ի տեքստի անդամահատման մասին։ Ընծայական այս վերջաբանից, ինչպես տեսնում ենք, ուղղագործված հիմնական աղբյուրներից առաջին տեղը տրվում է Պորփիւրի ներածութեանը։ «Աշխարհացոյց»-ի տեքստի ուշադիր քննութիւնից պարզվում է, վոր Պորփիւրի ներածութիւնից, վորը հավանական է տիեզերագիտական բո-

վանդակութիւն և ունեցել, գրեթե վոչինչ չկա։ Հարց և առջ գալիս, ապա ինչո՞ւ յե «Աշխարհացոյց»-ի հայ հեղինակը Պորփիւրի անունը հիշում վորպես հիմնական աղբյուր, միթե՞ սա թյուրիմացութիւն է։ Կարծում ենք, վոր վնչ։ Ամբողջ խնդիրն այն է, վոր «Աշխարհացոյց»-ի սկզբից անդամահատվել, անջատվել և Շիրակացու տիեզերագիտական բովանդակութիւն ունեցող ինչ վոր մի աշխատութիւն։

Հասել և արդյոք մեզ «Աշխարհացոյց»-ին նախորդող տիեզերագիտական բովանդակութիւն ունեցող այդ մասը և Շիրակացու «Յաղագս երկնային շարժմանց» աշխատութիւնը վորևէ կապ չունի նրա հետ,—դժվար է ասել։ Առայժմ մի բան միայն համոզված կարելի յե պնդել, վոր «Աշխարհացոյց»-ին նախորդող տիեզերագրական բովանդակութիւն ունեցող տեքստն անդամահատվել է։

ՎՈՏՈՐԱԿԻ ՅԵՎ «С» ՏԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ  
«ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆՆ ԅԵՎ ԿԵՐՊԻՑ  
ՀԱՐՅՄԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՄԻՋԵՎ

«Աշխարհացոյց»-ի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ կիս մի ուրիշ ավելի կարևոր փաստ, վորի վրա դեռ իր ժամանակին կանգ և առել Գալուստ Տեր-Մկրտչյանը—դա մի համարիչից ավելի ունեցող կոտորակների նման ձևով գործածութիւնն է Շիրակացու «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» աշխատութեան և «Աշխարհացոյց»-ի միջև։

«Աշխարհացոյց»-ի առաջաբանում, ինչպես հայանի յե, կա այսպիսի մի հատված «Բայց օղաչափութեամբ է մասն հինգ հարիւր ասպարէզ... չորեքուսի, որպէսզի լինել մասինն եւթանասուն և մի մղոն, չորք եւթն է քսան եւութ» (Վեհես. հրատ., էջ 588)։ Պրոֆ. Ք. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ի սուսերին թարգմանութեան մեջ, այդ տեղում կանգ է առել և խոստովանվում է, վոր իր համար այդ հատվածը պարզ չէր։ Նա այդ հատվածը թարգմանում է յենթադրաբար հետևյալ ձևով. «Так что в градусе заключается 71 миля; (а четыре стороны квадратной мили) равняются 28 аспарезам, ибо 4 раза 7 составляет 28» («Այնպես վոր մասը պարունակում է 71 մղոն,

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Այբարատ, էջ 412:

<sup>2</sup> Հ. Մանուկյան, Պորեկացու առեղծվածի լուծումը, էջ 89:

(իսկ քառակուսի չորս կողմը հավասարվում է 28 ասպարեզի, վորովհետև չորս անգամ 7-ը հավասար է 28-ին): Ռուսերեն թարգմանածը, ինչպես տեսնում ենք, խիստ բնաձևիկ է:

«Աշխարհացոյց»-ի այդ անհասկանալի մասի աեղծվածը հաջողվել է լուծել Գալուստ Տեր-Մկրտչյանին: Գաղտնիքը կայացել է նրանում, վոր 71-ից հետո բերված թվերը մեկից ավելի համարիչ ունեցող կատարակ է, վորի նմանը մեր հին մատենագրերից գործ է ածել միայն Շիրակացին իր «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» — աշխատութեան մեջ: «Աշխարհացոյց»-ի տեքստում յեղած այդ հատվածը Գ. Տ. Մկրտչյանի ուղղումից հետո թարգմանութեանը կարգացվում է հետևյալ ձևով... Մասը հինգ հարյուր ասպարեզ է... քառակուսին հավասար է 71 ամբողջ  $\frac{1}{4} + \frac{1}{7} + \frac{1}{28}$  մղոնի» (= 71  $\frac{3}{7}$ ): Մենք գիտենք, վոր մղոնը հավասար է 7 ասպարեզի, ուրեմն  $71 \frac{3}{7} = 500$  ասպարեզի: Նման ձևով Շիրակացին կատարակ է գործածել իր «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցմանն» աշխատութեան մեջ (որինակ 21-րորդ հարցը տասը կարաս գինու չափի մասին): Մեկից ավելի համարիչ ունեցող կատարակների նման ձևով գործածելը «Աշխարհացոյց»-ում և Շիրակացու մյուս աշխատութեան մեջ, սրարդ է, վոր պատահական չէ և կարևոր փաստերից մեկն է հեղինակի նուշնութեան:

Գալուստ Տեր-Մկրտչյանը Շիրակացու «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցմանն» աշխատութեան և «Աշխարհացոյց»-ի տեքստում մատնացուցց է արել այդ յերկու աշխատութեանների հեղինակի նուշնութեանն ապացուցող մի այլ փաստ՝ Ը-ի գործածութեանն կեսի փոխարեն:

Ը նշանը՝ կեսի նշանակութեամբ գործածվելու այդ փաստը Գ. Տ. Մկրտչյանը մատնացուցց է արել Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի հետևյալ հատվածում «... սկսանիմք պատմել... ի Տալրէն որ կոչի Յևոսն, այսինքն մեծ եւ հրաշալի. որ ծայրն ի ներքս գայ ի յովկիանոս, առաւել քան գայլ երկիր մատունս երիս, որ լինի ասպարէզք հազար հինգ հարիւր յիսուն...» (եջ 13—14): Սուքրյանը սխալ հասկանալով տեքստի այդ հատվածը, անհրաժեշտ է համարել տալ հետևյալ ծանոթութեանը: «Յորինակին կայ սո երիս բառի՝ ձև մի իբրև Ը, որ թուի նշանակել զտասներորդ մասին, այսինքն գաստիճանի. զի զմասն ասաց 500

ասպարէզ լինել, և երևք մատունք լինին 1500. իսկ աստ աւելի կայ է 50 եւ, որ է  $\frac{1}{10}$  մասին»: Գալուստ Տ. Մկրտչյանն իր աշխատութեան մեջ, համոզեցուցիչ ձևով ցուցց է ավել, վոր Ը-ն հավասար է վնչ թիւ  $\frac{1}{10}$ -ի, այլ կեսի ( $\frac{1}{2}$ ): Յեղ նա վերև բերված հատվածում գրչական մի այլ սխալ (հինգ հարյուրը — յոթ հարյուրով) ուղղելուց հետո, այդ տեքստը կարգացվում է այսպես... Սկսանիմք պատմել... ի ծայրէն որ կոչի Յևոսն, որ ծայրն ի ներքս գայ ի յովկիանոս, առաւել քան գայլ երկիր մատունս երիս Ը (կես), որ լինի ասպարէզք հազար եւթն հարիւր յիսուն»: Մեզ հայանի յե, վոր աստիճանը հավասար է 500 ասպարեզի, ուրեմն  $3 \frac{1}{2}$  աստիճանը հավասար կլինի 1750 ասպարեզի, վորը և համապատասխանում է Շիրակացու արած հաշիվներին: ՀԱՍԷ մատենադարանի հնագույն «Աշխարհացոյց»-ների և Շիրակացու այլ աշխատութեանների ուսումնասիրութեանը լիովին հաստատում է Գ. Տ. Մկրտչյանի հայտնած կարծիքը՝ Ը-ի նկատմամբ:

Կեսը՝ Ը տառով նշանակութեամբ գործածված փաստեր են հանդիպում մեզ Շիրակացու այլ աշխատութեաններում: Այսպես, ՀԱՍԷ պետ. մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի առաջաբանում «երեքտասան և կես»-ը գրված է «Ը»-ով (= ԹԳԸ) («Քանզի յեւթնէ նահանգացն... զերկրորդն (առեալ է) ընդ Սիւնիս՝ ժամս յունելով ԹԳԸ») (աես թերթ 165ր):

Շիրակացու «Աստեղարաշխական երկրաչափութեան» մեջ, վորի վրա մենք կանգ ենք աւել, մի քանի տեղ բերված է Ը-ն կեսի նշանակութեամբ. «ի սրակ երկրէ մինչև յորում բնակեմքս, ասպարէզք երկու բիւր ԸԳն» (թ. 384ա):

Շիրակացու «Սախա բացահայտութեան թուոց» աշխատութեան մեջ մենք դարձյալ հանդիպում ենք Ը-ի՝ կեսի նշանակութեամբ գործածվելու փաստի. «Այլ մեք անցցուք... սքանչելի խորհուրդ, որ ունի զծնունդ ի կրկնակին քառից կատարեալ թուոյ, զի տացէ առւեր առաջին և Ը երեակ լեալ...»:

Պատահական էն արդյոք «Աշխարհացոյց»-ի և Շիրակացու մյուս աշխատութեանների մեջ բերված այս նմանութեանները: Կարծում ենք, վոր վոչ: Պատահական դուռն համարվեր, յի՞թե այլ փաստեր չգային հաստատելու «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացուն լինելը: Այդ նմանութեանները ցուցց են տալիս, վոր «Աշ-



խարհացոյց»-ի հեղինակն ուրիշ վնչ վոք չի, քան ինքը, VII դարի նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացին:

ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
«ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-ՈՒՄ ՅԵՎ, ՇԻՐԱԿԱՅՈՒ ԽՆԴՐԱԳՐՈՒՄ

«Աշխարհացոյց»-ի հեղինակը Շիրակացին հանդիսանալու վերաբերյալ հետաքրքիր փաստ է հանդիսանում Շիրակի և Արշարունյաց Պատրիկ Ներսէ՛հ Կամսարականի հիշվելու փաստը Սուրբ Երանայի հրատ. «Աշխարհացոյց»-ի տեքստում և Շիրակացու ննդրագրում: Նմանութեան այս փաստը հիշել և Սուրբ Երանայի Ֆրանսերեն լեզվով թարգմանած «Աշխարհացոյց»-ի առաջարանում (տե՛ս «Géographie de Moïse de Corène, Venise», 1881, էջ VIII): Նա, սակայն, այդ փաստը նշել և վնչ թե «Աշխարհացոյց»-ը Շիրակացու աշխատութեանը համարելու նպատակով, այլ ասպարեզելու, վոր Մորենայու «Աշխարհացոյց»-ը խմբագրվել և Շիրակացու կողմից: «Աշխարհացոյց»-ի և Շիրակացու մեջ յեղած կապը պայց տալու համար մենք անհրաժեշտ ենք համարում զուգահեռ ձևով բերել ներսես Կամսարականի անվան հիշատակութեան փաստը:

«Աշխարհացոյց»

«... և մայրաքաղաք (Աֆրիկայում) Կարթեյոն, և Տրոպոլիս՝ որ է երեք-քաղաք, Գիսվրի, Կալանիա, Եւսի. թէպէտ և Երեք այլ շինեցին Տիտոս, Իդիսիա, Պանդիկա, որոց իշխանացաւ իմաստունն Ներսէ՛հ Կամսարական, պատրիկն Շիրակայ և Եւ Արշարունայ աւերն:»

(Տ., էջ 18)

Յերկու դեպքում էլ, պարզ և, հիշատակված և միևնույն անձնավորութեանը՝ իր իշխանական, տիրակալական իրավունքներով:

Շիրակացու Յաղագս կարգման և լուծման

«Հարցումն ի ներսէ՛հ Կամսարականի Շիրակայ և Արշարունայ տեսան ըուն կանգնէք առ ստորոտով լերինն, որում Արախն կոչէն...»

Շիրակացի, Յաղագս հարցման և լուծման (տե՛ս «Գիտ. աշխ.» Յերևանի Պետ. համալսարանի հատ. XI, էջ 271)

ՉԱՓԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՅՈՒ «ՅԱՂԱԳՍ ԸՆԹԱՅԻՅ ԱՐԵՎԱԿԱՆ»-Ի ՅԵՎ, «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

«Աշխարհացոյց»-ի Շիրակացուն պատկանելու վերաբերյալ վերջապես, մենք ունենք մի այլ փաստ, վորի վրա, վորքան մեզ հայտնի է, ուշադրութեան չեն դարձրել «Աշխարհացոյց»-ն ուսումնասիրող բանասերներից վնչ մեկը—«Աշխարհացոյց»-ի առաջարանում և Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական»-ի մեջ գործ ածված չափերի նմանութեանները: Ավելի ակնբախ դարձնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում այդ տեքստերը բերել զուգահեռաբար:

«Ասպարէզն է ըստ օղաշափութեան քայլ ձէ, և քայլն Չ ոտն, և ոտն ժՉ մասն եւ մղոնն է ասպարէզ: Իսկ ըստ Պարսից ասպարիսին ձնԳ քայլ, որպէս լինել զետնաշափութեամբ մղոնն ի քայլ եւ խրատըն Գ մղոն. ըայց օղաշափութեամբ երկրաշափութիւն մասն ե՛՛ն ասպարէզ ի լայն և յերկայն՝ չորեքուսի միաշափ:»

(«Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց ըստ կրկին օրինակաց Շիրակացոյն») (տե՛ս «Անանիայի Շիրակունոյ Մնացորդ բանից», էջ 32—33):

«Եւ է ասպարէզն ըստ օղաշափութեան քայլ հարիւր, և քայլն վեց ոտն, և ոտն վեցուստան մասն. մղոնն ասպարէզ մի իսկ ասպարիզաց ասպարէզն է հարիւր քառասուն և երեք քայլ, և մղոնն է և թն ասպարէզ, որպէս զի լինել զետնաշափութեամբ մղոնն հազար քայլ, և փարսան երեք մղոն ի քայլ օղաշափութեամբ է մասն հինգ հարիւր ասպարէզ ի լայնն երկրաշափութեան, և նույնչափ երկայն չորեքուսի, որպէս զի լինել մասինն և թանասուն և մի մղոն, չորք և թն է քանն և թն:»

(«Աշխարհացոյց»-ի վերնտիկյան հրատարակութեան, էջ 588)

Յեթի մենք բերված այս տեքստերում ուղղելու լինենք յեղած գրչական վորոշ սխալներ, ապա մենք իրավունք կունենանք վնչ թե նմանութեան, այլ նույնութեան մասին խոսել: Այստեղ յերկարութեան չափերը նույն հետեղականութեամբ շարադրված են յերկու տեքստում էլ: Այս նմանութեանը, ինչ խոսք, վոր դարձյալ վկայում է յերկու աշխատութեան հեղինակների նույնութեան մասին: Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ի առաջարանում խոսելով յերկրագնդի չափելու մասին, ըստ յերևույթին, անհրաժեշտ է գտել իրեն հայտնի չափերը կրկնել այստեղ ևս: Գուցե և Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական» աշխատութեանը

«Աշխարհացոյց»-ի հետ մի ձեռագրում գտնվելով, խառնվել են թերթերը, և հետագա գրելչներն արտագրել են յերկու տարրեր տեղում: Ինչպիսի ձևով էլ մտած լինի այս տեքստը «Աշխարհացոյց»-ի առաջարկում, այդ այնուամենայնիվ վկայում է մի փաստի մասին, վոր յերկու տեքստերի հեղինակներն էլ միևնույն անձնավորութիւնն են և այդ անձնավորութիւնը—Շիրակացին է:

«Աշխարհացոյց»-ի և Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատութեան մեջ նկատվում են բազմաթիվ բառերի և հատվածների նմանութիւններ: Մենք անհրաժեշտ ենք համարում բերել այդ նմանութիւններից մի քանի որինակներ:

«Աշխարհացոյց»

«... Աստուծոյ հրամանն բաւական է ունել զեղեր ջրոյն անծանօթ ծովո՞ւ՝ ոչ պիտոյացեալ երկրի, եւ զեղերս սպասուածի անծանօթ երկրի...»

S., էջ 9

«... զի երկրքին դասնին յաստուածային գիրս, եղարար եւ յոգնարար ասացեալ, թողովեացին ջուրքդ ի ժողով մի, եւ ի ժողովս իւրեանց, եւ թէ Ձժողովս ջուրցն կոչեաց ծովս:»

S., էջ 8

Նմանութիւնները, կարծում ենք, անվիճելի յեն:

Այսպիսով, «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու ժամանակ գրվելու, լեզվական նմանութիւնների, աստղարաշխական ու յերկրաչափական բարձր պատրաստականութեան, մատենատիպական յուրահատուկ նշանների գործածութեան և մի շարք այլ փաստեր վկայում են, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը Անանիա Շիրակացին է: Այժմ արդեն պարզվում է, թե վորքան իրավացի է յեղել պրոֆ. Բ. Պատկանյանը, վորը կուհել է այդ մասին առաջին անգամ:

Հարց է առաջ գալիս—ինչպե՞ս է, վոր Շիրակացու այս կարեւոր աշխատութեան մասին հիշատակութիւնն չի պահվել ժամանակագրական տեսակետից ավելի մտ կանոնած հայկական մատենագրերից վորեւ մեկի, հատկապես X—XI դարերում ազբող մատենագրերի մոտ, վորոնք պիտի վոր ծանօթ լինեյին «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու աշխատութեան լինելու փաստի հետ: Հին հայկական մատենագրութեան ուշագիրը բնութիւնից պարզվում է, վոր նման հիշատակութիւն մեր մատենագրութեան մեջ պահվել է, միայն թե «Աշխարհացոյց»-ի նախնական վերնագիրը մեր բանասիրութեանը ծանօթ չլինելու հանգամանքով է, վոր ճիշտ չի հասկացվել յեղած այդ հիշատակութիւնը:

X—XI դարի հայկական մատենագրերից՝ Շիրակացու՝ տարրեր պիտուեթիւնների ասպարեղում գրած աշխատութիւնները մենք թվարկած ու արժեքավորված ենք զանում XI դարի նշանավոր հայ գիտնական Գրիգոր Մաղիսարոսի մոտ: Նա իր մի նամակում՝ ուղղված Պետրոս Գեառաբաճ կաթողիկոսին, հետեյալն է գրում. «Փոխան Յիսուսի, համարձակիմք... (հայցել) զգիրս Անանիայի Շիրակացոյ, որ բազում աշխատութեամբ և յածաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յորնարեղուն մատենից յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք այլ բոլոր էակացն խոկմունս... յորում մթերեալ են տոգորք աստուածային, և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն՝ որք են ի տարրեշ քանակէ տարակացեալք. իսկ երկրաչափութեանն (ընդգծումս մերն է—Ա. Ա.) և աստղարաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զինի աշտոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումս հետտրական, թէպէտ և մասնաւոր գիտնականս զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի այլք ի բազմավէտ մատենագրից Քաղզէացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայնոսիկ հաւաքեալն մատեանս, մակացու եղեալ իմաստասիրութեան...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Գրիգոր Մաղիսարոսի թղթերը, հրատ. Կ. Կոստանյանցի, Ալեքսանդրպոլ, 1910, էջ 8:

Այստեղ ուշադրութեան արժանի յի Շիրակացու անունով «Երկրաշափութիւն» աշխատութեան հիշատակման փաստը: Մագիստրոսի խոսքն այստեղ, անկասկած, յերկրաշափական ինչ վոր փոքրիկ հատվածի մասին չի, այլ կարևոր մի աշխատութեան: Բայց Շիրակացու անունով մեզ հասած այդպիսի մի աշխատութեան հայտնի չի: Մեր բանասիրութեանն այդ հարցի վրայով լուսութեամբ և անցել, հավանական է, յենթագրելով՝ թե նա կորած մի աշխատութեան է: Մակայն մենք արդեն մեր աշխատութեան սկզբներում գուցե ենք սովել, վոր «Աշխարհացոյց»-ի առաջին զլիի վերնագիրը յեղել և «Երկրաշափ»: Պատահական զուգադիպութեան է արդո՞ք սա: Կարծում ենք վոր՝ վո՞չ: Իրիզոր Մագիստրոսի Շիրակացու անունով հիշած «Երկրաշափ»-ը — դա հենց «Աշխարհացոյց»-ն է, վորի վերնագիրը յեղել և «Երկրաշափ», վորպիսի վերնագրեր պահել են մեր մատենադարանի ընտիր գրչութեան ունեցող յերկու ձեռագիր «Աշխարհացոյց»-ները, վորոնցից մեկը գրված է Լոռիի Ագուբ գյուղում, իսկ մյուսը — Մոկաց յերկրի Սուրս գյուղում (անս թիվ 1883 (1663), թերթ 145ա և թիվ 3160 (1035), էջ 596) ձեռագրերը:

### ՅԵՁՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորենացուն վերագրվող տղագիր և ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրութեանից պարզվում է, վոր մեզ հասած հայտնի «Աշխարհացոյց»-ի ընդորինակութեաններից համեմատաբար լավագույն և հնագույն տեքստեր են հանդիսանում ՀԽՍՀ Պետ. մատենադարանի թիվ 3160 և 582 գրչագրերը: Նրանցից առաջինն ընդորինակել է Կարապետ գրիչը, իսկ յերկրորդը — Վարդան գրիչը:

2. Կարապետ և Վարդան գրիչների որինակներից յերևում է, վոր «Աշխարհացոյց»-ի տեքստերը խմբագրվել են ուշ շրջանի ընդորինակողների կողմից: Նրանց մեջ մտել են մեծ քանակութեամբ ընդմիջարկութեաններ: «Աշխարհացոյց»-ի վորոշ հատվածներ յենթարկվել են հաղավման ու աղավաղման: Այդ թերութեաններից, ինչպես պարզվում է, զուրկ չի նաև Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ընդարձակ տեքստը:

Կարապետ և Վարդան գրիչների «Աշխարհացոյց»-ի համե-

մատութեան հիման վրա հնարավոր է այժմ ուղղել Վենետիկյան հրատարակութեան «Աշխարհացոյց»-ի մեջ տեղ գտած մի շարք սխալներ և աղավաղումներ:

3. «Աշխարհացոյց»-ը սխալմամբ է Խորենացուն վերագրվել ու նրա անունը «Աշխարհացոյց»-ի վերնագրում հիշատակվել ուշ շրջանի ընդորինակող գրիչների կողմից: ՀԽՍՀ Պետ. մատենադարանի 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ներից և վոշ մեկի վերնագրում չի հիշատակվում Խորենացու անունը: Բացառութեան է կազմում XV դարում ընդորինակված Պետրոս գրչի որինակը, վորի վերնագրում սակայն, ինչպես պարզվում է այդ նույն վերնագրի ուշադիր քննութեանից, Խորենացու անունը ավելացված է XVIII դարի գրչութեամբ:

4. Փրանսիացի գիտնական Սեն-Մարտենի հայտնած այն կարծիքը, վոր գոյութեան է ունեցել յերկու Խորենացի, վորոնցից առաջինը ճիշտ Խորենացին է (V դարի), իսկ յերկրորդը — սուտ (IX—X դարի) չի հաստատվում մատենագրական նոր տվյալներով:

5. «Աշխարհացոյց»-ի, ինչպես և նրա ոգտագործած աղբյուրների վերնագրերի ուսումնասիրութեանից պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի հավանական վերնագիրն է հանդիսացել «Երկրաշափ»-ը: Այս վերնագիրը պահպանել են Լոռիի Ագուբ գյուղում և Մոկաց յերկրի Սուրս գյուղում ընդորինակված «Աշխարհացոյց»-ները:

6. Մատենադարանի հնագույն ձեռագրերի ուսումնասիրութեանից յերևում է, վոր Սեն-Մարտենի «Աշխարհացոյց»-ը X դար հասցնելու համար բերված բոլոր կովանները («Յօզու ոռեսաց», «Շաղախ», «Ղոխմ» և այլն), ինչպես ճիշտ նշվել է արդեն բանասիրութեան մեջ, ընդմիջարկութեան են հանդիսացել: XVII դարից առաջ ընդորինակված ՀԽՍՀ Պետ. մատենադարանի «Աշխարհացոյց»-ներից վոշ մեկի տեքստում մենք չենք հանդիպում Սեն-Մարտենի մոտ կովան հանդիսացող աշխարհագրական այս անունները:

7. Մարկվարտի յենթադրութեանը, վոր Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում Խորասանի շրջանների շարքում հիշված «Գճակստան»-ը դա աղավաղված ձեռն և «Գճակ» և «Ասան» շրջանների և այդ անունները կարող էլին հայտնի

դառնալ և հիշատակվել այդ նույն տերիտորիայում 737 թ. տեղի ունեցած թուրք-արաբական մեծ կռվից հետո միայն—վոչնչով չի հիմնավորված: Յես առաջարկում եմ աղավաղված այդ անուններն ուղղել «Ման», «Շանջակտան» ձևով:

8. «Աշխարհացոյց»-ի հեղինակին IX դար շարժող բանասերներին բերած ապացույցները չեն հաստատվում գրչագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրութեամբ: Այսպես, պարզվում է, վոր Գալիլայում ֆրանկները «հօօր» չեն հիշատակված, Բասրա և Ակոզա քաղաքների հիշատակութեանը այն ձևով, ինչ ձևով մեզ հանդիպում են ապագիր «Աշխարհացոյց»-ի տեքստերում—ընդմիջարկութեան է, «Աշխարհացոյց»-ի տեքստում արաբերեն տերմիններ չկան և այլն:

9. «Աշխարհացոյց»-ի տեքստի ուշադիր քննութեանից յերևում է, վոր «Աշխարհացոյց»-ը VII դարում ապրող հեղինակի գործ է: Նա գրված է Հայաստանն արաբական թալիֆաթի կողմից վերջնականապես զեռ չնվաճված ժամանակ:

10. Ակադ. Հ. Մանանդյանի այն յենթադրութեանը, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը Սորենացին է, վորովհետև նրան է հասուկ ընտրող այնպիսի դարձվածքների գործածութեանը, վորոնք հանդիպում են միայն «Պատմութիւն հայոց»-ում և «Աշխարհացոյց»-ում, չի հիմնավորվում: Ակադ. Հ. Մանանդյանի մեջ բերված «բնորոշ» այդ դարձվածքները («գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ճշմարիտ է», «ասեմ», «գրեմ», «սկսայց»), գործ են ածվել նաև Շիրակացու աշխատութեաններում:

11. Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի մեջ աշխարհագրական անունների և հայացքների տարբերութեաններ չկան: Պարզվում է, վոր Շիրակացին ևս ծանոթ է յերկրագունդը կլոր լինելու տեսութեան հետ, հասարակած ասելով նա հասկացել է յերկնային ծիրը, ծովի և ծովակի շփութեանը գրչութեան աղավաղում պիտի լինի, և այլն:

12. VII դարում կազմած Անանուն հեղինակի ժամանակագրութեանից (վորը պահվել է ՀՊՄՀ Պետ. մատենադարանի 971 թվի ընդորինակած գրչագրում) և Շիրակացու մինչև այժմ ամբողջութեամբ զեռ չտպագրված «Տիեզերագիտութեան» մի համվածից պարզ յերևում է, վոր Սորենացին Շիրակացուց առաջ

ապրած հեղինակ է, ուստի և չեր կարող գրած լինել ներկա խմբագրութեամբ մեզ հասած «Աշխարհացոյց»-ը:

13. Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքը՝ «Մղոնաչափ»-ն «Աշխարհացոյց»-ի հեղինակի գործ լինելու և «Աշխարհացոյց»-ի շարունակութեան հանդիսանալու հարցում, հաստատվում է ՀՊՄՀ Պետ. մատենադարանի «Աշխարհացոյց»-ների հնագույն գրչագրերում պահված մատենագրական փաստացի հիշատակութեամբ: Վորոշ «Աշխարհացոյց»-ների վերջում պահվել է մի փոքրիկ հիշատակութեան, ուր հեղինակը պարզ հայտնում է, վոր ինքը վերջացրել է «Աշխարհացոյց»-ի շարադրութեանը և այժմ սկսում է համատեղել առանձին քաղաքների չափերը մղոններով:

14. «Աշխարհացոյց»-ը «Մղոնաչափ»-ով չի վերջացել: Նա շարունակվել է աստղաբաշխական բովանդակութեան ունեցող մի այլ նյութով, վորի վերնագիրն է «Աստղաբաշխական երկրաչափութիւն»: «Աշխարհացոյց»-ի շարունակութեանը կազմող աստղաբաշխական այդ նյութը «Աշխարհացոյց»-ի գլուխներից մեկն է հանդիսացել, բայց հետագայում ընդորինակողների կողմից անդամահատվել է: Աստղաբաշխական այդ նյութը, բարբախտաբար, պահպանվել է հնագույն «Աշխարհացոյց»-ներից մի քանիսի շարունակութեան մեջ: Այդ նյութը, վորքան մեզ հայտնի է, մինչև այժմ զեռ չի հրատարակված:

Վորոշ ձեռագրերում աստղաբաշխական այդ նյութը պատահում է «Աշխարհացոյց»-ից անջատված վիճակում: ՀՊՄՀ Պետ. մատենադարանում կան աստղաբաշխական այդ նյութը պարունակող գրչագրեր, ուր վերնագրում, վորպես հեղինակ, հիշատակված է Անանիա Շիրակացին:

15. «Աշխարհացոյց»-ը վերջացել է հեղինակի ընծայական վերջաբանով, վորից յերևում է, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր աշխատութեանը նվիրում է վոմն իմաստասերի:

16. Նույն հիշատակարանում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հիշում է իր ոգտագործած աղբյուրները: Պարզվում է, վոր «Աշխարհացոյց»-ի հիմնական աղբյուրներ են հանդիսացել՝ Պողոս մեոսի «Տիեզերագրութիւն»-ը, Պապոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւն»-ը և Պորփյուրի ներածութեանը: «Աշխարհացոյց»-ի հեղինակի Պողոս մեոսից անմիջապես ոգտվելու հարցը լուծվում է դրականապես:

17. «Աշխարհացոյց»-ի Շիրակացու ապրած ժամանակաշրջանում գրվելը, նրա Շիրակացու այլ աշխատութիւններին կից ձեռագրերում գտնվելու հանգամանքը, յերկրաչափական և աստղաբախշական նյութերի ծանոթ լինելու փաստը, կոտորակի գործածութիւնը, «Աշխարհացոյց»-ում Շիրակացու այլ աշխատութիւններից վորոշ հատվածների գործածութիւնը և մատենագրական մի շարք այլ փաստեր վկայում են, վոր «Աշխարհացոյց»-ի հեղինակը VII դարի հայ գիտնական Սնանիա Շիրակացին է:

18. «Աշխարհացոյց»-ը «երկրաչափ» վերնագրով հիշատակված և Գրիգոր Մագիստրոսի մոտ:

## К вопросу об авторстве древнеармянской географии, приписываемой Мовсесу Хоренаци

(Основные тезисы)

1. В Гос. библиотеке древних рукописей Арм. ССР (в Матенадаране) имеется 35 неизученных списков древнеармянской „Географии“, приписываемой Мовсесу Хоренаци. Среди них имеются древнейшие манускрипты, тексты которых значительно разнятся от опубликованных до сих пор текстов „Географии“ и помогают нам в деле определения ее автора. Из списков „Географии“, хранящихся в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР, наиболее ценными являются списки писца Вардана (см. рукопись Матенадарана № 582) и писца Карапета (см. рукопись Матенадарана № 1662).

2. Сличение текстов рукописей Гос. библиотеки с двумя опубликованными редакциями „Географии“, — с венецианским изданием сокращенного текста (см. *«Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու», Վենետիկ, 1865*) и с изданием Сукри пространного текста (см. „Géographie de Moïse de Corène d'après Ptolémée“, Venise, 1881) показывает, что первоначальный текст „Географии“ на протяжении веков подвергался значительным изменениям: в опубликованных текстах „Географии“ имеется много искажений, сокращений, вставок и интерполяций.

3. Пространный текст древнеармянской „Географии“ издания Сукри, как уже правильно отмечено некоторыми авторитетными учеными, не является идеально точным:

по сравнению с первоначальным оригиналом он сокращен и отредактирован.

4. Древнеармянскую „Географию“ ошибочно приписывали перу Хоренского, с упоминанием его имени в заглавиях текста. Изучение древнейших текстов рукописей Гос. библиотеки древних рукописей Арм. ССР показывает, что ни одна рукопись, переписанная до 1600 г., в заглавии не носила имени Хоренского. „Географию“ ошибочно стали приписывать перу Хоренского лишь в XVII веке, после чего она и стала известна, как его труд.

5. Мнение французского ученого Сен-Мартена о существовании двух Мовсесов, один из которых является достоверным, а другой мнимым, не подтверждается новыми данными по исследованию источников.

6. Приводимые Сен-Мартеном из опубликованного им текста „Географии“ выражения: „река Яуза“, „провинция Шадах“, „полуостров Крым“ и др. географические названия в доказательство принадлежности „Географии“ мнимому Мовсесу Хоренскому, являлись, как правильно отмечают проф. К. Патканов и акад. Я Манандян, интерполяциями, вставками позднейших переписчиков. В текстах древнейших рукописей Гос. библиотеки древних рукописей Арм. ССР указанные Сен-Мартеном предложения отсутствуют.

7. Предположение Маркварта, что название провинции „Гджакстан“, упоминаемое в тексте древнеармянской географии (в разделе географии Ирана), является искажением, и его предложение исправить его на „Гужак“ и „Асан“ (см. его „Eranschahr nach des Géographie Ps. Mowses Chorepaci“) не обосновывается текстами древнейших списков. Я предлагаю это название исправить на „Ман Шанджакстан“.

8. Все аргументы, приводимые исследователями в доказательство того, что автор „Географии“ жил в IX веке, не подтверждаются новыми материалами, обнаруженными в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР. Так, например, в первоначальном тексте в Галлии упоми-

наются не „могучие франки“ („Ֆրանկի հորս“), что дало повод некоторым ученым полагать, будто автор „Географии“ жил после Карла II-го, (768—814 г.), ибо франки на историческую арену выступили после этого, а „сильные буйволы“ („զովեղս հորս“), не „торговый город“ Басра („Ֆիրш աճինալից լաճանոք“), что дало повод некоторым исследователям передвинуть автора „Географии“ в более поздние века, ибо Басра была основана во второй половине 7-го века, а обильная плодами Басра и т. д.

9. Утверждение ак. Я. А. Манандяна, будто автором „Географии“ является Хоренский на том основании, что ему присуще употребление личных выражений, которые необычны и крайне редки у других древнеармянских писателей, не подтверждается. В сочинениях Ширакаци, в частности в его неопубликованных рукописях, недавно обнаруженных в Матенадаране, встречаются почти все эти выражения („я знаю“, „я не знаю“, „я полагаю“, „мне кажется“, „я одобряю“, „я говорю“ „я начну“ и т. д.).

10. Утверждение некоторых ученых, что географические выражения Ширакаци и составителя „Географии“ якобы не сходятся и потому они являются различными авторами,—не верно, ибо факты, приводимые в доказательство этого положения, ничем не обоснованы. Так, например, указывалось, что Анании Ширакскому, в противоположность автору „Географии“, земной шар не представлялся шарообразным, меж тем как в двух местах „Космографии“ Ширакского мы находим ясные указания на шарообразность земли (см. „Космографию“ Анании Ширакаци). Указывалось также, будто составитель „Географии“ солнце считает меньше земли, в то время как Ширакаци утверждает обратное, а из текста „Географии“ видно, что составитель „Географии“ о величине солнца говорит не от себя, а приводит точку зрения другого автора (см. „Арм. географию 7 в“). Ширакаци не путает также ни параллели с меридианом, ни маленького моря („ծովակ“) с обычным морем, что опять утверждают некоторые

исследователи. У Ширакаци и составителя „Географии“ нет также никакого различия в их географической терминологии.

11. Из пространного текста „Космографии“ Анании Ширакаци, обнаруженного не так давно в Гос. библиотеке древних рукописей Арм ССР, и из „Летописи анонимного автора VII в.“, сохранившейся в манускрипте списка 981 г., видно, что Ширакаци пользовался „Историей Армении“ Мовсеса Хоренаци. В „Космографии“ он использовал легенду о родоначальнике армян—Гайке, а в „Летописи“ он списывает из истории Хоренского целую страницу, упоминая в заглавии имя Мовсеса Хоренского. Так как „География“ написана во второй половине VII в., то она и не могла быть трудом Хоренского.

12. Текст „Об успении Богоматери и об ее изображении у Мовсеса Кертюха и католикоса Захария“, сохранившийся в древнеармянском манускрипте Иерусалимской библиотеки армянского патриаршества и послуживший аргументом у некоторых ученых для доказательства современности Хоренского с католикосом Захарием (855—875 гг.), не обосновывается древнейшей рукописью этого же текста, находящейся в Гос. библиотеке древних рукописей Арм. ССР. Текст этот, как оказывается, был составлен не Мовсесом и католикосом Захарием, как современниками, а неким компилятором в VIII в., причем этот компилятор, при составлении этого текста, у Хоренаци использовал его „Ответ на письмо Саака, («Պատասխանի թղթոյն Սահակոյ»)» которое опубликовано в сборнике сочинений Хоренского (см. «Մովսէսի Խորենացւոյ Մատենադրոշմի թղթեր»), а у Захария—его „религиозное сочинение“.


13. Текст „Географии“ не кончался „Интенарией“: в продолжении у него имелась другая глава астрономического содержания. Она сохранилась в некоторых древних рукописях „Географии“ Гос. библиотеки древних рукописей (№№ 582, 1717 и др.). Здесь Ширакаци определяет пространство, дальность земного шара от солнца, луны

и других планет. В некоторых манускриптах они встречаются нам в обособленном виде, но с упоминанием его автора—Анании Ширакского.

14. В конце текста „Географии“ Ананией было написано послесловие в виде приписки, где он перечислял использованные им источники. Это послесловие автора „Географии“ сохранилось в ряде рукописей Гос. библиотеки древних рукописей.

15. Из послесловия Анании Ширакского видно, что он пользовался в основном тремя источниками: „Космографией“ Птолемея, „Землемерием“ Папа Александрийского и „Предисловием“ («Ենթանութիւն») Порфирия. Спор о том, черпал ли составитель армянской „Географии“ сведения у Птолемея непосредственно, разрешается положительно.

16. „География“ под заглавием „Землемерие“, как труд Анании Ширакского, была известна армянскому ученому XI века Григорию Магистру.



Մասջաբան . . . . .	5
«Աշխարհացոյց»-ի ձեռագրերը . . . . .	9
Սուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի հնության հարցը . . . . .	20
«Աշխարհացոյց»-ի վերնագրի հարցը . . . . .	25
«Աշխարհացոյց»-ի տեքստում նկատվող աղավաղումները . . . . .	34
«Աշխարհացոյց»-ի գրելու ժամանակը . . . . .	48
«Աշխարհացոյց»-ի և Պորենացու «Պատմութիւն հայոց»-ի ընդդէմ դարձ- վածքները . . . . .	61
Շիրակացու և «Աշխարհացոյց»-ի հեղինակի միջև մատնացույց արված աշխարհագրական հասկացողութիւնների հակասության հարցը . . . . .	68
Փաստեր Պորենացու Շիրակացուց առաջ աղյւրած հեղինակ լինելու մասին Պորենացու և Ջաբարիա կաթողիկոսի ժամանակակից հեղինակներ չլինելու խնդիրը . . . . .	73
«Մզոնաչափը»-ն «Աշխարհացոյց»-ի շարունակութիւնն և . . . . .	85
Աստղաբաշխական յերկրաչափութիւնը . . . . .	91
«Աշխարհացոյց»-ի աղբյուրները . . . . .	98
Կոտորակի և «C» տառի դորժածութիւնը Շիրակացու «Յաղագս կա- տարման համարողության և կերպից հարցման» աշխատության և «Աշխարհացոյց»-ի միջև . . . . .	101
Ներսէս Կամարականի հիշատակութիւնը «Աշխարհացոյց»-ում և Շի- րակացու խնդրագրքում . . . . .	105
Ջախերի նմանութիւնը Շիրակացու «Յաղագս ընթացից արեղական»-ի և «Աշխարհացոյց»-ի տեքստերում . . . . .	108
«Աշխարհացոյց»-ի հեղինակի հիշատակության փաստը Գրիգոր Մա- գիստրոսի մաս . . . . .	109
Յեղրակացութիւններ . . . . .	111
Резюме на русск. яз. . . . .	112
	118



Պատ. խմբագիր՝ Հ. Հ ա Ր ու թ յ ու շ յ ա ն  
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ ա ն ու կ յ ա ն  
Սրբագրիչ՝ Ս. Թ ա յ ի Ր յ ա ն  
Պատ. սրբագրիչ՝ Ս. Շ ա չ Ր ա զ յ ա ն

USDA 1971

Հանձնված է արտագրության 13/VII 1940 թ.

Ստորագրված է տպագրության 26/XI 1940 թ.

ՎՖ 2334, պատվ. № 172, տիրած 1000, հրատ. № 66. Գինը 7 ա. 50 կ.

Արժեքների հրատարակչության տպարան, Լենինի փ. № 67.